ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼ – ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևան 2007

Զեկույցը պատրաստվել և հրատարակվել է ԵԱՀԿ Մարդու իրավունքների և ժողովրդավարական հաստատությունների գրասենյակի և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ:

*Հաշվետվությունը պատրաստեցին՝*

Անի Ներսիսյան
Արարատ Նազանյան
Արսեն Ֆիդանյան
Գրիգոր Առուստամյան
Էդմոն Մարուքյան, խմբի ղեկավար
Միքայել Բաղդասարյան, ղեկավարի տեղակալ
Սերգեյ Գրիգորյան
Սուրեն Իսկանդարյան
Վալերի Նուրոյան

www.policemonitor.am

# Նախաբան

«Ձերբակալված անձին արգելանքի տակ պահելն իրականացվում է օրինականության, ձերբակալված անձանց՝ օրենքի առաջ հավասարության, մարդասիրության, անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելու սկզբունքների հիման վրա...», սակայն «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի նշված մեջբերման կիրառման հավաստիության պարզումն ու օրենքի դրույթների կիրարկումը հնարավոր է միայն հասարակական վերահսկողության արդյունքում: «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածով սահմանվում է, որ ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրերի գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողությունն իրականացվում է լիազորված համապատասխան մարմնի ղեկավարի կազմավորած հասարակական դիտորդների խմբի միջոցով:

ՀՀ ոստիկանության պետի 2005 թվականի հունվարի 14-ի Ա1-Ն հրամանով հաստատվեց ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգը (այսուհետ՝ կարգ): Նույն կարգի համաձայն ՀՀ ոստիկանության պետի 2006 թվականի մարտի 10-ի 368 հրամանով հաստատվեց ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի (այսուհետ՝ խումբ) կազմը և խմբի անդամներին ՀՀ ոստիկանության կողմից տրվեցին անդամությունը հաստատող վկայականներ: Խմբի անդամներն ընդգրկվում են 3 տարի ժամկետով: Խմբի կազմում ներգրավված են մի շարք հասարակական, այդ թվում իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչներ:

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խումբը ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում պահվող անձանց իրավունքների և ազատությունների պահպանման խնդիրներով զբաղվող վերահսկող մարմին է: Կարգի համաձայն՝ խմբի անդամներն իրավասու են անարգել այցելել ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրեր (ՁՊՎ-ներ), հանդիպել ՁՊՎ-ներում պահվող անձանց, ծանոթանալ ՁՊՎ-ների գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերին, ՁՊՎ-ներում պահվող անձի համաձայնությամբ՝ նրա անձնական գործին և գրագրությանը, բացառությամբ պետական և ծառայողական գաղտնիք հանդիսացող փաստաթղթերի:

Ազատազրկման վայրերում մոնիտորինգ անցկացնելու հմտություններին տիրապետելու նպատակով 2006 թվականի ապրիլ և օգոստոս ամիսներին խմբի համար ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից կազմակերպվել են հատուկ դասընթացներ, ԵԱՀԿ Մարդու իրավունքների և ժողովրդավարական հաստատությունների գրասենյակի և Միջազգային բանտային բարեփոխում կազմակերպության աջակցությամբ:

Խումբը իր վերահսկողական այցելությունները ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներ սկսել է 2006թվականի ապրիլ ամսից: Կարգի համաձայն լիարժեք վերահսկողություն իրականցնելու նպատակով՝ խմբի անդամները տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ պետք է այցելեն Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգի բոլոր ՁՊՎ-ների ոչ պակաս, քան կեսը: Սակայն խումբն իր գործունեության կարճ ժամանակահատվածում (2006 թ. ապրիլից մինչև հոկտեմբեր ամիսները) հասցրել է վերահսկողական պլանային և ոչ պլանային պարբերական այցելություններ իրականացնել Հայաստանի հանրապետության տարածքում գործող ՀՀ ոստիկանության համակարգի բոլոր ՁՊՎ-ներ: Ոչ պլանային արագ արձագանքման այցելությունները կատարվել են փաստաբաններից և ձերբակալված անձանց հարազատներից ստացված ահազանգների հիման վրա, ինչը խոսում է նաև խմբի նկատմամբ հասարակական վստահության մթնոլորտի ձևավորման մասին:

Սույն հաշվետվության մեջ ներկայացված են խմբի կողմից ստուգված ՀՀ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ներում պահվող անձանց պահման պայմանները, նրանց

նկատմամբ ոստիկանության համակարգի աշխատակիցների վերաբերմունքը: Այցելությունների ընթացքում խմբի անդամներն ուշադրություն են դարձրել նաև ՁՊՎ-ներում պահվող անձանց նկատմամբ կիրառվող անմարդկային վերաբերմունքի դեպքերին, փաստաբանական ծառայություններից օգտվելու հնարավորությանը, ձերբակալված անձանց բուժսպասարկմանը, սննդով ապահովմանը, անձնական հիգիենայի պահպանմանը և այլ խնդիրներին:

Դիտորդական խումբը շնորհակալություն է հայտնում ՀՀ ոստիկանությանը և ոստիկանության համակարգի ՁՊՎ-ների վարչակազմերին՝ խմբի հետ համագործակցելու և խմբի աշխատանքներին աջակցելու համար: Ինչպես նաև խումբն իր երախտագիտությունն է հայտնում ԵԱՀԿ Մարդու իրավունքների և ժողովրդավարական հաստատությունների գրասենյակին և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակին դիտորդական խմբին մասնագիտական, մեթոդական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար:

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում

### Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած է 2 տեղանոց 12 և 3 տեղանոց 9 խցերից, 2 քննչական սենյակից, բուժկետից, տեսակցության սենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից, 2 զուգարանից և 1 լոգարանից: Խցերի բնական լուսավորությունը բավարար էր, իսկ էլեկտրական լուսավորությունը 11 խցերում բացակայում էր: Բուժսենյակը կահավորված էր պատշաճ և առկա էին մեծ քանակությամբ ժամկետային դեղամիջոցներ: Տեսակցության սենյակում առկա էր քարտաֆոն, որի միջոցով ձերբակալված անձինք, ցանկության դեպքում, կարող են զանգահարել իրենց հարազատներին՝ քարտի առկայության դեպքում, որը տրամադրվում է հարազատների կողմից: Սանհանգույցները բարվոք վիճակում էին:

Դիտորդական խմբի անդամները հարցազրույց անցկացրեցին ՁՊՎ-ի աշխատակազմի հետ, որի արդյունքում պարզվեց, որ ձերբակալված անձինք սնվում են խցերում, իսկ ՁՊՎ-ի սպասքը գտնվում է հերթապահի մոտ, խմբի անդամներին հայտնեցին նաև, որ ամբողջ սպասքը պահվում է պահեստում, անհարաժեշտության դեպքում այն տրամադրվում է բոլոր ձերբակալվածներին:

Խոհանոցը գտնվում էր 2-րդ հարկում, կահավորված էր սեղանով, սառնարանով, էլեկտրական տաքացուցիչով, և լվացարանով: Խմբի անդամներին հայտնեցին, որ, ձերբակալված անձանց ցանկության դեպքում, աշխատակիցների կողմից սնունդը կամ հանձնուքը տաքացվում է, և որ նրանք սնվում են օրը երեք անգամ: Զբոսահրապարակը բարվոք վիճակում էր:

ՁՊՎ-ի աշխատակազմի հետ հարցազրույցի ընթացքում նաև պարզ դարձավ, որ ՁՊՎ-ում ջեռուցումը իրականացնելու համար որոշ մասում բացակայում է գազատարին միացող գազի խողովակը:

**ՁՊՎ-ի մատյանների ուսումնասիրությունից պարզվեց.**

1. «ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2. «ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանում առկա էր 2006 թվականի ընթացքում կատարված 540 գրանցում, որից 415-ը՝ կալանավորման, իսկ 125-ը՝ ազատ արձակման;

3. «Բուժզննության և բուժօգնության» մատյանում առկա էր 2006 թվականի ընթացքում ] կատարված 560 գրանցում;
4. «Հարազատներին հայտնելու» մատյանը առկա էր;
5. «Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը բացակայում էր;
6. «Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը առկա էր;
7. «Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանում առկա էր 2006 թվականի ընթացքում կատարված 757 գրանցում, որից զբոսանքի մասին ոչ մի գրանցում չկար;
8. «Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանում առկա էր 2006 թվականի ընթացքում կատարված 398 գրանցում;
9. «Տեսակցությունների գրանցման» մատյանում առկա էր 2006 թվականի ընթացքում կատարված 16 գրանցում, վերջին գրանցումը՝ 30.09.2006-ին;
10. «Սննդամթերքի» մատյանը առկա էր;
11. «Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը բացակայում էր:

## Առաջարկություններ

1. Շուտափույթ կերպով լուծել գազատար խողովակների հարցը՝ մինչև ջեռուցման ապահովման սկիզբը;
2. Անհրաժեշտություն կա լուծելու ամբողջ ՁՊՎ-ի օդափոխությանը խնդիրը:

Հ ա վ ե լ վ ա ծ 1

*ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը*

| | |
|---|---|
| *Աշխատակազմ* | Պետ, 2 տեղակալ, 3 օպեր, 4 ավագ տեսուչ, 4 հերթապահ, 4 հերթապահի օգնական, 4 բուժակ, 21 պահակային ոստիկան, 1 վարորդ |
| *Խցերի քանակը* | 5 խուց՝ առաջին հարկում , 16 խուց՝ երկրորդ հարկում |
| *Խցերի չափերը* | բոլոր խցերը՝ 12 քմ |
| *Պատուհանների չափերը* | 0.50 մ x 0.90մ |
| *Լուսավորությունը* | բավարար |
| *Ներքին հարդարանքը* | 9 խուցը՝ երեք մահճակալ, 12 խուցը՝ երկու մահճակալ, մատրաս, բարձ, վերմակ, աթոռ և սեղան՝ ամրացված հատակին , իրավունքները և պարտականությունները, օրսակարգը՝ ամրացված պատերին |
| *Քննչական սենյակ, Տեսակցության սենյակ* | երկու տեղ, ամեն մեկում՝ երկու աթոռ մեկ սեղան՝ ամրացված հատակին , լուսավոր |
| *Բուժսենյակ* | մահճակալ, բժիշկի սեղան, աթոռ, դեղամիջոցների պահարան, սեղան դեղորայքով, աղբաման, լվացարան |
| *Դեղորայք՝ ժամկետային* | 1. Լեվոֆիեկս, 2. Նիպոսառ, 3. Տետրացիկլին, 4.Սինտոմիցին, 5. Բանիտիդին, 6. Պապազոլ և այլն |
| *Դեղորայք՝ ժամկետանց* | չկար |
| *Տեսակցության սենյակ* | երկու կողմից էլ կար աթոռ և սեղան, միջնապատը օրգանական ապակի , առկա էր հեռախոս՝ քարտով աշխատող, |
| *Զուգարան* | երկու հատ, ամեն մեկում չորս տեղ, չորս լվացարան՝ բարվոք վիճակում |
| *Լոգարան* | 1 հատ առաջին հարկում՝ լավ վիճակում |
| *Խոհանոց* | սեղան, սառնարան, էլ. տաքացուցիչ, լվացարան |
| *Սպասք* | հերթապահի մոտ էր՝ 7 հոգու համար նախատեսված |
| *Ջրսահրապարակ* | բարվոք |

## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

### Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած է 1 տեղանոց 4 խցից, քննչական սենյակից, տեսակցության սենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից, սանհանգույցից: Քննչական սենյակի պատուհանները մետաղյա փեղկերով փակված էին, որոնք խոչընդոտում էին բնական լուսավորությանը: Բուժսենյակ չկար, դեղորայքը գտնվում էր ոստիկանության բաժնի հերթապահ մասում, բոլոր դեղերի ժամկետները սպառվել էին 1999 թվականին: Սանհանգույցի սանիտարական վիճակը անբավարար էր, ծորակները չէին աշխատում: Խոհանոցը գտնվում էր լավ վիճակում՝ իր բոլոր անհրաժեշտ պարագաներով: Զբոսահրապարակը չէր գործում, քանզի գտնվում էր վերանորոգման մեջ: Տեսակցությունների սենյակի լուսավորությունը շատ վատ էր: Խցերում բացակայում էր «Ձերբակալված անձանց իրավունքները և պարտականությունները» օրենքը: Խախտելով «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը և ՀՀ ոստիկանապետի 2005թվականի հունվարի 14-ի N 1-Ն հրամանը (դիտորդական խմբի կարգը)՝ Սիսիանի ոստիկանության պետի օպերատիվ գծով տեղակալը, պարոն Բեգլարյանը, չէր ցանկանում դիտորդական խմբին տրամադրել ՁՊՎ-ի մատյանները: Խմբի անդամների հորդորների արդյունքում՝ որոշ ժամանակ անց, Սիսիանի ոստիկանության պետի օպերատիվ գծով տեղակալը տրամադրեց մատյանները, բացատրելով, որ դիտորդական խմբի անդամները նշված մատյաններն ուսումնասիրելու իրավունք չունեն: Մատյանների ստուգման ընթացքում նա հայտարարեց, որ. «…եթե մատյաններում սխալ կատարված լիներ, մենք արդեն վաղուց ուղղած կլինեինք…»:

Այն ձերբակալված անձանց, որոնց՝ ՁՊՎ-ում պահման 72 ժամը գերազանցել էր, պահման օրինականությունը հիմնավորող ոչ մի որոշում կամ դատարանի կողմից ուղարկված գրություն չկար:

Ըստ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի՝ եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կալանավորված անձը չի կարող 3 օրվանից ավելի պահվել ձերբակալվածներին պահելու վայրերում: «Ձերբակալաված և կալանավորված անձանց մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է. «Կալանավորվածներին պահելու վայրի տեղակայման տարածքից կալանավորված անձին ամեն օր փոխադրելու անհնարինության դեպքում, քննչական գործողություններ կատարելու և դատական քննությունը կալանավորվածներին պահելու վայրից դուրս կատարելու կապակցությամբ՝ քննիչի, դատախազի կամ դատարանի որոշմամբ կալանավորված անձը կարող է տեղափոխվել ձերբակալավածներին պահելու վայր՝ մինչև երեք օր տևողությամբ»:

**Մատյանների ուսումնասիրքյունից պարզվեց.**

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;

2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանում առկա էր 17 գրանցում, ըստ որի՝ Ի. Հ.-ն ձերբակալվել է 20.01.06-ի ժ. 10:15-ին և պահվել է մինչև 24.01.06-ի ժ. 13:00-ը: Օ. Ա.-ն ձերբակալվել է 28.02.06-ի ժ. 20:30-ին և պահվել է մինչև 04.03.06-ի ժ. 15:30-ը;
3.«Բուժզննության և բուժօգնության» մատյանում 2006 թվականի ընթացքում առկա էր 1 գրանցում (Ա. Օ.-ն) 10.05.06-ի ժ. 13:10-ին;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը բացակայում էր;
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը բացակայում էր;
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը բացակայում էր;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանում առկա էր 2006 թվականին կատարված 46 գրանցում, վերջինը՝ 21.06.06-ի ժ.18:00-ին;
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանը բացակայում էր;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը բացակայում էր;
10.«Սննդամթերքի» մատյանը առկա էր, որտեղ գրանցված էր. 550 գ հացի փոխարեն՝ 120 գ հաց;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը բացակայում էր;
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը բացակայում էր:

### Առաջարկություններ

1. ՁՊՎ-ն ապահովել բուժսենյակով;
2. Շատ մեծ ուշադրություն դարձնել դեղորայքին;
3. Լուծել ջրի խնդիրը;
4. Սանհանգույցը համապատասխանեցնել պահանջվող սանիտարական նորմերին;
5.Քննչական սենյակի պատուհանների մետաղյա փեղկերը, որոնք խոչընդոտում են լուսավորությանը, հանել;
6.Ձերբակալված անձանց 72 ժամից ավել չպահել:

*ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 2-ում*

### Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Գորիսի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած է 1 տեղանոց 4 խցից, քննչական սենյակից, տեսակցության սենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Քննչական սենյակում բացակայում էր 2-րդ աթոռը: Դիտորդական խմբի անդամների այն հարցմանը, թե ինչո՞ւ է բացակայում աթոռներից մեկը, ՁՊՎ-ի աշխատակիցները պատասխանեցին, որ քննիչը բերում է իր հետ իր աթոռը: Բուժ սենյակ և դեղորայք չկար: Տեսակցության սենյակը կահավորված և լուսավոր էր: Սանհանգույցը գտնվում էր բարվոք վիճակում: Խոհանոցի ծորակի ջուրը ժանգոտ էր, օգտագործման համար ոչ պիտանի: Սպասք գոյություն չուներ (ի՞նչ սպասքով են սնվում ՁՊՎ-ում ձերբակալված անձինք):

Ոստիկանության բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալը և ՁՊՎ-ի հերթապահը, խախտելով «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը և ՀՀ ոստիկանապետի 2005թվականի հունվարի 14-ի N 1-Ն հրամանը (դիտորդական խմբի կարգը), խոչընդոտներ ստեղծելով դիտորդական խմբի գործունեությանը՝ մոտավորապես 20 րոպե խմբի անդամներին թույլ չէին տալիս մուտք գործել ՁՊՎ: Մինչ դիտորդական խմբի անդամները սպասում էին ոստիկանության բաժնում, ՁՊՎ-ից դուրս բերվեց մի անձ, որի աչքի տակ կապտուկ և դեմքին ընդհանուր գունատություն էին տեսել դիտորդական խմբի անդամները: Դիտորդական խմբի անդամների հարցապնդմանը, թե ով է վերը նշված անձը, Ոստիկանության բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալը կտրականապես պնդեց, որ ՁՊՎ-ից որևէ մարդ դուրս չի բերվել: ՁՊՎ-ի

մատյանների ստուգման արդյունքում պարզվեց, որ «Ձերբակալված անձանց հաշվառման» մատյանում նշված անձի վերաբերյալ գրանցում չկար: Հերթապահ մասում խմբի անդամներին տրամադրվեց «Ոստիկանության բաժին բերման ենթարկվածների հաշվառման մատյանը», որտեղ գրանցված էր Ն. Դ.-ն, որը բերման էր ենթարկվել 03.08.06-ի ժամը 23:00-ին, նրան ազատ արձակելու մասին գրառում չկար արված, իսկ դիտորդական խումբը այցելություն էր կատարել Գորիսի ՁՊՎ 04.08.06-ին, փաստորեն ստացվում է, որ վերը նշված անձը փաստացի անօրինական զրկվել է ազատությունից: Ոստիկանության աշխատակիցների պնդմամբ՝ նշված անձին պահել են, ոչ թե ՁՊՎ-ում, այլ՝ 3 ժամանոց (ժամանակավոր) պահման խցում՝ մոտավորապես 12-13 ժամ: Դիտորդական խմբի անդամները 05.08.06-ի ժամը 12-ի սահմաններում, կրկին այցելելով նշված ՁՊՎ, ցանկացել էին զրուցել այդ անձի հետ, քանի որ նախորդ օրը, երբ նա դուրս էր բերվել ՁՊՎ-ից, դիտորդական խմբի անդամները նրա աջ աչքի տակ կապտուկ և գունատություն էին նկատել: Այն հարցին, թե որտեղ է պահվում նշված անձը, օպերատիվ գծով ոստիկանության պետի տեղակալը հայտնեց, որ. «երևի բաց են թողել…»: Դիտորդական խմբի անդամներին տրամադրվեց «Ոստիկանության բաժին բերման ենթարկվածների հաշվառման» մատյանը: Ուսումնասիրելուց հետո, ոստիկանության պետի օպերատիվ գծով տեղակալը տեղեկացրեց, որ նշված անձի նկատմամբ ազատ արձակման վերաբերյալ որևէ գրառում չի կատարվել: Դիտորդական խմբի անդամներին միաժամանակ տեղեկացրել են, որ նշված անձը ոստիկանության նախկին աշխատող էր: Օպերատիվ գծով տեղակալը հայտնեց թե. «ինչպե՞ս մենք կարող ենք վատ վարվել ոստիկանության նախկին աշխատողի հետ»:

Դիտորդական խմբի անդամների կողմից ՁՊՎ-ի մատյանների ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ 2006 թվականի հունվարից մինչև ապրիլ ամիսը 30 (երեսուն) հոգու, ձերբակալված անձի կարգավիճակով, պահել են 72 ժամից ավել, որը ինչպես ՀՀ Սահմանադրության, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերի խախտում է:

### Մատյանների ուսումնասիրությունից պարզվեց.

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանում առկա էր 2006 թվականի ընթացքում կատարված 48 գրանցում, վերջին գրանցումը՝ 31.07.06-ի ժամը11:00-11:45-ին;
3.«Բուժզննության և բուժօգնության» մատյանում առկա էր 2006 թվականի ընթացքում կատարված 2 գրանցում, երկուսն էլ՝ նույն անձի վերաբերյալ;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը բացակայում էր;
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը բացակայում էր;
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը բացակայում էր;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանն առկա էր, վերջին գրանցումը՝ 19.07.06-ին;
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանը բացակայում էր;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը բացակայում էր;
10.«Սննդամթերքի» մատյանը առկա էր. վերջին գրանցումը՝ 19.07.06-ին՝ հաց- 550 գ, թեյ - 1, տաք ճաշ, ծավարեղեն, շաքար, պանիր;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը բացակայում էր;
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը բացակայում էր:

### Առաջարկություններ

1. ՁՊՎ-ն ապահովել բուժսենյակով;
2.Շատ մեծ ուշադրություն դարձնել դեղորայքին;

3.Լուծել ջրի խնդիրը;
4.Քննչական սենյակում տեղադրել երկրորդ աթոռը;
5.Ապահովել մեկ ժամյա զբոսանքը, զբոսահրապարակում տեղադրել մեկ կամ երկու քառակուսիմետրանոց ծածկ՝ արևից և անձրևներից պատսպարվելու համար և միաժամանակ ապահովել մարզական գույքով՝ մարմնամարզությամբ զբաղվելու համար;
6.Բացահայտել և օրենքի ամբողջ խստությամբ պատժել ձերբակալված անձանց ծեծի ենթարկող աշխատակիցներին:

*ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Գորիսի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 2-ում*

## Դիտարկումներ ՀՀ Ոստիկանության Սյունիքի մարզային վարչությոան Կապանի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած է 2 տեղանոց 6 խցից, քննչական սենյակից, տեսակցության սենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Որոշ խցերում սպիտակեղենը բացակայում էր, 6-րդ խուցը ընդհանրապես կահավորված չէր, որի պատճառը անհայտ էր: Ամբողջ ՁՊՎ-ի լուսավորությունը բավարար էր: Քննչական սենյակը լուսավոր էր և պատշաճ կահավորված: Բուժ սենյակ չկար, բայց առկա էր դեղորայքի արկղ, որտեղ կային 7 տեսակի ժամկետային դեղորայք (տես նկար 1): Տեսակցության սենյակի բնական լուսավորությանը խոչընդոտում էին երկաթյա պատուհանները: Սանհանգույցը գտնվում էր շատ լավ վիճակում: Խոհանոցում առկա էր էլ.սալիկ, սեղան, աթոռ, պահարան, իսկ սպասքը խցերում էր:

Կալանավորված անձ Վ. Դ.-ն 31.07.06-ից մինչև 04.08.06-ը (կալանավորման որոշում՝ 01.08.06) և Ա. Պ.-ն 30.07.06-ից մինչև 04.08.06-ը (կալանավորման որոշում՝ 02.08.06) պահվել են ՁՊՎ-ում: Նշված անձանց նկատմամբ կայացվել էր կալանքի որոշում, սակայն ՁՊՎ-ում պահելու ոչ մի հիմք չկար: Ոստիկանության մարզային վարչության պետի ծառայության գծով տեղակալ պրն. Ա.-ն տեղեկացրեց, որ. «…կալանավորման որոշումից հետո, կալանավորին իրավունք ունենք պահելու 6 օր»: ՀՀ քրեական դատավարության օրենգրքի 137 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կալանավորված անձը չի կարող 3 օրից ավելի պահվել ձերբակալվածներին պահելու վայրերում, բացի այն դեպքերից, երբ ձերբակալվածներին պահելու վայրից քննչական մեկուսարան կամ, օրենքի պահանջներին համապատասխան, կալանավորվածներին պահելու այլ վայրեր նրա տեղափոխումը հնարավոր չէ տրանսպորտային հաղորդակցության բացակայության պատճառով: Իսկ ըստ «Ձերբակալված և կալանավորված անձանց մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ «Կալանավորվածներին պահելու վայրի տեղակայման տարածքից կալանավորված անձին ամեն օր փոխադրելու անհնարինության դեպքում, քննչական գործողություններ կատարելու և դատական քննությունը կալանավորվածներին պահելու վայրից դուրս կատարելու կապակցությամբ, քննիչի, դատախազի կամ դատարանի որոշմամբ, կալանավորված անձը կարող է տեղափոխվել ձերբակալավածներին պահելու վայր՝ մինչև երեք օր տևողությամբ»:

### Մատյանների ուսումնասիրքյունից պարզվեց.

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանը առկա էր;
3.« Բուժզննության և բուժօգնության» մատյանում առկա էր 2006 թվականի ընթացքում կատարված 16 գրանցում;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը բացակայում էր;
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը բացակայում էր;
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը առկա էր;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանը առկա էր;

8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանում առկա էր վերջինը գրանցումը՝ 17.05.06-ին;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը բացակայում էր;
10«Սննդամթերքի » մատյանը բացակայում էր;
11«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը բացակայում էր;
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների,դիմումների և բողոքների» մատյանը բացակայում էր;

## Առաջարկություններ

1. ՁՊՎ-ն ապահովել բուժսենյակով;
2. Շատ մեծ ուշադրություն դարձնել դեղորայքին;
3.Ապահովել մեկժամյա զբոսանքը, զբոսահրապարակում տեղադրել ծածկ՝ արևից և անձրևներից պատսպարվելու համար;
4.ՁՊՎ-ն օգտագործել միայն ձերբակալված անձանց պահելու համար և չդարձնել այն քրեակատարողական հիմնարկ (ՔԿՀ):

*ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 2-ում*

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Մեղրիի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած է 2 տեղանոց 2 խցից, քննչական սենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ի խցերի ներսում լուսավորությունը շատ թույլ է, որի պատճառով խցերի ներսում հնարավոր չէ գրել կամ կարդալ: Խցերից 3-րդը շահագործվում էր որպես պահեստ: Քննչական սենյակը կահավորված էր սեղանով և մեկ աթոռով: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ բուժսենյակ, դեղորայք, լոգարան և տեսակցության սենյակ չկար: Զուգարանը գտնվում էր միջանցքում, առանց ծածկի, որի պատճառով տհաճ հոտը տարածվում էր ամբողջ ՁՊՎ-ով: Սպասքը խցերում էր:

## Մատյանների ուսումնասիրթյունից պարզվեց

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը բացակայում էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանը առկա էր;
3.« Բուժզննության և բուժօգնության» մատյանը առկա էր, վերջին գրանցումը՝ 15.11.2004-ին;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը բացակայում էր;
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը բացակայում էր;
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը առկա էր, վերջին գրանցումը՝ 28.07. 06-ին;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանը առկա էր;
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանը առկա էր, վերջինը գրանցումը՝ 28.07. 06ին;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը բացակայում էր;

10.«Սննդամթերքի» մատյանում առկա էր գրանցում՝ հաց-150 գր., ճաշ-1, թեյ-1, բանջարեղեն-250 գր., այլ մթերքներ;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը բացակայում էր;
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների,դիմումների և բողոքների» մատյանը բացակայում էր:

*Առաջարկություններ*

***Դիտորդական խումբը գտնում է, որ ՁՊՎ-ն նման պայմաններում շահագործման ենթակա չէ:***

*ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Մեղրիի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 2-*

Հ ա վ ե լ վ ա ծ 2

***ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության ՁՊՎ-ների ընդհանուր նկարագիրը***

| քաղաքը | *Սիսիանի ԶՊՎ* | *Գորիսի ԶՊՎ* | *Կապանի ԶՊՎ* | *Մեղրիի ԶՊՎ* |
|---|---|---|---|---|
| Աշխատակազմ | Պետ, 4 հերթապահ | Պետ, 4 հերթապահ | Պետ, 4 հերթապահ | Պետ, 4 հերթապահ |
| Խցերի քանակը | 4 | 4 | 6 | 3 |
| Խցերի չափերը | 2մx3մ | 3մx3.5մ | 5մx2.8մ *6-րդ խցում կահավորանք չկար* | 2.5մx4.5մ |
| Պատուհանների չափերը | 0.60մx0.80մ | 0.60մx0.80մ | 0.50մx0.60մ | 1.20մx 0.80մ |
| Լուսավորությունը | բավարար | լավ | բավարար | *շատ վատ* |
| Ներքին հարդարանքը | 1տեղ.մահճակալ, սեղան,նստարան,լվացարան,ներկառուցված պահարանում տեղադրված էր բաժակ, 2 գդալ,մետաղյա ափսե | 1 մահճակալ, սեղան, նստարան, լվացարան, ջուրը գալիս էր | սեղան, նստարան, 2 մահճակալ, 1 բարձ, ծածկոց, սավան, որոշ խցերում սպիտակեղենը բացակայում էր | 2 մահճակալ, սեղան, 2 նստարան, ամսագրեր |
| Քննչական սենյակ | 1 սեղան, 2 նստարան՝ ամրացված հատակին, ***պատուհանները մետաղյա փեղկերով փակված էին, որոնք խոչընդոտում էին բնական լուսավորությանը*** | 1 սեղան, 1 աթոռ՝ հատակին ամրացված: ***Մեզ հայտնեցին, որ քննիչը բերում է իր հետ իր աթոռը*** | լուսավոր, սեղան, 2 աթոռ՝ ամրացված հատակին | 1 նստարան, 1 սեղան |
| Բուժսենյակ | ***չկար, դեղամիջոցներ տրամադրեցին հերթապահ մասում*** | ***չկար*** | ***չկար,*** միայն դեղերի արկղ էր առկա | ***չկար*** |
| Դեղորայք՝ ժամկետային | ***չկար*** | ***չկար*** | 1.էքստրակտ, 2.Վալերիանա, 3.Նաֆթեզին, 4. Սպազմալգոն, 5.բամբակ, 6.վիրակապ 7. յոդ | ***չկար*** |
| Դեղորայք՝ ժամկետանց | **1.Գիոքսիզոն /մածուկ/, 2.Լանիկոր, 3. Նովոկային,4.Կոֆեինբենզոնատրիա, 5. Կոմֆո-րային սպիրտ 6. Յոդ** | չկար | չկար | չկար |
| Տեսակցության սենյակ | ***Լուսավորություն չկար,*** հարազատների մուտքը՝ բակի կողմից | լուսավորություն՝ բավարար | ***բնական լուսավորությանը խոչընդոտում էին երկաթյա պատուհանները*** | ***չկար*** |
| Զուգարան | ***2 հատ, սանիտարա-կան պայմանները՝ անբավարար*** | լավ | 2 հատ | ***գտնվում էր միջանց-քում, առանց ծածկի, որի պատճառով տհաճ հոտը տարածվում էր ամբողջ ԶՊՎ-ով:*** |
| Լոգարան | միասին էր զուգարանի հետ, ***ցնցուղը և ծորակները չէին աշխատում*** | լավ | լավ վիճակ, տաք ջուր, գեյզեր | ***չկար*** |
| Խոհանոց | էլ.տաքացուցիչ,պահարան սեղան,նստարան՝ ամրացված հատակին | սեղան, նստարան 1 հատ, ***ծորակի ջուրը ժանգոտ էր, օգտա-գործման համար ոչ պիտանի*** | էլ.տաքացուցիչ, սեղան, աթոռ, պահարան | կար |
| Սպասք | մետաղյա ափսեներ, թասեր, բաժակներ, գդալներ՝ 4-ական | ***չկար*** | խցերում էր | խցերում էր |
| Զբոսահրապարակ | գտնվում էր վերանորոգման փուլում | ***ծածկ չկար*** | ***ծածկ չկար*** | *կար* |

## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

**Դիտարկումներ ՀՀ Ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության Եղեգնաձորի ՁՊՎ-ում**

ՁՊՎ-ն բաղկացած է 1 տեղանոց 3 խցից, քննչական սենյակից, տեսակցության սենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Քննչական սենյակը պատշաճ կահավորված էր և շատ լուսավոր: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ բուժսենյակ և դեղորայք ՁՊՎ-ում գոյություն չունի: Տեսակցության սենյակը, խոհանոցը և սանհանգույցը գտնվում էին բարվոք վիճակում:

«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանի ուսումանսիրության ընթացքում պարզվեց, որ կալանավորվածներ Պ. Ս.-ն, կալանավորված 24.05.06-ին, ՁՊՎ-ից տեղափոխվել է 08.06.06-ին, Ա. Լ.-ն կալանավորվել է 29.05.06-ին և տեղափոխվել 08.06.06-ին, Դ. Ս.-ն՝ 26.06.06- 29.06.06-ի ժամը 14-30, Ա. Ա.-ն 28.07.06-ին կալանավորվել և տեղափոխվել է 02.08.06թ .: Նշված անձանց գործերով ՁՊՎ-ում պահման հիմնավորող ոչ մի փաստաթուղթ չկար: ՀՀ քրեական դատավարության օրենգրքի 137 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կալանավորված անձը չի կարող 3 օրվանից ավելի պահվել ձերբակալվածներին պահելու վայրերում, բացի այն դեպքերից, երբ ձերբակալվածներին պահելու վայրից քննչական մեկուսարան կամ, օրենքի պահանջներին համապատասխան, կալանավորվածներին պահելու այլ վայրեր նրա տեղափոխումը հնարավոր չէ տրանսպորտային հաղորդակցության բացակայության պատճառով:

**Մատյանների ուսումնասիրթյունից պարզվեց**

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը բացակայում էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանում առկա էր 8 գրանցում՝ կատարված 2006 թվականի ընթացքում;
3.«Բուժզննության և բուժօգնության» մատյանում առկա էր 3 գրանցում՝ Ասրյան Աշոտ անունով;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը բացակայում էր;
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը բացակայում էր;
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը բացակայում էր;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանում առկա էր 3 գրանցում՝ Լ. Աղաբեկյան անուն ազգանունով 07.06.06-ի ժամը 17:00-18:00-ին՝ քննչական, Ս. Ղազարյան 27.06.06-ի ժամը 14:45-16:00-ին՝ առերեսում;
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանը բացակայում էր;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը բացակայում էր;
10.«Սննդամթերքի» մատյանում առկա էր գրանցում. հաց-150 գր., պանիր-100 գր., 450 դրամ, կատարված՝ 20.04.06-02.08.06-ին;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը բացակայում էր;
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը բացակայում էր:

**Առաջարկություններ**

1.ՁՊՎ-ն ապահովել բուժսենյակով;
2.Շատ մեծ ուշադրություն դարձնել դեղորայքին;
3.Ապահովել մեկ ժամյա զբոսանքը, զբոսահրապարակում տեղադրել մեկ կամ երկու քառակուսիմետրանոց ծածկ՝ արևից և անձրևներից պատսպարվելու համար և միաժամանակ ապահովել մարզական գույքով՝ մարմնամարզությամբ զբաղվելու համար;
4.ՁՊՎ-ն օգտագործել միայն ձերբակալված անձանց պահելու համար և չդարձնել այն ՔԿՀ:

*ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության Եղեգնաձորի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 3-ում*

**Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության**

## Վայքի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած է 2 տեղանոց 2 խցից, տեսակցության սենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ի խցերի ներսում լուսավորությունը շատ թույլ է, որի պատճառով խցերի ներսում հնարավոր չէ կարդալ կամ գրել: ՁՊՎ-ում քննչական և բուժսենյակներ չկային: Դեղորայքների արկղը տրամադրելուց հետո՝ պարզվեց, որ առկա էին ներարկիչ, բամբակ և ժամկետանց կորվալոլ, ֆուրազոլին: Տեսակցության սենյակում բնական լուսավորություն և ազդանշանային համակարգ չկար: Խոհանոցը և սանհանգույցը գտնվում էին շատ լավ վիճակում: Սպասքը գտնվում էր խցերում:

Ձերբակալվածներ Ա. Լ.-ն և Բ. Ս.-ն 27.07.06-ին ձերբակալվել են, 30.07.06-ին կալանավորվել և, դատախազի գրության համաձայն, պահվել են ՁՊՎ-ում մինչև 03.08.06-ը: «Սննդի մատյան»-ում 09.01.06-ից մինչև 03.08.06-ի դրությամբ կատարված էր 180 գրանցում, որտեղ նշված էր միայն պանիր 300 գր. և հաց 500 գր. սննդի տեսականի:

## Մատյանների ուսումնասիրքյունից պարզվեց.

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը բացակայում էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանում առկա էր 20 գրանցում՝ կատարված 2006թվականի ընթացքում;
3.« Բուժզննության և բուժօգնության» մատյանում առկա էր 2006 թվականի ընթացքում կատարված 6 գրանցում՝ սկսած 18.01.06-ին մինչև 01.08.06-ի ժ. 23-00;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը բացակայում էր;
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը բացակայում էր;
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը բացակայում էր;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանում առկա էր 2006 թվականի ընթացքում կատարված 23 գրանցում՝ սկսած 06.07.06-ին, մինչև 11.07. 06-ը, գրանցված են միայն քննության տանելու և տեղափոխելու մասին գրառումներ;
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանը առկա էր: 2006 թվականի ընթացքում կատարված ոչ մի գրանցում չկար;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը բացակայում էր;
10.«Սննդամթերքի » մատյանը առկա էր: 2006 թվականի ընթացքում կատարված է 180 գրանցում՝ 09.01.06-ից մինչև 03.08. 06-ը՝ հաց 500 գր., պանիր 300 գր.;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը բացակայում էր;
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը բացակայում էր:

## Առաջարկություններ

1.ՁՊՎ-ն ապահովել բուժսենյակով;
2. ՁՊՎ-ն ապահովել քննչական սենյակով;
2.Շատ մեծ ուշադրություն դարձնել դեղորայքին;
3.Ապահովել մեկ ժամյա զբոսանքը, զբոսահրապարակում տեղադրել մեկ կամ երկու քառակուսիմետրանոց ծածկ՝ արևից և անձրևներից պատսպարվելու համար և միաժամանակ ապահովել մարզական գույքով՝ մարմնամարզությամբ զբաղվելու համար;
4.Անրաժեշտ է լուծել տեսակցության սենյակի լուսավորության և ազդանշանային համակարգի հարցը;
5.ՁՊՎ-ն օգտագործել միայն ձերբակալված անձանց պահելու համար և չդարձնել այն ՔԿՀ:

*ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության Վայքի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 3-ում*

**Հ ա վ ե լ վ ա ծ 3**

*ԴԴ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության ՁՊՎ-ների ընդհանուր նկարագիրը*

| Քաղաքը | Եղեգնաձորի ՁՊՎ | Վայքի ՁՊՎ |
|---|---|---|
| Աշխատակազմ | Պետ,<br>4 հերթապահ | Պետ,<br>4 հերթապահ |
| Խցերի քանակը | 3 | 2 |
| Խցերի չափերը | 2մ x 3մ | 2մ x 5մ |
| Պատուհանների չափերը | 0.60մx1.0մ | 0.35մ x0.70մ |
| Լուսավորությունը | բավարար | շատ վատ |
| Ներքին հարդարանքը | 1 սեղան, 1 մահճակալ, նստարան, օճառ, լվացարան | 2 մահճակալ, սպիտակեղենը տրամադրվում է, ամսագիր, սեղան, 2 նստարան, լվացարան, ջուրը գալիս էր: |
| Քննչական սենյակ | սեղան, նստարան 2 հատ, շատ լուսավոր | չկար |
| Բուժսենյակ | չկար | չկար |
| Դեղորայք՝ ժամկետային | չկար | ներարկիչ, բամբակ |
| Դեղորայք՝ ժամկետանց | չկար | կորվալոլ, ֆուրազոլին |
| Տեսակցության սենյակ | կար | բնական լուսավորություն և ազդանշանային համակարգ չկար |
| Զուգարան | բավարար | կար |
| Լոգարան | բավարար | կար |
| Խոհանոց | 2 նստարան, սեղան | կար |
| Սպասք | 4 բաժակ, 4 թաս, 4 ափսե | խցերում էր |
| Զբոսահրապարակ | ծածկ չկար | ծածկ չկար |

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած էր 7 խցից, 4-ը՝ 2 տեղանոց և 3-ը՝ 1 տեղանոց, քննչական սենյակից, տեսակցության սենյակից, բուժսենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Ընդհանուր ՁՊՎ-ի լուսավորությունը բավարար էր: Քննչական սենյակը չէր համապատասխանում ընդունված չափանիշներին, որովհետև 4 աթոռներից և բազմոցից միայն 2 աթոռ էր ամրացված հատակին և առկա էր էլեկտրական սալօջախ: Բուժսենյակում առկա էր 2 բազմոց, 1 մահճակալ, հեռուստացույց, լվացարան, դեղորայքի արկղ, որտեղ կային և ժամկետային և ժամկետանց դեղորայք: Տեսակցության սենյակը և սանհանգույցը գտնվում էր բարվոք վիճակում: Խոհանոցում կար 1 սեղան, 1 աթոռ:

Խմբի անդամները աշխատակազմի հետ հարցազրույցի ընթացքում պարզեցին, որ ձերբակալված անձինք սնվում են օրը մեկ անգամ: Ձերբակալավածներ Մ. Գ.-ն և Գ. Կ.-ն 14.07.06-ի կալանավորման որոշումից հետո ՁՊՎ-ում պահվել են առանց որևէ հիմքի մինչև 26.07.06-ը: ՀՀ քրեական դատավարության օրենգրքի 137 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կալանավորված անձը չի կարող 3 օրվանից ավելի պահվել ձերբակալվածներին պահելու վայրերում, բացի այն դեպքերից, երբ ձերբակալվածներին պահելու վայրից քննչական մեկուսարան կամ, օրենքի պահանջներին համապատասխան, կալանավորվածներին պահելու այլ վայրեր նրա տեղափոխումը հնարավոր չէ տրանսպորտային հաղորդակցության բացակայության պատճառով:

### Մատյանների ուսումնասիրությունից պարզվեց.

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը բացակայում էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանում առկա էր 2006 թվականի ընթացքում կատարված գրանցում 14 ձերբակալվածի մասին, որոնցից 11-ը տեղափոխվել են ՔԿՀ, 3 ձերբակալված ազատ են արձակվել;
3.«Բուժզննության և բուժօգնության» մատյանում առկա էր 1 գրանցում;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանում առկա էր վերջին գրանցումը՝ 2006 թվականի մայիս ամսին;
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանում առկա էր 30 գրանցում;
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը առկա էր;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանը առկա էր;
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանում չկար ոչ մի գրանցում;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանում առկա էր 4 գրանցում;
10.«Սննդամթերքի» մատյանում առկա էր՝ 150գր. հաց, ճաշ 250 գր. օրը 3 անգամ գրանցումը;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը բացակայում էր;
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը բացակայում էր;

### Առաջարկություններ

1. Լուծել բուժսենյակի հարցը (հերթապահի սենյակը չներկայացնել որպես բուժսենյակ);
2. Լուծել սպասքի հարցը, (11 հոգու համար նախատեսված սպասքից առկա էր 5-ը);
3. Մեծ ուշադրություն դարձնել դեղորայքի ժամկետներին;
4. ՁՊՎ-ն օգտագործել միայն ձերբակալված անձանց պահելու համար և չդարձնել այն ՔԿՀ:

*ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 4-ում*

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Չարենցավանի ՁՊՎ-ում

Չարենցավանի ոստիկանության հերթապահ Թ.-ն, ՁՊՎ-ի աշխատակիցների հետ, խախտելով «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը և ՀՀ ոստիկանապետի 2005 թվականի հունվարի 14-ի N 1-Ն հրամանը (դիտորդական խմբի կարգը), խոչընդոտներ ստեղծելով դիտորդական խմբի գործունեությանը՝ թույլ չէին տալիս մուտք գործել ՁՊՎ, և, չնայած աշխատակազմի դիմադրությանը, խմբի անդամները իրենց հետևողականության շնորհիվ մուտք են գործել ՁՊՎ:

ՁՊՎ-ն բաղկացած էր 2 տեղանոց 3 խցից, քննչական սենյակից, խոհանոցից զբոսահրապարակից և սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ի խցերի ներսում լուսավորությունը շատ թույլ է, որի պատճառով խցերի ներսում հնարավոր չէ կարդալ կամ գրել: Առաջին և երկրորդ խուցը 6քմ է, երրորդ խուցը՝ 15քմ: Բոլոր խցերում էլ սպիտակեղենը բացակայում էր: Տեսակցության և բուժսենյակ գոյություն չուներ, բայց ներկայացրեցին դեղորայքով լի արկղ, որտեղ առկա էին և ժամկետային և ժամկետանց դեղեր: Ջուգարանում օդափոխություն չէր կատարվում: Խոհանոցը կահավորված էր մեկ սեղանով և մեկ աթոռով, բնական լուսավորությունը՝ շատ վատ, խմբի անդամները տեղեկացան նաև որ ՁՊՎ-ում պահվող անձինք սնվում են օրը մեկ անգամ:

Ոստիկանության բաժնի հերթապահ Թ.-ն խմբի անդամներին թույլ չտվեց առանձնազրույց ունենալ ձերբակալված անձանց հետ, առաջարկեց զեկուցել բաժնի պետին: Որոշ ժամանակ անց խմբի անդամները տեղեկացվեցին, որ բաժնի պետը կտրականապես դեմ է առանձնազրույցին, որից հետո ՁՊՎ-ի խուց մտան, ՁՊՎ-ի պետ Կարապետյանը, հերթապահ Հ.-ն և ոստիկանության բաժնի հերթապահ Թ.-ն, որոնց ներկայությունը խոչընդոտ հանդիսացավ առանձնազրույցին:

*Դիտորդական խմբի անդամները, ըստ ՀՀ ոստիկանապետի 2005թվականի հունվարի 14-ի N 1-Ն հրամանի դիտորդական խմբի կարգի 12-րդ կետի, իրավունք ունեն հանդիպել ՁՊՎ-ում պահվող անձի հետ, որպես կանոն, կարող են հանդիպել մեկուսի, իսկ խմբի անդամի ցանկությամբ՝ ՁՊՎ-ի վարչակազմի ներկայացուցչի մասնակցությամբ:*

ՁՊՎ-ի հերթապահ Հ.-ն դիտորդական խմբի այցելության նշված օրը (14.09.06) չուներ ոչ մի գրառում մատյաններում չնայած նրան, որ կալանավորները բերվել էին ՁՊՎ 13.09.06-ի ժամը 14:00-ին: Կալանավորների հետ ունեցած զրույցից պարզվեց, որ նրանք մեկժամյա զբոսանքի փոխարեն զբոսանքի էին դուրս եկել 10 րոպե: ՁՊՎ-ի հերթապահը խմբի անդամներին մեկնաբանեց, որ. «..կարող եմ ձեր գնալուց հետո հանեմ զբոսանքի, երբ ցանկանամ (մինչև ժամը 20.00)…» և պնդեց, որ դիտորդական խմբի անդամներն իրենց մոտ արձանագրեն այցելության ժամը՝ 18:30: Մինչև դիտորդական խմբի այցելության ավարտը, փաստացի մատյաններով և հերթապահի խոսքերով, 5 կալանավորվածներից ոչ ոք դեռ սնունդ չէր ստացել: Հերթապահ Հ.-ի միաժամանակ հայտնեց, որ ՁՊՎ-ում աշխատելու 20 տարվա փորձ ունի և բազմաթիվ տարբերակներ գիտի՝ դիտորդական խմբին խաբելու համար: *Մեկնաբանություններն ավելորդ են:*

Կալանավորված անձինք հայտնեցին, որ ստացել են հանձնուքներ 13.09.06-ին. և 14.09.06-ին, բայց ոչ մի դիմում չի եղել, իսկ հանձնուքների ընդունման մատյանում գրանցում չկար: Խմբի անդամների պնդմամբ ներկայացրեցին հանձնուքի վերաբերյալ կալանավորվածներից՝ հարազատի անունով առկա մեկ դիմում՝ գրված 14.09.06-ին, և խմբի անդամների բազմաթիվ հորդորների արդյունքում հերթապահը նշված հանձնուքը վերջապես հանձնեց կալանավորվածին: «ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանի ուսումնասիրությունից պարզվեց, որ ՁՊՎ-ում առանց որևէ հիմքի պահել էին երկու անձ՝ Ա. Գ.-ն՝ 23.03.06-ից մինչև 05.04.06-ը և Ա. Հ.-ն՝ 24.03.06-ից մինչև 05.04.06-ը: Ընդհանրապես ՁՊՎ-ում ոչ մի գրություն չկար ձերբակալվածներին 72 ժամից ավել պահելու մասին, որը ինչպես ՀՀ Սահմանադրության այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերի խախտում է: Կալանավորվածներից մեկը՝ Հ. Ա.-ն կասկածում էր,

որ հիվանդ է թոքախտով և հայտնեց որ ՁՊՎ-ում տվել են ցավազրկող դեղ, իսկ մինչ ՁՊՎ բերվելը նա ստուգվել է ՔԿՀ-ում, բայց պատասխանը դեռ չի ստացել և բժշկի կարիք ունի:

### Մատյանների ուսումնասիրքյուններից պարզվեց.

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանը առկա էր;
3.« Բուժզննության և բուժօգնության» մատյանում առկա էր 2006 թվականի ընթացքում կատարված 2 գրանցում;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը բացակայում էր;
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանում առկա էր 20 գրանցում, 9 հոգու նկատմամբ գրանցում չկար, այնինչ մեզ հավաստիացրին, որ բոլոր գրառումները կատարում են;
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանում գրառում չկար;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանում առկա էին գրանցումներ` մեծամասամբ զբոսանքի;
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանում առկա էր 2006 թվականի ընթացքում կատարված 19 գրանցում;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանում առկա էր 3 գրանցում;
10.«Սննդամթերքի» մատյանում վերջին գրանցումը եղել է 06.09.06-ին` հաց- 300 գ, ձու- 1, կոտլետ- 250գ, փլավ-100 գ,;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը բացակայում էր;
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների,դիմումների և բողոքների» մատյանը բացակայում էր:

### Առաջարկություններ

1. ՁՊՎ-ն ապահովել բուժսենյակով;
2.Խոնավությունը վերացնել;
3.Ապահովել երեքանգամյա սնունդը;
4.Լուծել տեսակցության սենյակի հարցը;
5.Լուծել սպասքի հարցը;
6.Լուծել զուգարանի օդափոխության հարցը;
7.Վերականգնել խոհանոցի լուսավորությունը;
8.Ապահովել մեկժամյա զբոսանք, անհրաժեշտ է, որ զբոսահրապարակում տեղադրվի մեկ կամ երկու քառակուսիմետրանոց ծածկ` արևից և անձրևներից պատսպարվելու համար և միաժամանակ ապահովել մարզական գույքով` մարմ-նամարզությամբ զբաղվելու համար;
9.ՁՊՎ ընդունման պահից ապահովել սպիտակեղենով;
10.Ուշադրություն դարձնել հանձնուքները ժամանակին տրամադրելու գործընթացին և հանձնուքների ընդունման ժամանակ դիմումի վրա նշել ընդունման ժամը;
11.ՁՊՎ-ն օգտագործել միայն ձերբակալված անձանց պահելու համար և չդարձնել այն ՔԿՀ;
12. ՁՊՎ-ում ձերբակալված անձանց չպահել առանց հիմքի և անօրինական (72 ժամից ավել):

*ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Չարենցավանի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը` Հավելված 4-ում*

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած էր 4 խցից (առաջին, երրորդ, չորրորդ խցերը՝ 1 տեղանոց, երկրորդ խուցը՝ 2 տեղանոց), խոհանոցից, զբոսահրապարակից, սանհանգույցից: Ընդհանուր ՁՊՎ-ի լուսավորությունը բավարար էր: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ն չուներ բուժսենյակ, տեսակցության սենյակ, քննչական սենյակ: Հերթապահի սենյակի դեղորայքում առկա էր վալիդոլ, վիրակապ, բամբակ, յոդ և ներարկիչ: Զբոսահրապարակը և սանհանգույցը գտնվում էին բարվոք վիճակում: Խոհանոցը շատ խոնավ էր (տես նկար 2): Որպես տեսակցության և քննիչի սենյակ օգտագործվում էր ՁՊՎ-ի հերթապահի սենյակը: ՁՊՎ-ում հեռախոս կար տեղադրված, սակայն՝ առանց կապի:

### Մատյանների ուսումնասիրությունից պարզվեց.

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանում առկա էր 30 գրանցում՝ 6 ձերբակալված և 24 կալանավորված անձանց համար;
3.«Բուժզննության և բուժօգնության» մատյանը առկա էր;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը բացակայում էր;
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը բացակայում էր;
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը առկա էր;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանում առկա էր գրառում՝ 1 անձի վերաբերյալ, որ 25.07.06-ից մինչև 01.08.06-ը գտնվել է այնտեղ, բայց, ըստ մատյանի, խցից մեկ անգամ է դուրս բերվել՝ 26.07.06-ին;
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանում գրանցում չկար;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը բացակայում էր;
10.«Սննդամթերքի» մատյանը առկա էր;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը բացակայում էր;
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը բացակայում էր:

### Առաջարկություններ

1.Լուծել բուժսենյակի խնդիրը;
2.Լուծել հեռախոսակապի հարցը;
3.Լուծել քննչական սենյակի խնդիրը;
4.Լուծել տեսակցության սենյակի խնդիրը:

*ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 4-ում*

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Աբովյանի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած էր 2 տեղանոց 5 խցից, քննչական սենյակից, տեսակցության սենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ն չուներ բուժսենյակ, բայց կար արկղ՝ դեղորայքով, որտեղ առկա էին ժամկետային և ժամկետանց դեղորայք: Միաժամանակ պարզվեց, որ ՁՊՎ-ի խցերի ներսում

լուսավորությունը շատ թույլ է, որի պատճառով խցերի ներսում հնարավոր չէ կարդալ կամ գրել: Քննչական սենյակը, տեսակցության սենյակը, ճաշասենյակը, զբոսահրապարակը և սանհանգույցը գտնվում էին բավարար վիճակում, միայն զուգարանում օդափոխության խնդիր կար:

Քանի որ ՁՊՎ-ի պետը տեղում չէր «երեխային տարել էր Երևան՝ բժշկի» խմբի անդամներին ոչ մի մատյան և տեղեկություն չտրամադրվեց:

## Մատյաններ

ՁՊՎ-ի մատյանները չեն տրամադրվել դիտորդական խմբին՝ պետի բացակայության պատճառով

## Առաջարկություններ

1.ՁՊՎ-ի պետի բացակայությունը չպետք է խոչընդոտ հանդիսանա դիտորդական խմբի աշխատանքները իրականացնելու համար;
2.ՁՊՎ-ն ապահովել բուժսենյակով;
3.Զուգարանի օդափոխության հարցը կարգավորել;
5.Ապահովել մեկժամյա զբոսանքը, զբոսահրապարակում տեղադրել մեկ կամ երկու քառակուսիմետրանոց ծածկ՝ արևից և անձրևներից պատսպարվելու համար և միաժամանակ ապահովել մարզական գույքով՝ մարմնամարզությամբ զբաղվելու համար:

*ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Աբովյանի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 4-ում*

Հ ա վ ե լ վ ա ծ 4

## *ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության ՁՊՎ-ների ընդհանուր նկարագիրը*

| Քաղաքը | Հրազդանի ՁՊՎ | Չարենցավանի ՁՊՎ | Նաիրիի ՁՊՎ | Աբովյանի ՁՊՎ |
|---|---|---|---|---|
| Աշխատակազմ | Պետ, 4 հերթապահ | Պետ, 4 հերթապահ | Պետ, 4 հերթապահ | Պետ, 4 հերթապահ |
| Խցերի քանակը | 7 | 3 | 4 | 5 |
| Խցերի չափերը | 4.5մx 3մ | 3մ x 5մ, 3մ x 2մ | 3մ x 2.5մ | 6.5մ x 2.5 մ |
| Պատուհանների չափերը | 0.60մ x 0.80մ | 0.70մ x 0.40մ | 0.40մ x 0.60մ | 0.80մ x 0.50մ |
| Լուսավորությունը | բավարար | **վատ** | բավարար | **ոչ բավարար** |
| Ներքին հարդարանքը | 4 խուցը՝ 2 տեղանոց, 3 խուցը՝ 1 տեղանոց, մահճակալ, վերմակ, բարձ,մատրաս,սեղան 2 նստարան,ջուրը գա-լիս էր,լվացարան,պա-հարան | 2մահճակալ, վերմակ, բարձ,մատրաս՝ **առանց սպիտակեղենի,**1սեղան,2 աթոռ ամրացված հատա-կին, մահճակալները՝ վերև-ներքև, լվացա-րան,պահարան | 1-ին, 3-րդ, 4-րդ խցե-րում՝ 1մահճակալ, 2-րդ խցում՝ 2 մահճա-կալ, վերմակ, բարձ, մատրաս | 2 մահճակալ,սեղան, 2 աթոռ՝ ամրացված հատակին, վերմակ, բարձ, մատրաս, լվա-ցարան, օդափո-խությունը՝ վատ |
| Քննչական սենյակ | սեղան, 4 աթոռ,բազ-մոց,մեկ աթոռ՝ առան-ձին, էլ.սալօջախ, շատ լուսավոր | 1 սեղան, 2 աթոռ ամրաց-ված հատակին, պատու-հան՝ դեպի ՁՊՎ-ի պետի սենյակ | **չկար** | 1 սեղան, 2 աթոռ |
| Բուժսենյակ | 2 բազմոց,1 մահճա-կալ, հեռուստացույց, լվացարան, դեղարկղ, սենյակին կից կար խորդանոց | **չկար** | **չկար** | **չկար** |
| Դեղորայք՝ ժամկետային | 1. Վալերիանա, 2.Կար-վալոլ, 3. Ցիտրամոն 4. բամբակ, 5.վիրակապ 6.շամպուն բուբիլ | 1.Բարալգին 2.Անալգին 3.Կարդիամին 4.Կելատ-րին 5. Ամիակի լուծույթ | 1.Վալիդոլ, 2.վիրակապ 3.բամբակ, 4.ներարկիչ 5.յոդ | 1.Սեդակսին 2.Ացետ-սոլ. կիսլոտա, 3.Կորվալոլ, 4. Անես-տեզոլի մոմիկ |
| Դեղորայք՝ ժամկետանց | **1.Ինդավիզին, 2. Ամ-միկու, 3.Դիքլոֆենակ** | **1.Նոշպա, 2.Անալգին, 3. Կարդիամին, 4. Գիտրո-կարտիզոն** | չկար | **1.Տետրացիկլին , 2. Լե-վոմիցիտին** |
| Տեսակցության սենյակ | 1 սեղան, 2 աթոռ, մեկ պատուհան՝ դեպի ՁՊՎ-ի պետի սենյակ | **չկար** | **չկար** | սեղան, 2 աթոռ, պահարան |
| Զուգարան | կար | վատ օդափոխությամբ | կար | վատ օդափոխությամբ |
| Լոգարան | կար | կար | կար | կար, տաք ջուր, լավ վիճակ |
| Խոհանոց | 1 սեղան, 1 աթոռ, **սնվում են մեկ անգամ** | 1 սեղան, **վատ լուսավորություն, սնվում են մեկ անգամ** | 1 սեղան, 3 աթոռ | 1 սեղան, պահարան |
| Սպասք | 5 հոգու համար | 4 հոգու համար | 5 հոգու համար | 6 հոգու համար |
| Զբոսահրապարակ | /2 տեղ/ ծածկ կար՝ 2քմ. | **ծածկ չկար** | ծածկ կար | **ծածկ չկար** |

# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Գավառի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած էր 2 տեղանոց 4 խցից, քննչական սենյակից, տեսակցության սենյակից, բուժսենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ի քննչական սենյակը կահավորված էր, իսկ բնական լուսավորությունը՝ շատ վատ: Տեսակցության սենյակում նույնպես բնական լուսավորությունը վատ էր, հեռախոս կար, բայց չէր աշխատում: Բուժսենյակը կահավորված էր, դեղորայք չկար: Զուգարանի վիճակը բավարար էր, իսկ լոգարանը չէր գործում (տես նկար 3): Խոհանոցը կահավորված էր, բայց՝ շատ խոնավ, ձերբակալված անձինք սնվում էին օրը մեկ անգամ (տես նկար 4):

Ընդհանրապես ՁՊՎ-ի մատյանները գտնվում էին բարձիթողի վիճակում:

### Մատյանների ուսումնասիրությունից պարզվեց.

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանում առկա էր 12.07.06-ին կատարված 9 գրանցում, որից 4-ը՝ նույն անձի անունով;
3.«Բուժզննության և բուժօգնության» մատյանը առկա էր, բայց գրանցումներ չկային;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը առկա էր, բայց գրանցում չկար, այն դեպքում, երբ ձերբակալվածներ եղել են;
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը բացակայում էր;
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանում առկա էր 2 գրանցում՝ 11.05.06-ին և 25.05.06-ին կատարված;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանում առկա էր 3 գրանցում;
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանը բացակայում էր;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը բացակայում էր;
10.«Սննդամթերքի» մատյանում առկա էր գրանցում՝ հաց 550գ, ճաշ-1;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը բացակայում էր;
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը բացակայում էր:

### Առաջարկություններ

1.Անհրաժեշտ է լուծել քննչական և տեսակցության սենյակների լուսավորության հարցը;
2.Շատ մեծ ուշադրություն դարձնել դեղորայքին;
3.Խոնավությունը վերացնել;
4.Ապահովել մեկժամյա զբոսանքը, անհրաժեշտ է, որ զբոսահրապարակում տեղադրվի մեկ կամ երկու քառակուսիմետրանոց ծածկ՝ արևից և անձրևներից պատսպարվելու համար և միաժամանակ ապահովել մարզական գույքով՝ մարմնամարզությամբ զբաղվելու համար:

*ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Գավառի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 5-ում*

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Մարտունու ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած էր 2 տեղանոց 3 խցից, քննչական սենյակից, տեսակցության սենյակից, բուժսենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ի խցերը կահավորված են 2 մահճակալով, 1 սեղանով, աթոռներով՝ ամրացված հատակին, վերմակ, բարձ, անձնական հիգիենայի պարագաներ, աղբարկղ, պահարան՝ 2 հատ: Քննչական սենյակը, տեսակցության սենյակը, բուժսենյակը, խոհանոցը, զբոսահրապարակը և սանհանգույցը գտնվում էին շատ լավ վիճակում: Դեղորայքի արկղում կային դեղեր, որոնց անունները և օգտագործման ժամկետները նշված չէին:

### Մատյանների ուսումնասիրությունից պարզվեց.

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանում առկա էր 25 գրանցում, որից 8-ը՝ ձերբակալված անձանց մասին;
3.«Բուժզննության և բուժօգնության» մատյանում առկա էր 5 գրանցում;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը բացակայում էր;
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը բացակայում էր;
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը առկա էր;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանում առկա էր նախաճաշի, ճաշի, ընթրիքի, զբոսանքի, քննիչի հետ հանդիպման մասին գրառումներ;
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանում առկա էր 24 գրանցում;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը բացակայում էր;
10.«Սննդամթերքի » մատյանում առկա էին գրառումներ՝ հաց 550գ., մակարոն, թեյ, կարտոֆիլ;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը բացակայում էր;
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը բացակայում էր:

### Առաջարկություն

*ՁՊՎ-ի ընդհանուր վիճակը շատ գովելի էր: ՁՊՎ-ի պետը շատ լավ գիտեր և կատարում էր իր աշխատանքը՝ առանց թերությունների: Խցերում կային ամսագրեր, գրիչ, տետր, օճառ, ատամի մածուկ, խոզանակ:*

*Ցանկալի կլիներ, որ բոլոր ՁՊՎ-ներում հանդիպեին Մարտունու ՁՊՎ-ի պետ Կ-ի նման իր աշխատանքում բանիմաց և պարտաճանաչ ղեկավարների: Ինչպես նաև նշված ՁՊՎ-ում առկա էին բոլոր անհրաժեշտ պարագաները՝ անձնական հիգիենայի համար, ինչերը մյուս ՁՊՎ-ներում իսպառ բացակայում էին:*

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Վարդենիսի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած էր 2 տեղանոց 3 խցից, քննչական սենյակից, տեսակցության սենյակից, բուժսենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ի խցերի ներսում լուսավորությունը շատ թույլ է, որի պատճառով խցերի ներսում հնարավոր չէ կարդալ կամ գրել: Քննչական սենյակը և բուժսենյակը գտնվում էին բավարար վիճակում: Դեղորայքի արկղում առկա էին ժամկետային և ժամկետանց դեղորայք: Տեսակցության սենյակում հեռախոս կար, բայց նպատակը անհայտ էր, միջնապատ պատուհանով առանձնացված չէր և նստարան չկար, էլ. լարերը վառվել էին: Սանհանգույցը բավարար վիճակում էր: Խոհանոցում առկա էր 1 սեղան, 2 աթոռ բայց լույս չկար, իսկ ձերբակալված անձինք սնվում էին օրը մեկ անգամ:

Զբոսահրապարակից կար 2-րդ ելք, որտեղից կարելի էր մտնել ոստիկանության բաժին: Խցերում փակցված չէին «Ձերբակալված անձանց իրավունքները և պարտականությունները» և «Օրակարգը»:

«Ձերբակալվածներին խցերից դուրս բերման» մատյանում գրանցվել էր միայն մեկ գրանցում՝ Ֆ. Կ.-ն 17.05.06-ին դատական նիստի տանելու մասին: Նույն անձի ձերբակալումը տեղի է ունեցել 25.03.06-ին, որը մատյանում աշխատակիցների կողմից ուղղվել է (այլ գրիչով) և դարձվել է 15.04.06: Ֆ. Կ.-ն ՁՊՎ-ում պահվել է մինչև 23.05.06-ը, որը կազմում է 42 օր: Մ. Մ.-ն ձերբակալվել է 21.08.06-ին (հետախուզման որոշման հիմքով), ազատ արձակելու և տեղափոխելու մասին ոչ մի գրառում և գրություն չկար, նրա մասին գրանցում չկար նաև «Սննդի մատյանում»: Ռ. Բ.-ն ձերբակալվել է 23.08.06-ին, տեղափոխվել է 29.08.06-ին (ոչ էտապավորման օր):

### Մատյանների ուսումնասիրքյունից պարզվեց.

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանը առկա էր;
3.«Բուժզննության և բուժօգնության» մատյանում առկա էր 3 գրանցում;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը առկա էր, բայց գրանցում չկար;
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը բացակայում էր;
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը առկա էր, բայց գրանցում չկար;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանում առկա էր 1 գրանցում;
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանը առկա էր, բայց գրանցում չկար;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը բացակայում էր;
10.«Սննդամթերքի » մատյանում կար գրառումներ՝ հաց-550գ., մակարոն-20գ, թեյ, կարտոֆիլ-550գ, բուսական յուղ, շաքարավազ-40գ;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը բացակայում էր;
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը բացակայում էր:

### Առաջարկություններ

1.Ապահովել բավարար լուսավորություն;
2.Ապահովել հեռախոսակապով;
3.Լուծել տեսակցության սենյակի աթոռների և էլ. լարերի հարցը;
4.Մեծ ուշադրություն դարձնել դեղորայքին;
5. ՁՊՎ-ն օգտագործել միայն ձերբակալված անձանց պահելու համար և չդարձնել այն ՔԿՀ;

6. ՁՊՎ-ում ձերբակալված անձանց չպահել առանձ հիմքի և անօրինականորեն (72 ժամից ավել):

*ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Վարդենիսի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 5-ում*

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Ճամբարակի ՁՊՎ-ում

2006թ. հուլիսի 12-ին ՀՀ ոստիկանության հասարակական դիտորդական խումբը այցելություն է կատարել ՀՀ Գեղարքունիքի մարզային վարչության Ճամբարակի ոստիկանության բաժնի ՁՊՎ: Այցելության ժամանակ ոստիկանության բաժնի պետը տեղեկացրեց, որ իրենց մոտ շուրջ 2,5 ամիս պահվում է անձը չպարզված մի անձնավորություն: Ոստիկանության բաժնի պետը պատմեց, որ նրան զինվորականները հայտնաբերել են ՀՀ սահմանի վրա և հանձնել են իրավապահ մարմիններին: Մինչև խմբի այցելության օրը (2006 թվականի հուլիսի 12) նշված անձը առանց որևէ իրավական հիմքի և համապատասխան ձևակերպման պահվել էր ՀՀ Գեղարքունիքի մարզային վարչության Ճամբարակի ոստիկանության բաժնի ՁՊՎ-ում: Պետի խոսքերով՝ նա արդեն երեք անգամ փորձել էր ինքն իրեն վնասել, այդ պատճառով նրան ցերեկային ժամերին տեղափոխում էին հերթապահ մասում գտնվող «խցիկը» (չափերը՝ 1,5x1,5քմ), իսկ գիշերային ժամերին՝ ՁՊՎ-ի խուց: Բացակայում էին նաև փաստաթղթեր, որի հիման վրա նա պետք է պահվեր ՁՊՎ-ում: Նրան այնտեղ պահելու փաստը ֆիքսված չէր ՁՊՎ-ի ոչ մի մատյանում, բացակայում էր անձնական գործը: Անձնական հիգիենան անմխիթար վիճակում էր, չնայած, որ պետը շեշտեց մի քանի անգամ, որ շաբաթը մեկ անգամ փոխում են նրա ներքնաշորերը: Վերը նշված փաստի կապակցությամբ խումբը գրավոր դիմել էր ՀՀ ոստիկանապետին՝ անհապաղ միջոցներ ձեռնարկելու, օրենքի կոպիտ խախտումը վերացնելու խնդրանքով: Արդյունքում, նշված անձը ՀՀ Գեղարքունիքի մարզային վարչության Ճամբարակի ոստիկանության բաժնի ՁՊՎ-ից տեղափոխվեց...: Դիտորդական խումբը գտնում է, որ նշված անձը պահվել է անմարդկային պայմաններում, ինչը ամենակոպիտ խախտումն է ինչպես ՀՀ Սահմանադրության, այնպես էլ ՀՀ կողմից վավերացված մի շարք միջազգային պայմանգրերի:

Ճամբարակի ՁՊՎ-ն բաղկացած է 2 տեղանոց 2 խցից, քննչական սենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ որպես քննչական սենյակ օգտագործվում է ՁՊՎ-ի հերթապահի սենյակը, որը գտնվում էր ՁՊՎ-ից դուրս: Բուժսենյակ և տեսակցության սենյակ չկար: Դեղորայքի արկղում առկա էին ժամկետային և ժամկետանց դեղորայք: Սանհանգույցը գտնվում էր հակասանիտարական, հին սալիկապատ, անմխիթար վիճակում (տես նկարներ 5, 6, 7): Խոհանոցը կահավորված էր բավարար, սակայն ձերբակալված անձինք ամբողջ օրվա ընթացքում սնվում էին մեկ անգամ:

«Ձերբակալված և կալանավորված անձանց հաշվառման» մատյանում կային գրանցումներ, որոնցից երևում էր, որ ձերբակալված և կալանավորված անձանց, առանց որոշումների (հիմքի), պահել են 7-ից մինչև 30 օր:

### Մատյանների ուսումնասիրքյունից պարզվեց.

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանը առկա էր;
3.«Բուժզննության և բուժօգնության» մատյանում առկա էր 7 գրանցում;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը բացակայում էր;
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը բացակայում էր;
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանում առկա էր մեկ գրանցում՝ կատարված 24.05.05-ին;

7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանը բացակայում էր;
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանը առկա էր, բայց գրանցում չկար;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը բացակայում էր;
10.«Սննդամթերքի» մատյանում առկա էր գրանցում՝ հաց-550գ, մակարոն-20գ, բուսական յուղ-20գ, կարտոֆիլ, թեյ, ծավարեղեն-120գ, շաքարավազ-40գ;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը բացակայում էր;
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը բացակայում էր:

## Առաջարկություններ

1.ՁՊՎ-ն ապահովել բուժսենյակով;
2.Լուծել տեսակցության և քննչական սենյակների հարցը;
3.Շատ մեծ ուշադրություն դարձնել սանհանգույցին;
4.Ապահովել երեքանգամյա սնունդը;
5.ՁՊՎ-ն ընդհանուր վերանորոգման կարիք ունի;
6.Մեծ ուշադրություն դարձնել դեղորայքին;
7.ՁՊՎ-ն օգտագործել միայն ձերբակալված անձանց պահելու համար և չդարձնել այն ՔԿՀ;
8. ՁՊՎ-ում ձերբակալված անձանց չպահել առանձ հիմքի և անօրինականորեն (72 ժամից ավել):

*ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության ճամբարակի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 5-ում*

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Սևանի ՁՊՎ-ում

Սևանի ՁՊՎ-ի առաջին այցելության ժամանակ՝ 2006 թվականի հուլիսի 12-ին, ժամը 16:00-ի սահմաններում, խմբի անդամներին հերթապահ մասում հայտնեցին, որ ՁՊՎ-ն արդեն 2,5 տարի է չի գործում: Այն հարցին, թե ինչու չի գործում ՁՊՎ-ն, բաժնի հերթապահը պատասխանեց, որ. «կա հրաման» (թե ինչ հրաման և ում կողմից տրված՝ հայտնի չէր): Խմբի անդամները ցանկացան ծանոթանալ հրամանին, բայց հերթապահ մասի աշխատակիցը ասաց, որ այն պետի մոտ է, իսկ պետը տեղում չէ: Վերը շարադրված փաստերից ելնելով՝ խումբը նամակով դիմեց ՀՀ ոստիկանություն, որտեղից ստացավ պաշտոնական պատասխան այն մասին, որ Գեղարքունիքի մարզային ոստիկանության Սևանի բաժնի ՁՊՎ-ն գործում է, որից հետո կրկին անգամ կատարվեց այցելություն նշված ՁՊՎ. արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ն գործում է:

ՁՊՎ-ն բաղկացած է 4 խցից, որոնցից 3-ը՝ 2 տեղանոց, 1-ը՝ առանց մահճակալի, քննչական սենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ի խցերի ներսում լուսավորությունը շատ թույլ էր, որի պատճառով խցերի ներսում հնարավոր չէր նույնիսկ մարդկանց դեմքերը տարբերել: Քննչական սենյակը գտնվում եր անմխիթար վիճակում, որտեղից դուռ էր բացվում դեպի զբոսահրապարակ, որի մակերեսը մոտավորապես 3քմ էր: Դիտարկման արդյունքում միաժամանակ պարզվեց, որ ՁՊՎ-ն չունի տեսակցության սենյակ, բուժսենյակ, դեղորայք, լոգարան, սպասք: Խոհանոցում ընդհանրապես լույս չկար, և սնվում էին խցերում օրը մեկ անգամ: Զուգարանը ոչ թե հակասանիտարական վիճակում էր, այլ՝ օգտագործման ենթակա չէր:

Դիտորդական խմբի անդամները հարցազրույց անցկացրին ոստիկանության բաժնի պետի և հերթապահի հետ և տեղեկացան, որ ՁՊՎ-ն չունի իր առանձին հաստիքը, այլ ՁՊՎ-ի աշխատանքները կատարում են ոստիկանության բաժնի տվյալ օրվա հերթապահի օգնականները: ՁՊՎ-ի պետը բացակայում էր ՁՊՎ-ից, այդ պատճառով էլ, ոստիկանության

բաժնի հերթապահը չկարողացավ տրամադրել մատյանները և չկարողացավ պատասխանել խմբին տրամադրած միակ, «Սննդի մատյան»-ի ուսումնասիրման արդյունքում ծագած հարցերին:

Կալանավորված Ա. Գ.-ն և Վ. Կ.-ն, ըստ Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալ Ա. Չ.-ի գրության, 09.08.06-ից մինչև 16.08.06-ը պահել էին ՁՊՎ-ում, սակայն մինչ այդ նրանք ՁՊՎ-ում պահվել էին ևս 7-օր: Շատ կարևոր է նշել, որ նշված անձինք ՁՊՎ-ում պահվել են անօրինականորեն, ինչը ինչպես ՀՀ Սահմանադրության, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերի խախտում է:

## Մատյանների ուսումնասուրթյունից պարզվեց

1.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանը առկա էր;
2.«Սննդամթերքի» մատյանը առկա էր:

## Առաջարկություններ

Կարծում ենք, որ նման պայմաններում մարդկանց պահելը կարելի է գնահատել որպես անմարդկային վերաբերմունքի դրսևորում և գտնում ենք, որ ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Սևանի ՁՊՎ-ի հետագա շահագործումը ենթակա է դադարեցման:

*ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Սևանի ԶՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 5-ում*

Հ ա վ ե լ վ ա ծ 5

***ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության ԶՊՎ-ների ընդհանուր նկարագիրը***

| Քաղաքը | *Գավառի ԶՊՎ* | *Մարտունու ԶՊՎ* | *Վարդենիսի ԶՊՎ* | *Ճամբարակի ԶՊՎ* | *Սևանի ԶՊՎ-ի* |
|---|---|---|---|---|---|
| Աշխատակազմ | Ժետ, 4 հերթապահ | Ժետ, 4 հերթապահ | Պետ, 4 հերթապահ | Պետ, 4 հերթապահ | Պետ, 4 հերթապահ |
| Խցերի քանակը | 4 | 3 | 3 | 2 | 4 |
| Խցերի չափերը | 3.5մx3մ | 3մx6մ | 3.5մx4.5մ և 4.5մx2մ | 2.5մx2.5մ | 4մx3մ |
| Պատուհանների չափերը | 1.20մx0.80մ | 0.60մx0.80մ | 0.80մx0.70մ | 0.50մx0.80մ | 0.50մx0.25մ |
| Լուսավորությունը | լավ | բավարար | **վատ** | բավարար | **չկար** |
| Ներքին հարդարանքը | 2 մահճակալ, աթոռներ՝ ամրացված հատակին, վերմակ, բարձ, մատրաս | մահճակալ,սեղան,աթոռներ՝ ամրաց-ված հատակին, վեր մակ, բարձ, անձնա կան հիգենայի պա-րագաներ,աղբարկղպահարան՝ 2հատ | 2 մահճակալ, սեղան, աթոռներ՝ ամրացված հատակին, վերմակ, բարձ, մատրաս | մահճակալ, սե-ղան, 1աթոռ՝ ամրացված հա-տակին, վերմակ, բարձ, մատրաս | **մեկ խուցը՝ առանց մահճակալի,** մնացածում՝ 2 մահճակալ |
| Քննչական սենյակ | 1 սեղան, 2 աթոռ՝ ամրաց-ված հատակին, **բնական լուսա-վորություն չկար** | 1 սեղան, 2աթոռ | 1 սեղան, 2աթոռ | 1 սեղան, 2 աթոռ /ԶՊՎ-ից դուրս էր/ | **կահավորանքը չէր համապա-տասխանում** |
| Բուժսենյակ | 2 մահճակալ, 1 սեղան, 2 աթոռ՝ ամրացված հատակին | մահճակալ, սեղան, արկղ, լվացարան, սրբիչ, պահարան՝ դեղամիջոցներով, | մահճակալ, սեղան, աթոռ, լուսավոր | **չկար** | |
| Դեղորայք՝ ժամկետային | **չկար** | 1. Լեվոմիցիտին, 2. ներարկիչ, 3. Վալե-րիանա, 4. էկստ-ռակտ, 5. Բիսեպ-տոլ, 6.բամբակ | 1.Պարացետամոլ, 2. ներարկիչ, 3.Տետ-րացիկլին, 4.Դիմեդ-րոլ, 5.Ցետրամոն 6.բամբակ | 1. Վալիդոլ 2. յոդ, 3.Պարացե-տամոլ, 4. վի-րակապ | **չկար** |
| Դեղորայք՝ ժամկետանց | չկար | **կայն դեղի տուփեր, որոնց վրա նշված չէին անվանումները և ժամկետները** | **1. Անալգին, 2. Վալե-րանա, 3. Տեմպալ-գին, 4. Գենտամիցին** | **1. Վալոկարդին, 2.Անալգին** | չկար |
| Տեսակցության սենյակ | **բնական լուսա-վորություն չկար, հեռախոսը չէր աշխատում** | սեղան, նստարան, լուսավոր | **հեռախոս կար, բայց նպատակը՝ անհայտ, ցանցե միջնապատ, նստարան չկար, էլ.լարերը վառվել էին** | չկար | չկար |
| Զուգարան | կար | կար , լավ | կար | **հակասանիտա-րական վիճա-կում, հին սալի-կապատ** | **հակասանիտա-րական վիճակում** |
| Լոգարան | ջրի բաք,լվացա-րան, սալիկա-պատ՝ նորմալ վիճակում, **չէր գործում** | կար , լավ | կար | **հակասանիտա-րական վիճա-կում, հին սալի-կապատ** | **չկար** |
| Խոհանոց | 1 սեղան, 2 աթոռ, **սնվում են օրը 1 անգամ, շատ խոնավ** | կար, սնվում են օրը 3 անգամ | 1 սեղան, 2 աթոռ, **լուսավորություն չկար, սնվում են օրը 1անգամ,** | էլ. սալիկ,սեղան, լվացարան, աթ-ոռ, պահարան, **սնվում են օրը 1անգամ,** | **լուսավորություն չկար, սնվում են խցերում՝ օրը 1 անգամ,** |
| Սպասք | 8 հոգու համար | 7 հոգու համար | 5 հոգու համար | 4 հոգու համար | **չկար** |
| Զբոսահրապարակ | **ծածկ չկար** | **ծածկ կար՝ 6մ x12մ** | **առանձին դուռ ուներ դեպի բաժին, ծածկ չկար** | **ծածկ չկար** | **1.5մ x 2մ ծածկ չկար** |

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

### Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած է չորս երկտեղանոց խցերից, քննչական սենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ի խցերի ներսում լուսավորությունը շատ թույլ է, որի պատճառով խցերի ներսում հնարավոր չէ կարդալ և գրել: Խցերը կահավորված էին 2 մահճակալով, սպիտակեղենով, սեղանով, 2 նստարանով, սպասքով, զուգարանի թղթով, գրչով և ամսագրերով: Քննչական սենյակը, խոհանոցը, սանհանգույցը և զբոսահրապարակը գտնվում էին շատ լավ վիճակում: Բուժսենյակ չկար, սակայն, ՁՊՎ-ի աշխատակիցների խոսքերով, ՁՊՎ ընդունելվուց ձերբակալված անձինք պարտադիր բուժզննության են ենթարկվում՝ բժշկի կողմից: Առկա էր դեղորայքի արկղ, որտեղ պահվում էր միայն ժամկետային դեղորայք:

Աշխատակիցների հետ ունեցած զրույցից պարզ դարձավ, որ ձերբակալվածների հարազատների հետ տեսակցությունները անցնում են հեթապահի սենյակում:

«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանում առկա էին գրանցումներ, որոնցից պարզ երևում էր, որ ձերբակալված անձինք պահվել են ՁՊՎ-ում 72 ժամից ավել, իսկ կալանավորված անձինք՝ առանց համապատասխան որոշումների, որը ինչպես ՀՀ Սահմանադրության այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերի խախտում է:

#### Մատյանների ուսումնասիրությունից պարզվեց.

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանը առկա էր, որտեղ վերջին գրանցումը կատարված էր 26.07.06-27.07.06-ը;
3.«Բուժզննության և բուժօգնության» մատյանում առկա էր ընդամենը 15 գրանցում, վերջինը՝ 14.07.06-ին
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը բացակայում էր;
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը բացակայում էր;
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը առկա էր, վերջին գրանցումը կատարված էր 27.07.06-ին;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանում առկա էր 57 գրանցում, վերջինը՝ 27.07.06-ին;
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանում առկա էր 5 գրանցում, բոլորը՝ միևնույն անձի վերաբերյալ:
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը բացակայում էր;
10.«Սննդամթերքի» մատյանում առկա էր 90 գրանցում, որոնք կրկնվում էին հետևյալ տեսականիով՝ հաց, թթվասեր, ձու, պանիր;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը բացակայում էր;
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների գրանցման» մատյանը բացակայում էր:

#### Առաջարկություններ

1.ՁՊՎ-ն ապահովել բուժսենյակով;
2.Լուծել լուսավորության հարցը;
3.Լուծել տեսակցության սենյակի խնդիրը;
4. ՁՊՎ-ում ձերբակալված անձանց չպահել առանձ հիմքի և անօրինականորեն (72 ժամից ավել);
5. ՁՊՎ-ն օգտագործել միայն ձերբակալված անձանց պահելու համար և չդարձնել այն ՔԿՀ:

*ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 6-ում*

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Տավուշի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած է 2 տեղանոց 2 խցից, քննչական սենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ի խցերի ներսում լուսավորությունը շատ թույլ է, որի պատճառով խցերի ներսում հնարավոր չէ կարդալ կամ գրել: Խցերում չորս մահճակալից միայն մի մահճակալի վրա էր առկա սպիտակեղեն: Խոհանոցը գտնվում էր անմխիթար վիճակում (տես նկար 8): Քննչական սենյակը չէր համապատասխանում ընդունված չափանիշներին, որովհետև տարանցիկ էր, այդտեղով էին դուրս գալիս զբոսահրապարակ: Տեսակցության սենյակ, բուժսենյակ և դեղորայք չկար: Սանհանգույցը գտնվում էր հակահիգիենիկ, անմխիթար վիճակում (տես նկար 9, 10):

«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանի ուսումնասիրությունից պարզվեց, որ Մ. Ա.-ն 14.04.06-ին ձերբակալվել է, 17.04.06-ին կալանավորվել և ՁՊՎ-ում պահվել մինչև 26.04.06-ը՝ առանց գրության:

Ա. Զ.-ն մեր այցելության ժամանակ պահվում էր ՁՊՎ-ում: Նա ասաց, որ ստացել է հանձնուք, սակայն «Հանձնուքների հաշվառման» մատյանում իր անվամբ որևէ գրանցում չկար: Չկար նաև «Սննդի մատյան», որտեղ հնարավոր կլիներ գրանցում կատարել սնունդ տրամադրելու մասին: 14:00-ի սահմաններում դեռ նրան սնունդ չէր տրամադրվել:

«Բուժզննություն կամ բուժօգնություն» մատյանի ուսումնասիրությունից պարզվեց, որ Ա. Հ.-ն 13.01.06-ին և 17.01.06-ին տեղափոխվել է հիվանդանոց, սակայն «Խցերից դուրս բերելու» մատյանում այդ մասին որևէ գրանցում չկար:

### Մատյանների ուսումնասիրքյունից պարզվեց.

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանում առկա էր 2006թվականի ընթացքում կատարված 21 գրանցում, վերջինը՝ ձերբակալման որոշում 08.08.06-ին, կալանավորման որոշումը՝ 11.08.06-ին;
3.« Բուժզննության և բուժօգնության» մատյանը առկա էր;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը բացակայում էր;
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը բացակայում էր;
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը առկա էր;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանը առկա էր;
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանում առկա էր 2006թվականի ընթացքում կատարված 11 գրանցում;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը բացակայում էր;
10.«Սննդամթերքի» մատյանը առկա էր. մեզ հայտնեցին, որ ինչ ցանկանում են այն էլ ձեռք են բերում խանութից՝ 450 դրամ արժողությամբ;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը բացակայում էր;
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների,դիմումների և բողոքների» մատյանը բացակայում էր:

### Առաջարկություններ

**Կարծում ենք, որ նման պայմաններում մարդկանց պահելը կարելի է գնահատել որպես անմարդկային վերաբերմունքի դրսևորում:**

*ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Տավուշի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 6-ում*

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած է 5 խցից, խցերից 2-ը՝ 1 տեղանոց, 3-ը՝ 2 տեղանոց, քննչական սենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ն չուներ ո՛չ տեսակցության սենյակ, ո՛չ բուժսենյակ, ո՛չ էլ՝ դեղորայք: Առկա էր քննչական սենյակը, խոհանոցը, զբոսահրապարակը և սանհանգույցը, որոնք գտնվում էին շատ լավ վիճակում: Առկա էր օդափոխության համակարգ:

ՁՊՎ աշխատակիցները թույլ չէին տալիս առանձին զրուցել ՁՊՎ-ում պահվող անձանց հետ, պատճառաբանելով, որ իրենք ի պաշտոնե պարտավոր են տեսնել և լսել խցում կատարվելիքը:

Ըստ Հ. Բ.-ն խոսքերի՝ նա ամեն օր (11.08.06-ից սկսված) մինչև 16.08.06-ը ստացել է հանձնուք, սակայն «Հանձնուքների հանձնման» մատյանում, որևէ գրանցում չկար դրա վերաբերյալ: Նույնը կատարվել է Ա. Վ.-ն և Հ. Ա.-ն հետ:

Ձերբակալվածներ Հ. Բ.-ն և Վ. Ա.-ն 11.08.06-ից պահվում էին մինչև 16.08.06-ը ՁՊՎ-ում՝ առանց որևէ իրավական հիմնավորման: Ա. Հ.-ն ձերբակալվել է 05.08.06-ին: Կալանավորվել է 08.08.06-ին, սակայն մինչև դիտորդական խմբի այցը՝ 16.08.06-ը, պահվում էր ՁՊՎ-ում՝ առանց հիմքերի:

### Մատյանների ուսումնասիրությունից պարզվեց.

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանը առկա էր;
3.«Բուժզննության և բուժօգնության» մատյանը առկա էր;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը բացակայում էր;
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանում առկա էր 5 հոգու մասին գրանցում;
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը առկա էր;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանը առկա էր;
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանում առկա էր 14 գրանցում 2006թվականի ընթացքում, որից 10-ը նույն անձին էր վերաբերում, իսկ վերջին գրանցումը 08.05.06-ին էր;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը բացակայում էր;
10.«Սննդամթերքի» մատյանում առկա էր գրանցում՝ 450գ հաց, ճաշ՝ 1 բաժին;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը բացակայում էր;
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը բացակայում էր:

### Առաջարկություններ

1. ՁՊՎ-ն ապահովել բուժսենյակով;
2. ՁՊՎ-ն ապահովել տեսակցության սենյակով;
3. Շատ մեծ ուշադրություն դարձնել դեղորայքին;
4.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանում նշումները կատարել պատշաճ կերպով, նշել հանձնուքի ընդունման ժամանակը;
5. ՁՊՎ-ն օգտագործել միայն ձերբակալված անձանց պահելու համար և չդարձնել այն ՔԿՀ;
6. ՁՊՎ-ում ձերբակալված անձանց չպահել առանց հիմքի և անօրինականորեն (72 ժամից ավել):

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած էր 2 տեղանոց 5 խցից, քննչական սենյակից, բուժսենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ի խցերի և քննչական սենյակի ներսում լուսավորությունը շատ թույլ է, որի պատճառով խցերի ներսում հնարավոր չէ կարդալ կամ գրել: Տեսակցության սենյակ չկար, «ձերբակալվածների տեսակցություն» մատյանում որևէ նշում չկար կատարված: Բուժսենյակը շատ լուսավոր էր, առկա էր սեղան, լվացարան, պահարան դեղորայք, որտեղ բոլոր դեղամիջոցները ժամկետային էին: Զուգարանի դուռն ամբողջովին թափանցիկ էր, լոգարան չկար, ճաշասենյակում առկա էր միայն մեկ սեղան՝ առանց աթոռների:

«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանի ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ Ս. Ս.-ն 29.05.06-ից մինչև 07.06.06-ը պահվել է ՁՊՎ-ում՝ ձերբակալման որոշումով: Ռ. Գ.-ն՝ 6 օր պահվել է, որպես կալանավոր՝ առանց որոշման և որևէ հիմնավորումների: Մ. Ա.-ն՝ 14.06.06-ից մինչև 21.06.06-ը պահվել է որպես կալանավորված անձ՝ առանց գրության: Ա. Չ.-ն՝ 27.07.06-ից մինչև 31.07.06-ը, որպես ձերբակալված անձ, պահվել է ՁՊՎ-ում, «Սննդի մատյան»-ում իր անունով գրանցում չկար: Մեզ համար պարզաբանեցին, որ նա տեղափոխվել է հիվանդանոց, բայց «Խցերից դուրս բերելու» մատյանում նրա անունով հիվանդանոց տեղափոխելու մասին գրանցում չկար, սակայն կար զբոսանքի տանելու մասին գրանցում՝ նույն ժամանակահատվածում: Վերջում ոստիկանության բաժնի պետը տեղեկացրեց, որ նա իր ազգականն է: Անօրինական պահման նշված դեպքերը խոսում են ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի խախտման մասին, ըստ որի, եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման:

### Մատյանների ուսումնասիրքյունից պարզվեց.

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանում առկա էր 17 գրանցում, վերջինը՝ 27.07.06-ից 31.07.06-ը;
3.«Բուժզննության և բուժօգնության» մատյանում առկա էր 6 գրանցում, որից 5-ը՝ նույն անձի անունով (05.01.06-10.01.06);
4.«Հարազատներին հայտնելու» մատյանում առկա էր 6 գրանցում, վերջինը 15.06.06-ին;
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը բացակայում էր;
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանում առկա էր 2006 թվականի ընթացքում կատարված 16 գրանցում, բոլորը կատարված է Ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի պետի ծառայողական գծով տեղակալ, ոստիկանության մայոր Ա. Ա. կողմից՝ «թերություններ չկան», վերջինը՝ 12.07.06-ին;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանը առկա էր;
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանում առկա էր 4 գրանցում;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանում ոչ մի գրանցում չկար;
10«Սննդամթերքի» մատյանը առկա էր, որտեղ թվարկված էին հետևյալ սննդատեսակները՝ հաց - 550 գ, մակարոն - 120 գ, շաքար - 40 գ, թեյ- 1 բաժակ, կարագ- 45 գ;
11«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանում առկա էր 2006 թվականի ընթացքում կատարված 3 գրանցում;
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը բացակայում էր:

### Առաջարկություններ

1.Լուծել լուսավորության խնդիրը;
2.Ապահովել հեռախոսակապով;
3.Լուծել տեսակցության սենյակի հարցը;
4.Ճաշարանում տեղադրել աթոռներ;
5.Լուծել լոգարանի հարցը;
6.Փոխել զուգարանի դուռը (թափանցիկ է);
7. ՁՊՎ-ում ձերբակալված անձանց չպահել առանձ հիմքի և անօրինականորեն (72 ժամից ավել):

Հավելված 6

***ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության ՁՊՎ-ների ընդհանուր նկարագիրը***

| Քաղաքը | *Դիլիջանի ՁՊՎ* | *Տավուշի ՁՊՎ* | *Իջևանի ՁՊՎ* | *Նոյեմբերյանի ՁՊՎ* |
|---|---|---|---|---|
| Աշխատակազմ | Պետ,<br>4 հերթապահ | Պետ,<br>4 հերթապահ | Պետ,<br>4 հերթապահ | Պետ,<br>4 հերթապահ |
| **Խցերի քանակը** | 4 | 2 | 5 | 3 |
| **Խցերի չափերը** | 3.5մx2.5մ | 3մx4մ | 4 խուցը՝ 3 մx3,5մ<br>1 խուցը՝ 4մx3մ | 3մx4մ |
| Պատուհանների չափերը | 0.60մx0.80մ | 0.50մx0.80մ | 0.80մx0.60մ | 1.0մx0.50մ |
| **Լուսավորությունը** | ոչ բավարար | վատ | բավարար | ***ոչ բավարար*** |
| **Ներքին հարդարանքը** | 2 մահճակալ, սպի-տակեղեն, սպասք, զուգ. թուղթ, գրիչ, ամսագրեր, սեղան, 2 նստարան | 2 մահճակալ, ***միայն մեկի վրա էր առկա սպիտակեղեն*** | խցերից 2-ը 1 տեղանոց էր, 3-ը՝ 2 տեղանոց, լվա-ցարան. ջուրը գալիս էր, սեղան, նստարան,աղբա-ման, մահճակալ,սպիտա-կեղեն, օդափոխություն կար | 2 մահճակալ, ծածկոց, բարձ, սեղան, 2 նստա-րան, սպիտակեղեն,լվա-ցարան, ջուրը՝ գրաֆի-կով |
| **Քննչական սենյակ** | կար<br>սեղան, 2 աթոռ | 1 սեղան, 2 աթոռ՝ ամրացված հատա-կին, ***որտեղից դուրս էին գալիս զբոսա-հրապարակ*** | 1 սեղան, 2 աթոռ | ***բնական լուսավորու-թյունը շատ թույլ, էլ. լամպով լուսավորու-թյուն, հեռախոսը չէր աշխատում, սեղան, 2 աթոռ*** |
| **Բուժսենյակ** | ***չկար*** | ***չկար*** | ***չկար*** | շատ լուսավոր, սեղան, լվացարան,պահարան՝ դեղորայքով |
| **Դեղորայք՝ ժամկետային** | 1.բամբակ, 2.վիրա-կապ, 3. ներարկիչ, 4.սպիրտ | ***չկար*** | ***չկար*** | 1.էքստրատ, 2. Վալե-րիանա, 3.յոդ, 4. բժշկա-կան սպիրտ, 5. ամյակի լուծույթ, 6.Տետրացիկ-լին, 7.վիրակապ, 8.բամ-բակ |
| **Դեղորայք՝** | չկար | չկար | չկար | չկար |
| **Տեսակցության սենյակ** | *չկար*<br>***հերթապահի սենյա-կում են անցնում տե-սակցությունները*** | ***չկար*** | ***չկար*** | *չկար*<br>***Ձերբակալվածների տե-սակցություն» մատյա-նում որևէ նշում չկար:*** |
| **Զուգարան** | շատ մաքուր | ***շատ վատ վիճակում էր*** | կար<br>շատ լավ վիճակում էր | ***դուռն ամբողջովին թափանցիկ էր*** |
| **Լոգարան** | շատ մաքուր, սալի-կապատ, տաք ջուր | ***շատ վատ վիճակում էր*** | լոգարանը մեծ և լավ վիճակում էր | ***չկար*** |
| **Խոհանոց** | կար | նստարան,սեղան,պա հարան, ճաշի ժամե-րին բերում են ճաշա- | սեղան, 2 աթոռ, էլ. սալօջախ | սեղան,<br>***աթոռներ չկար*** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | րան | | |
| Սպասք | 5 անձի համար, ճաշում են ճաշարանում | 4 անձի համար | 8 անձի համար նախա-տեսված, ճաշում են ճա-շարանում օրը 3 անգամ | 4 անձի համար |
| Զբոսահրապարակ | կար | *ծածկ չկար* | *ծածկ չկար* | *ծածկ չկար* |

# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի ՁՊՎ-ում

Վանաձորի ՁՊՎ-ն վերջերս է վերանորոգվել և բարվոք վիճակում է: ՁՊՎ-ն բաղկացած էր 2 տեղանոց 4 խցից, քննչական սենյակից, զբոսահրապարակից և տեսակցության սենյակից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ի խցերի ներսում լուսավորությունը շատ թույլ է, որի պատճառով խցի ներսում հնարավոր չէ կարդալ կամ գրել: ՁՊՎ-ի տեսակցության սենյակը նույնպես չի համապատասխանում ընդունված չափանիշներին, որովհետև սենյակը բաժանված կամ առանձնացված չէր պատուհանով և պատշաճ կահավորված չէր՝ ազգականի կամ փաստաբանի հետ հանդիպելու համար: Բուժկետում ստուգված դեղորայքի մի մասը ժամկետանց էր: ՁՊՎ-ի սանհանգույցը չէր գործում: Զբոսահրապարակը չէր համապատասխանում ընդունված չափանիշներին, որովհետև սահմանված ծածկ և նստատեղ չկար:

Դիտորդական խմբի անդամները հարցազրույց անցկացրեցին Վանաձորի ՁՊՎ-ի պետ Գ. Ն.-ի հետ, որի արդյունքում պարզվեց, որ ձերբակալված անձինք ՁՊՎ ընդունման ժամանակ բժշկական զննման չեն ենթարկվում, այլ՝ ՁՊՎ-ի օրվա հերթապահի կողմից ուղղակի ենթարկվում են արտաքին զննության:

Ինչպես նաև անդրադարձ կատարվեց ձերբակալված անձանց սննդի ապահովման ցավոտ խնդրին: Զրույցի, ինչպես նաև սննդի մատյանի ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ ձերբակալված անձանց կերակրում են ամբողջ օրվա ընթացքում մեկ անգամ՝ երեք անգամվա փոխարեն: Ըստ ՁՊՎ-ի պետի՝ մեկ ձերբակալված անձի համար ամբողջ օրվա կտրվածքով ստանում են 450 դրամ արժողությամբ մթերք, որը չի բավականացնում օրվա երեքանգամյա սնունդ ապահովելու համար: Ըստ «Ձերբակալվածներին պահելու վայրերում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու նվազագույն չափաբաժինները սահմանելու» մասին ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 15-ի որոշման՝ սահմանված սննդամթերքի ցանկի նվազագույն չափաբաժինների ապահովումը հնարավոր չէ 450 դրամի սահմաններում:

Այցելության պահին ՁՊՎ-ում պահվում էր մեկ ձերբակալված անձ, որի հետ խմբի անդամներն առանձնազրույց ունեցան և ներկայացրեցին ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի գործունեության նպատակները և խնդիրները: Նշված ձերբակալված անձը բողոքներ, առաջարկություններ չուներ, սակայն խնդրեց, որ հոգեբան հրավիրեն, քանի որ ինքը հոգեբանի կարիք ուներ: Ձերբակալված անձի խնդրանքը դիտորդական խմբի անդամների կողմից փոխանցվեց ՁՊՎ-ի պետին, որը խոստացավ Վանաձորի նեվրոհոգենյարդաբանական դիսպանսերից մասնագետ հրավիրել:

ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի անդամները հանդիպել են դատապարտյալ Ա. Ս.-ին, որը պնդում էր, որ Վանաձորի ՁՊՎ-ում պահվելու ընթացքում 2005 թվականի սեպտեմբերի 25-29-ը ՀՀ Լոռու մարզի Վանաձորի ոստիկանության բաժնի քրեական հետախուզության օպերատիվ աշխատակիցների և իր գործը վարող Լոռու մարզի դատախազության քննիչի կողմից դաժան ծեծի է ենթարկվել: Նշված դեպքի մասին Ա. Ս.-ն հայտարարություն է արել իր քրեական գործով դատաքննության ժամանակ՝ ՀՀ դատական բոլոր ատյաններում, այն է՝

Լոռու մարզի առաջին ատյանի դատարանում, ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանում, այնուհետև ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատում: Սակայն նշված դեպքով ոչ մի տեսակի քննություն չի կատարվել:

**Մատյանների ուսումնասիրություններից պարզվեց.**

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման»
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման»
3.« Բուժզննության և բուժօգնության»
4.«Հարազատներին հայտնելու»
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ»
6.«Դիտողությունների և առաջարկությունների»
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու»
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման»
9.«Տեսակցությունների գրանցման»
10«Սննդամթերքի մատյան »
11«Ձերբակալվածների հեռախոսազանգերի»
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների,դիմումների և բողոքների»

**Առաջարկություններ**

1.Ապահովել բավարար լուսավորություն;
2.Վերացնել սանհանգույցի վքարները;
3.Ապահովել մեկժամյա զբոսանքը, զբոսահրապարակում տեղադրել ծածկ` արևից և անձրևներից պաշտպանվելու համար;
4.Ուշադրություն դարձնել բաժիններից բերված ձերբակալված անձանց վիճակի վրա և արձանագրել բոլոր վնասվածքները;
5.Բացահայտել և օրենքի ամբողջ խստությամբ պատժել ձերբակալված անձանց ծեծի ենթարկող աշխատակիցներին;

*ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 7 –ում*

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Սպիտակի ՁՊՎ-ում

Սպիտակի ՁՊՎ-ն վերջերս է վերանորոգվել և բարվոք վիճակում է: ՁՊՎ-ն բաղկացած է 2 տեղանոց 3 խցից, քննչական սենյակից, բուժկետից, զբոսահրապարակից և տեսակցության սենյակից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ի խցերի ներսում լուսավորությունը շատ թույլ է, որի պատճառով խցի ներսում հնարավոր չէր կարդալ կամ գրել: ՁՊՎ-ի քննչական սենյակը չի համապատասխանում ընդունված չափանիշներին, որովհետև քննչական սենյակի երեք աթոռներից միայն մեկն էր ամրացված հատակին: ՁՊՎ-ի սանհանգույցը բարվոք վիճակում էր: Զբոսահրապարակը չէր համապատասխանում ընդունված չափանիշներին, որովհետև չնայած առկա էր սահմանված ծածկը, սակայն նստատեղ չկար:

Դիտորդական խմբի անդամները հարցազրույց անցկացրեցին Սպիտակի ՁՊՎ-ի պետ Գարեգին Պապիկյանի հետ, որի արդյունքում պարզվեց, որ ձերբակալված անձինք ՁՊՎ ընդունման ժամանակ բժշկական զննության չեն ենթարկվում, այլ` ՁՊՎ-ի օրվա հերթապահի կողմից ուղղակի ենթարկվում են արտաքին զննության:

Ինչպես նաև անդրադարձ կատարվեց ձերբակալված անձանց սննդի ապահովման ցավոտ խնդրին: Զրույցի, ինչպես նաև սննդի մատյանի ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ ձերբակալված անձանց կերակրում են ամբողջ օրվա ընթացքում մեկ անգամ՝ երեք անգամվա փոխարեն: Ըստ ՁՊՎ-ի պետի՝ մեկ ձերբակալված անձի համար ամբողջ օրվա կտրվածքով ստանում են 450 դրամ, որը չի բավականացնում օրվա երեքանգամյա սնունդ ապահովելու համար: Ըստ «Ձերբակալվածներին պահելու վայրերում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու նվազագույն չափաբաժինները սահմանելու» մասին ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 15-ի որոշման՝ սահմանված սննդամթերքի ցանկի նվազագույն չափաբաժինների ապահովումը հնարավոր չէ 450 դրամի սահմաններում:

### Մատյանների ուսումնասիրթյունից պարզվեց.

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման»
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման»
3.« Բուժզննության և բուժօգնության»
4.«Հարազատներին հայտնելու»
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ»
6.«Դիտողությունների և առաջարկությունների»
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու»
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման»
9.«Տեսակցությունների գրանցման»
10«Սննդամթերքի մատյան»
11«Ձերբակալվածների հեռախոսազանգերի»
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների,դիմումների և բողոքների»

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի ՁՊՎ-ում

Տաշիրի ՁՊՎ-ն վերջերս սկսել էին վերանորոգել, սակայն անհայտ պատճառներով վերանորոգման աշխատանքները կիսատ են թողնվել: ՁՊՎ-ի պետ Ա. Շ.-ի պնդմամբ՝ վերանորոգման աշխատանքները կիսատ են թողնվել և իրենք չգիտեն, թե երբ կվերսկսվի այն: ՁՊՎ-ն բաղկացած է 1 տեղանոց 3 խցից, քննչական սենյակից, զբոսահրապարակից, խոհանոցից և տեսակցության սենյակից:

ՁՊՎ-ում փակցված չէր և չկար ՀՀ ոստիկանության պետի 2005 թվականի հունվարի 14-ի թիվ 1 Ն հրամանը՝ ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի կարգը՝ խմբի անդամների ցուցակով: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ի խցերի ներսում լուսավորությունը շատ թույլ է, որի պատճառով խցի ներսում հնարավոր չէր կարդալ կամ գրել: ՁՊՎ-ի քննչական սենյակը չի համապատասխանում ընդունված չափանիշներին, որովհետև քննչական սենյակում աթոռները ամրացված չէին հատակին: ՁՊՎ-ի տեսակցության սենյակը նույնպես չի համապատասխանում ընդունված չափանիշներին, որովհետև սենյակը բաժանված կամ առանձնացված չէր պատուհանով և պատշաճ կահավորված չէր՝ ազգականի կամ փաստաբանի հետ հանդիպելու համար: Խոհանոցում սառնարան չկար, որի պատճառով այնտեղ հնարավոր չէ սնունդ պահել ամառվա շոգ օրերին: Բուժկետում ստուգված ողջ դեղորայքը ժամկետանց էր: ՁՊՎ-ի սանհանգույցը բարվոք վիճակում չէր:

ՁՊՎ-ի մատյանները պատշաճ լրացված չէին՝ ՁՊՎ-ի «Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանում վերջին գրառումը կատարվել էր 2005 թվականին, այն դեպքում, երբ բանավոր զրույցի ժամանակ ՁՊՎ-ի պետը պնդում էր, որ միշտ էլ հանձնուքներ եղել են:

«Ձերբակալված անձանց զբոսանքի դուրս բերելու» մասին մատյանում ոչ մի գրառում չէր կատարվել, որից կարելի է եզրակացնել, որ Տաշիրի ՁՊՎ-ում ձերբակալված անձանց զբոսանքի իրավունքը խախտվում է: Զբոսահրապարակը չէր համապատասխանում ընդունված չափանիշներին, որովհետև սահմանված ծածկ և նստատեղ չկար: Զբոսահրապարակը ստուգելու արդյունքում պարզվեց նաև, որ այնտեղ առնվազն վերջին մեկ տարվա ընթացքում ոչ ոք զբոսանքի դուրս չի եկել, որպես ապացույց՝ կից ներկայացվում են Տաշիրի ՁՊՎ-ի զբոսահրապարակի լուսանկարները:

Ըստ ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման մատյանի 2006 թվականի հունվարի 1-ից մինչև դիտորդների այցելության օրը՝ (10.09.06) 15 ձերբակալված անձ է եղել, սակայն նշված 15-ից միայն 4-ի մասին կար գրառում՝ նրանց ազատ արձակելու կամ քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու մասին: Ըստ Տաշիրի ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման մատյանի մնացած 11 անձանց հետագա ճակատագիրը հայտնի չէ. տեղափոխվել ե՞ն նրանք այլ հիմնարկություն, թե՞ ազատ են արձակվել:

Ընդհանրապես Տաշիրի ՁՊՎ-ի մատյանները կամ լրացված չէին կամ լրացված էին որոշակի խախտումներով և աղավաղումներով:

Դիտորդական խմբի անդամները հարցազրույց անցկացրեցին Տաշիրի ՁՊՎ-ի պետ Ա. Շ.-ի հետ, որի արդյունքում պարզվեց, որ ձերբակալված անձինք ՁՊՎ ընդունման ժամանակ

բժշկական զննության չեն ենթարկվում, այլ` ՁՊՎ-ի օրվա հերթապահի կողմից ուղղակի ենթարկվում են արտաքին զննության:

Ինչպես նաև անդրադարձ կատարվեց ձերբակալված անձանց սննդի ապահովման ցավոտ խնդրին: Զրույցի, ինչպես նաև սննդի մատյանի ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ ձերբակալված անձանց կերակրում են ամբողջ օրվա ընթացքում մեկ անգամ` երեք անգամվա փոխարեն:

## Մատյանների ուսումնասիրթյունից պարզվեց.

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման»
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման»
3.« Բուժզննության և բուժօգնության»
4.«Հարազատներին հայտնելու»
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ»
6.«Դիտողությունների և առաջարկությունների»
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու»
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանում վերջին գրառումը կատարվել էր 2005թվականին
9.«Տեսակցությունների գրանցման»
10«Սննդամթերքի մատյան »
11«Ձերբակալվածների հեռախոսազանգերի»
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների»

## Առաջարկություններ

1.ՁՊՎ-ն ապահովել բուժսենյակով;
2.ՁՊՎ-ն ապահովել դեղորայքով;
3.Ուշադրություն դարձնել սանհանգույցի սանիտարական վիճակին;
4.Ապահովել մեկժամյա զբոսանքը, ապահովել զբոսահրապարակի շահագործումը;
5.ՁՊՎ-ի մատյանները բարեխղճորեն և պատշաճ լրացնել :

*ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի ՁՊՎ- ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 7-ում*

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի ՁՊՎ-ում

Թումանյանի ՁՊՎ-ն վերջերս է վերանորոգվել և բարվոք վիճակում է: ՁՊՎ-ն բաղկացած է 2 տեղանոց 4 խցից, քննչական սենյակից, բուժկետից, զբոսահրապարակից, խոհանոցից և տեսակցության սենյակից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ի խցերի ներսում լուսավորությունը շատ թույլ է, որի պատճառով խցի ներսում հնարավոր չէ գրություն կարդալ կամ դիմում, նամակ գրել: ՁՊՎ-ի քննչական սենյակը չի համապատասխանում ընդունված չափանիշներին, որովհետև քննչական սենյակում աթոռները ամրացված չէին հատակին: ՁՊՎ-ի տեսակցության սենյակը նույնպես չի համապատասխանում ընդունված չափանիշներին, որովհետև սենյակը բաժանված կամ առանձնացված չէր պատուհանով և պատշաճ կահավորված չէր՝ ազգականի կամ փաստաբանի հետ հանդիպելու համար: Խոհանոցում սառնարան չկար, որի պատճառով այնտեղ հնարավոր չէ սնունդ պահել ամառվա շոգ օրերին: Խոհանոցում առկա էր սպասք 4 անձի համար, այն դեպքում, երբ Թումանյանի ՁՊՎ-ն նախատեսված է մինչև 8 ձերբակալված անձի համար: Բուժկետում ստուգված ողջ դեղորայքը ժամկետանց էր: ՁՊՎ-ի սանհանգույցը բարվոք վիճակում էր:

ՁՊՎ-ի մատյանները պատշաճ լրացված չէին՝ «Ձերբակալված անձանց զբոսանքի դուրս բերելու» մասին մատյանում ոչ մի գրառում չէր կատարվել, որից կարելի է եզրակացնել, որ Թումանյանի ՁՊՎ-ում ձերբակալված անձանց զբոսանքի իրավունքը խախտվում է: Զբոսահրապարակը չէր համապատասխանում ընդունված չափանիշներին, որովհետև սահմանված ծածկ և նստատեղ չկար: «Սննդի մատյանում» օգոստոս ամսվա վերաբերյալ ոչ մի գրառում չկար, այն դեպքում, երբ ըստ ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման մատյանի օգոստոս ամսվա ընթացքում Թումանյանի ՁՊՎ-ում պահվել են ձերբակալված անձինք:

Դիտորդական խմբի անդամները հարցազրույց անցկացրեցին Թումանյանի ՁՊՎ-ի պետ Հ. Գ.-ի հետ, որի արդյունքում պարզվեց, որ ձերբակալված անձինք ՁՊՎ ընդունման ժամանակ բժշկական զննության չեն ենթարկվում, այլ՝ ՁՊՎ-ի օրվա հերթապահի կողմից ուղղակի ենթարկվում են արտաքին զննության:

Ինչպես նաև անդրադարձ կատարվեց ձերբակալված անձանց սննդի ապահովման ցավոտ խնդրին: Զրույցի, ինչպես նաև «Սննդի մատյանի» ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ ձերբակալված անձանց կերակրում են ամբողջ օրվա ընթացքում մեկ անգամ՝ երեք անգամվա փոխարեն: Ըստ ՁՊՎ-ի պետի՝ մեկ ձերբակալված անձի համար ամբողջ օրվա կտրվածքով ստանում են 450 դրամ, որը չի բավականացնում օրվա երեքանգամյա սնունդ ապահովելու համար:

Այցելության պահին ՁՊՎ-ում պահվում էին երկու ձերբակալված անձինք, որոնց հետ խմբի անդամները առանձնազրույց ունեցան և ներկայացրեցին ՀՀ ոստիկանության ՁՊՎ-

ներում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի գործունեության նպատակները և խնդիրները: Նշված ձերբակալված անձինք բողոքներ, առաջարկություններ չունեին և գոհ էին Թումանյանի ՁՊՎ-ի վարչակազմից:

## Մատյանների ուսումնասիրությունից պարզվեց

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման»
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման»
3.« Բուժզննության և բուժօգնության»
4.«Հարազատներին հայտնելու»
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ»
6.«Դիտողությունների և առաջարկությունների»
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու»
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման»
9.«Տեսակցությունների գրանցման»
10.«Սննդամթերքի մատյան »
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի»
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների»

## Առաջարկություն

1.Շատ մեծ ուշադրություն դարձնել դեղորայքին ;
2.Ապահովել մեկժամյա զբոսանքը, զբոսահրապարակում տեղադրել ծածկ՝ արևից և անձրևներից պատսպարվելու համար;
3.Լուծել լուսավորության խնդիրը:

*ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 7-ում*

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Ստեփանավանի ՁՊՎ-ում

Այցելության արդյունքում պարզվեց, որ Ստեփանավանի ՁՊՎ-ի գործունեությունը դադարեցված է անորոշ ժամանակով, այն դեպքում, երբ խմբին ՀՀ ոստիկանությունից տեղեկացրել էին, որ Ստեփանավանի ՁՊՎ-ն գործում է: Հերթապահ ոստիկանը հավաստեց, որ Ստեփանավանի ՁՊՎ-ի փակման պատճառ է հանդիսացել անձրևաջրերի ներս հոսելը, ինչպես նաև այն, որ ՁՊՎ-ն գտնվում է նկուղային հարկում և չի համապատասխանում ընդունված չափանիշներին:

Դիտորդական խմբի անդամների կողմից ստուգվեց Ստեփանավանի ոստիկանության բերման ենթարկվածների գրանցման մատյանը, որի նպատակն էր ճշտել, թե որ ՁՊՎ-ներն են տեղափոխվել Ստեփանավանի շրջանից ձերբակալված անձինք: Ստուգման արդյունքում պարզվեց, որ բերման ենթարկվածների գրանցման մատյանը պատշաճ լրացված չէր:

Դիտորդական խմբի անդամները հարցազրույց անցկացրեցին Ստեփանավանի ոստիկանության օրվա հերթապահի հետ, որի արդյունքում պարզվեց, որ Ստեփանավանի շրջանում ձերբակալված անձինք տեղափոխվում են Վանաձորի և Տաշիրի ՁՊՎ-ներ: Ինչպես նաև օրվա հերթապահ ոստիկանը բողոքում էր, որ Ստեփանավանի ոստիկանության սանհանգույցը չի գործում, ինչի պատճառով գիշերվա ժամերին բերման ենթարկված անձանց բաժնի հերթապահ ոստիկաններն են լապտերով ուղեկցում ոստիկանության շենքից դուրս գտնվող զուգարան: Նշված հանգամանքը տհաճ է ոստիկանների համար, քանի որ իրենք փաստացի զուգարան են մտնում բերման ենթարկված անձի հետ, ինչպես նաև հղի է վտանգավոր զարգացումներով, քանի որ բերման ենթարկված անձանց ոստիկանության շենքից դուրս ուղեկցելով՝ փախուստի հնարավորությունը և վտանգը մեծանում է:

*ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության ՁՊՎ-ների ընդհանուր նկարագիրը*

| Քաղաքը | *Վանաձորի ՁՊՎ* | *Սպիտակի ՁՊՎ* | *Տաշիրի ՁՊՎ* | *Թումանյանի ՁՊՎ* |
|---|---|---|---|---|
| Աշխատակազմ | Պետ, 9 հերթապահ | Պետ, 4 հերթապահ | Պետ, 4 հերթապահ | Պետ, 4 հերթապահ |
| Խցերի քանակը | 4 | 3 | 3 | 4 |
| Խցերի չափերը | | | | |
| Պատուհանների չափերը | | | | |
| Լուսավորությունը | *վատ* | լավ | *վատ* | *վատ* |
| Ներքին հարդարանքը | 2 մահճակալ, *խցերի ներսում լուսավորու-թյունը շատ թույլ է, որի պատճառով խցի ներսում հնարավոր չէ գրություն կարդալ կամ գրել* | 2 մահճակալ, վերմակ, բարձ, մատրաս | 1 մահճակալ, վերմակ, բարձ, մատրաս | 2 մահճակալ, վերմակ, բարձ, մատրաս |
| Քննչական սենյակ | կար 1 սեղան , 1 աթոռ՝ ամրացված հատակին, *կար և երեք աթոռ, որոնք ամրացված չէին հատակին* | կար | կար | կար |
| Բուժսենյակ | կար | կար | *չկար* | կար |
| Դեղորայք՝ ժամկետային | կար | կար | *չկար* | *չկար* |
| Դեղորայք՝ ժամկետանց | *կար* | չկար | չկար | *կար* |
| Տեսակցության սենյակ | կար | կար | կար | կար |
| Զուգարան | *չէր գործում* | լավ | *բարվոք վիճակում չէր* | լավ |
| Լոգարան | *չէր գործում* | լավ | *բարվոք վիճակում չէր* | լավ |
| Խոհանոց | կար | կար | կար | կար |
| Սպասք | կար | կար | կար | 4 անձի համար |
| Զբոսահրապարակ | *ծածկ չկար* | ծածկ կար | *ծածկ չկար* | *ծածկ չկար* |

# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Աշտարակի ԶՊՎ-ում

ԶՊՎ-ն բաղկացած է 2 տեղանոց 5 խցից, քննչական սենյակից, տեսակցության սենյակից, բուժսենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ԶՊՎ-ն գտնվում է անբերի վիճակում:

### Մատյանների ուսումնասիրթյունից պարզվեց

1.«ԶՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ԶՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանը առկա էր;
3.« Բուժզննության և բուժօգնության» մատյանը առկա էր;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը ***բացակայում էր;***
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը ***բացակայում էր;***
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը առկա էր;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանը ***բացակայում էր;***
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանը առկա էր;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը ***բացակայում էր;***
10«Սննդամթերքի մատյան » մատյանը առկա էր;
11«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը ***բացակայում էր;***
12.«ԶՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը ***բացակայում էր:***

*ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Աշտարակի ԶՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 8-ում*

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Ապարանի ԶՊՎ-ում

ԶՊՎ-ն բաղկացած է խցերից, քննչական սենյակից, տեսակցության սենյակից, բուժսենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից, սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ԶՊՎ-ն գտնվում է անբերի վիճակում:

### Մատյանների ուսումնասիրթյունից պարզվեց.

1.«ԶՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ԶՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանը առկա էր;
3.« Բուժզննության և բուժօգնության» մատյանը առկա էր;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը ***բացակայում էր;***
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը ***բացակայում էր;***
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը առկա էր;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանը ***բացակայում էր;***
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանը առկա էր;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը ***բացակայում էր;***
10.«Սննդամթերքի մատյան » մատյանը առկա էր;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը ***բացակայում էր;***
12.«ԶՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը ***բացակայում էր:***

*ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Ապարանի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 8-ում*

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Արագածի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած է խցերից, քննչական սենյակից, տեսակցության սենյակից, բուժսենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից, սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ն գտնվում է անբերի վիճակում:

### Մատյանների ուսումնասիրքյունից պարզվեց.

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանը առկա էր;
3.« Բուժզննության և բուժօգնության» մատյանը առկա էր;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը ***բացակայում էր;***
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը ***բացակայում էր;***
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը առկա էր;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանը ***բացակայում էր;***
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանը առկա էր;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը ***բացակայում էր;***
10.«Սննդամթերքի մատյան » մատյանը առկա էր;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը ***բացակայում էր;***
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը ***բացակայում էր:***

*ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Արագածի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 8-ում*

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Թալինի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած է 3 երկտեղանոց խցերից, քննչական սենյակից, տեսակցության սենյակից, բուժսենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ն գտնվում էր անբերի վիճակում:

### Մատյանների ուսումնասիրքյունից պարզվեց.

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանը առկա էր;
3.« Բուժզննության և բուժօգնության» մատյանը առկա էր;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը ***բացակայում էր;***
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը ***բացակայում էր;***
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը առկա էր;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանը ***բացակայում էր;***
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանը առկա էր;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը ***բացակայում էր;***
10.«Սննդամթերքի մատյան » մատյանը առկա էր;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը ***բացակայում էր;***

12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը ***բացակայում էր:***

*ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Թալինի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 8-ում*

Հավելված 8

***ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության ՁՊՎ-ների ընդհանուր նարագիրը***

| Քաղաքը | [illegible]ի ՉԴԿ | [illegible]ի ՉԴԿ | [illegible]ի ՉԴԿ | [illegible]ի ՉԴԿ |
|---|---|---|---|---|
| Խցերի քանակը | 5 | | | 3 |
| Խցերի չափերը | 2.5մx4մ | | | 2.5մx4 մ |
| Պատուհանների չափերը | 0.50մx 0.60մ | | | 0.50մx 0.60մ |
| Լուսավորությունը | բավարար | բավարար | բավարար | բավարար |
| Ներքին հարդարանքը | մահճակալ, լվացարան, աթոռ և սեղան՝ ամրացված հատակին | մահճակալ, լվացարան, աթոռ և սեղան՝ ամրացված հատակին | մահճակալ, լվացարան, աթոռ և սեղան՝ ամրացված հատակին | մահճակալ, լվացարան, աթոռ և սեղան՝ ամրացված հատակին |
| Քննչական սենյակ | առկա էր | լուսավոր սեղան, 2 աթոռ | լուսավոր սեղան, 2 աթոռ | լուսավոր սեղան, 2 աթոռ |
| Բուժսենյակ | լուսավոր, դեղորայք | լուսավոր, դեղորայք | լուսավոր, դեղորայք | լուսավոր, դեղորայք |
| Դեղորայք՝ ժամկետային | բոլորը նոր էին | բոլորը նոր էին | բոլորը նոր էին | բոլորը նոր էին |
| Դեղորայք՝ ժամկետանց | չկար | չկար | չկար | չկար |
| Տեսակցության սենյակ | կար | լուսավոր | լուսավոր | լուսավոր |
| Զուգարան | նորմալ | նորմալ | նորմալ | նորմալ |
| Լոգարան | նորմալ | կահավորված չէր | նորմալ | կահավորված չէր |
| Խոհանոց | կար | կար | կար | կար |
| Սպասք | կար | կար | կար | կար |
| Զբոսահրապարակ | | | | |

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ամասիայի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած է խցերից, քննչական սենյակից, տեսակցության սենյակից, բուժսենյակից, ճաշասենյակից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ն գտնվում է անբերի վիճակում: Միայն սպասքը առկա չէր:

ՁՊՎ-ն շահագործման չի հանձնվել, ջուր չկար, մահճակալներ չկան, ՁՊՎ-ն չէր գործում:

**Մատյանների ուսումնասիրթյունից պարզվեց.**

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանը առկա էր;
3.« Բուժզննության և բուժօգնության» մատյանը առկա էր;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը ***բացակայում էր;***
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը ***բացակայում էր;***
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը առկա էր;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանը ***բացակայում էր;***
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանը առկա էր;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը ***բացակայում էր;***
10.«Սննդամթերքի մատյան»-ը առկա էր;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը ***բացակայում էր;***
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը ***բացակայում էր:***

*ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ամասիայի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 9-ում*

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Արթիկի ՁՊՎ-ում

Արթիկի ՁՊՎ-ն վերջերս է վերանորոգվել և բարվոք վիճակում է: ՁՊՎ-ն բաղկացած է 1 տեղանոց 6 խցից, քննչական սենյակից, զբոսահրապարակից և տեսակցության սենյակից: ՁՊՎ-ում փակցված չէր և չկար ՀՀ ոստիկանության պետի 2005 թվականի. հունվարի 14-ի թիվ 1 Ն հրամանը՝ ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի կարգը՝ խմբի անդամների ցուցակով: ՁՊՎ-ի տեսակցության սենյակը չի համապատասխանում ընդունված չափանիշներին, որովհետև սենյակը բաժանված կամ առանձնացված չէր պատուհանով և պատշաճ կահավորված չէր՝ ազգականի կամ փաստաբանի հետ հանդիպելու համար:

Ըստ ՁՊՎ-ի բժշկական մատյանի՝ 2005 թվականին մեկ մարդ էր օգտվել շտապօգնության ծառայությունից, իսկ 2006 թվականի ընթացքում ոչ մի կանչ չի գրանցվել: ՁՊՎ-ի հանձնուքների գրացման մատյանում վերջին գրառումը կատարվել էր 2006 թվականի փետրվար ամսին, այն դեպքում, երբ բանավոր զրույցի ժամանակ ՁՊՎ-ի պետը պնդում էր, որ միշտ էլ հանձնուքներ եղել են: Զբոսահրապարակը չէր համապատասխանում ընդունված չափանիշներին, որովհետև սահմանված ծածկ, մարզական սարքավորումներ և նստատեղ չկար: Դիտորդական խմբի անդամները հարցազրույց անցկացրեցին Արթիկի ՁՊՎ-ի պետ Ռոբերտ Խաչատրյանի հետ, որի արդյունքում պարզվեց, որ ձերբակալված անձինք ՁՊՎ ընդունման ժամանակ բժշկական զննության չեն ենթարկվում, այլ՝ ՁՊՎ-ի օրվա հերթապահի կողմից ուղղակի ենթարկվում են արտաքին զննության:

**Մատյանների ուսումնասիրթյունից պարզվեց.**

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանը առկա էր;
3.« Բուժզննության և բուժօգնության» մատյանը առկա էր;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը ***բացակայում էր;***
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը ***բացակայում էր;***
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը առկա էր;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանը ***բացակայում էր;***
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանը առկա էր;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը ***բացակայում էր;***
10.«Սննդամթերքի մատյան»-ը առկա էր;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը ***բացակայում էր;***
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը ***բացակայում էր :***

**Առաջարկություն**

1.Շատ մեծ ուշադրություն դարձնել դեղորայքին ;
2.Ապահովել մեկժամյա զբոսանքը, զբոսահրապարակում տեղադրել ծածկ՝ արևից և անձրևներից պատսպարվելու համար;
3.Փակցնել ՀՀ ոստիկանության պետի 2005 թվականի հունվարի 14-ի թիվ 1 Ն հրամանը՝ ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի կարգը՝ խմբի անդամների ցուցակով

*ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Արթիկի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 9-ում*

**Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ղուկասյանի ՁՊՎ-ում**

ՁՊՎ-ն բաղկացած է խցերից, քննչական սենյակից, տեսակցության սենյակից, բուժսենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ն գտնվում է անբերի վիճակում: Միայն սպասքը առկա չէր:

**Մատյանների ուսումնասիրրյունից պարզվեց.**
1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանը առկա էր;
3.« Բուժզննության և բուժօգնության» մատյանը առկա էր;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը ***բացակայում էր;***
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը ***բացակայում էր;***
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը առկա էր;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանը ***բացակայում էր;***
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանը առկա էր;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը ***բացակայում էր;***
10.«Սննդամթերքի մատյան»-ը առկա էր;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը ***բացակայում էր;***
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը ***բացակայում էր:***

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ախուրյանի ՁՊՎ-ում

Ախուրյանի ՁՊՎ-ն վերջերս է վերանորոգվել և բարվոք վիճակում է: ՁՊՎ-ն բաղկացած է 2 տեղանոց 6 խցից, քննչական սենյակից, զբոսահրապարակից և տեսակցության սենյակից: Բուժկետ չկար, սակայն բժշկական արկղի մեջ շատ քիչ քանակությամբ կար մի քանի տեսակի դեղորայք: ՁՊՎ-ում փակցված չէր և չկար ՀՀ ոստիկանության պետի 2005 թվականի հունվարի 14-ի թիվ 1 Ն հրամանը՝ ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի կարգը՝ խմբի անդամների ցուցակով: Ըստ ՁՊՎ-ի «Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանի՝ 9 ձերբակալված և կալանավորված անձի հարազատի է տեղեկացվել, այն դեպքում երբ 2006 թվականի սկզբից մինչ դիտորդական խմբի այցելության օրը ՁՊՎ-ում եղել է 53 ձերբակալված և կալանավորված: Զբոսահրապարակը չէր համապատասխանում ընդունված չափանիշներին, որովհետև սահմանված ծածկ, մարզական սարքավորումներ և նստատեղ չկային: Դիտորդական խմբի անդամները հարցազրույց անցկացրեցին ՁՊՎ-ի պետի հետ, որի արդյունքում պարզվեց, որ ձերբակալված անձինք ՁՊՎ ընդունման ժամանակ օրվա հերթապահի կողմից ենթարկվում են արտաքին զննության:

Այցելության պահին՝ 15:00-ին ՁՊՎ-ում դիտորդական խմբի անդամները հանդիպեցին ձերբակալված Շ. Մ.-ին, որին տեղափոխում էին Աբովյանի ՔԿՀ: Ձերբակալված Շ. Մ.-ն պատմեց, որ ինքը հոկտեմբերի 10-ին, ժամը 17:00-ի սահմաններում բերման է ենթարկվել Գյումրիի ոստիկանության քաղաքային (տեքստիլի) բաժին և ազատ է արձակվել: Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 11-ին ոստիկանության կանչով ներկայացել է նույն բաժին, որտեղ նրան պահել են մեկ օր (գիշերը քնել է աթոռի վրա) և առավոտյան տեղափոխել Ախուրյանի ՁՊՎ: Ձերբակալված Շ. Մ.-ն պատմեց նաև, որ սույն թվականի սեպտեմբեր ամսին նույնպես պահվել է Գյումրիի ոստիկանության (տեքստիլի) քաղաքային բաժնում և 3 գիշեր քնել է աթոռի վրա: Նշված դեպքը խոսում է մարդու իրավունքների կոպիտ խախտման մասին, որի արդյունքում խախտվել են ինչպես ՀՀ Սահմանադրության 3-րդ, 14-րդ և 16-րդ հոդվածները, այնպես էլ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածը: Ձերբակալված անձանց հաշվառման մատյանի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ կալանավորված կանայք և անչափահասները Ախուրյանի ՁՊՎ-ում պահվել են 5-ից մինչև 25 օր՝ իրենց գործերով դատավարությանը մասնակցելու նպատակով, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենգրքի 137 հոդվածի 2-րդ կետի խախտում է, ըստ որի, կալանավորված անձը չի կարող 3 օրվանից ավելի պահվել ձերբակալվածներին պահելու վայրերում, բացի այն դեպքերից, երբ ձերբակալվածներին պահելու վայրից քննչական մեկուսարան կամ, օրենքի պահանջներին համապատասխան, կալանավորվածներին պահելու այլ վայրեր նրա տեղափոխումը հնարավոր չէ տրանսպորտային հաղորդակցության բացակայության պատճառով: «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ կալանավորվածներին պահելու վայրի տեղակայման տարածքից կալանավորված անձին ամեն օր փոխադրելու անհնարինության դեպքում, քննչական գործողություններ կատարելու և դատական քննությունը կալանավորվածներին պահելու վայրից դուրս կատարելու կապակցությամբ, քննիչի, դատախազի կամ դատարանի որոշմամբ, կալանավորված անձը կարող է տեղափոխվել ձերբակալվածներին պահելու վայր մինչև երեք օր տևողությամբ: Նույն հոդվածի առաջին մասով նախատեսված, ինչպես նաև տրանսպորտային հաղորդակցության բացակայության պատճառով կալանավորված անձին սահմանված ժամկետում կալանավորվածներին պահելու վայր փոխադրելու անհնարինության դեպքերում կալանավորված անձը ձերբակալվածներին պահելու վայրում պահվում է կալանավորվածներին պահելու վայրի համար սահմանված կարգով և պայմաններով: Բնականաբար նշված ՁՊՎ-ում չկան կանանց և անչափահասներին պահելու համար նախատեսված խցեր և նրանք չեն պահվել կալանավորվածներին պահելու վայրի համար

օրենքով սահմանված կարգով և պայմաններով: Ըստ Ախուրյանի ՁՊՎ-ի ձերբակալված անձանց հաշվառման մատյանի՝ անչափահաս (1988 թ. ծնված) կալանավոր Ա. Կ.-ն ՁՊՎ-ում պահվել է 28 օր՝ 15.08.06-ից 11.09.06-ը, անչափահաս (1989թ. ծնված) կալանավոր Ա. Հ.-ն ՁՊՎ-ում պահվել է 13 օր՝ 12.09.06-ից 25.09.06-ը և այլն: Նշված դեպքերը շատ են, սակայն խումբը նպատակահարմար չի գտնում թվարկել ՁՊՎ-ում պահված բոլոր կալանավորների անունները:

**Մատյանների ուսումնասիրթյունից պարզվեց.**

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանը առկա էր;
3.« Բուժզննության և բուժօգնության» մատյանը առկա էր;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը ***բացակայում էր;***
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը ***բացակայում էր;***
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը առկա էր;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանը ***բացակայում էր;***
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանը առկա էր;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը ***բացակայում էր;***
10.«Սննդամթերքի մատյան»-ը առկա էր;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը ***բացակայում էր;***
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը ***բացակայում էր:***

**Առաջարկություններ**

1.Պատշաճ լրացնել «Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը;
2.Ապահովել հեռախոսակապով;
3.Փակցնել ՀՀ ոստիկանության պետի 2005թվականի հունվարի 14-ի թիվ 1 Ն հրամանը՝ ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի կարգը՝ խմբի անդամների ցուցակով;
4.Մեծ ուշադրություն դարձնել դեղորայքին;
5. ՁՊՎ-ն օգտագործել միայն ձերբակալված անձանց պահելու համար և չդարձնել այն ՔԿՀ;
6. ՁՊՎ-ում ձերբակալված անձանց չպահել առանձ հիմքի և անօրինականորեն (72 ժամից ավել):

*ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ախուրյանիի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 9-ում*

## Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Մարալիկի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած է խցերից, քննչական սենյակից, տեսակցության սենյակից, բուժսենյակից, ճաշասենյակից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ն գտնվում է անբերի վիճակում: Միայն սպասքը առկա չէր: ՁՊՎ-ի վերանորոգման աշխատանքները շինարարների կողմից հանձնված չէ վերջնական շահագործման համար՝ 17.07.06- դրությամբ:

**Մատյանների ուսումնասիրթյունից պարզվեց.**

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանը առկա էր;
3.« Բուժզննության և բուժօգնության» մատյանը առկա էր;

4.«Հարազատներին հայտնելու» մատյանը *բացակայում էր;*
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը *բացակայում էր;*
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը առկա էր;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանը *բացակայում էր;*
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանը առկա էր;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը *բացակայում էր;*
10«Սննդամթերքի մատյան»-ը առկա էր;
11«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը *բացակայում էր;*
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը *բացակայում էր:*

Հ ա վ ե լ վ ա ծ 9

*ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության ՁՊՎ-ների ընդհանուր նարագիրը*

| Քաղաքը | *Ամասիայի ՁՊՎ* | *Արթիկի ՁՊՎ* | *Ղուկասյանի ՁՊՎ* | *Ախուրյանի ՁՊՎ* | *Մարալիկի ՁՊՎ* |
|---|---|---|---|---|---|
| Խցերի քանակը | 3 | | | 6 | |
| Խցերի չափերը | | | | 2.5մx 4մ | |
| Պատուհանների չափերը | | | | 0.50մx 0.60մ | |
| Լուսավորությունը | բավարար | բավարար | բավարար | բավարար | բավարար |
| Ներքին հարդարանքը | լվացարան, մահ-ճակալ, սեղան, աթոռ | լվացարան, մահ-ճակալ, սեղան, աթոռ | լվացարան, մահ-ճակալ, սեղան, աթոռ | լվացարան, մահճակալ, սեղան, աթոռ | լվացարան, մահճակալ, սեղան, աթոռ |
| Քննչական սենյակ | լուսավոր, սեղան և 2 աթոռ՝ ամրացված հատակին | լուսավոր, սեղան և 2 աթոռ՝ ամրացված հատակին | լուսավոր, սեղան և 2 աթոռ՝ ամրացված հատակին | կար | լուսավոր, սեղան և 2 աթոռ՝ ամրացված հատակին |
| Բուժսենյակ | լուսավոր, դեղորայք | լուսավոր, դեղորայք | լուսավոր, դեղորայք | լուսավոր, դեղորայք | լուսավոր, դեղորայք |
| Դեղորայք՝ ժամկետային | բոլորը նոր էին | բոլորը նոր էին | բոլորը նոր էին | բոլորը նոր էին | բոլորը նոր էին |
| Դեղորայք՝ ժամկետանց | չկար | չկար | չկար | չկար | չկար |
| Տեսակցության սենյակ | լուսավոր | լուսավոր | լուսավոր | լուսավոր | լուսավոր |
| Զուգարան | նորմալ | նորմալ | կար | նորմալ | նորմալ |
| Լոգարան | նորմալ | նորմալ | նորմալ | նորմալ | նորմալ |
| Խոհանոց | կար | կար | կար | կար | կար |
| Սպասք | չկար | չկար | չկար | կար | կար |
| Զբոսահրապարակ | | | | | |

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

### Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Արտաշատի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած է 2 տեղանոց 5 խցից, քննչական սենյակից, տեսակցության սենյակից, բուժսենյակից, ճաշասենյակից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ն գտնվում է անբերի վիճակում:

ՁՊՎ-ն վերանորգումից հետո գործում էր երկրորդ օրը, խմբի այցելության ընթացքում ՁՊՎ-ում գտնվում էին 6 ձերբակալված անձ: Լոգարանը շահագործման չէր հանձնված, «Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանը բացակայում էր: Մեկ Խուցը կահավորված չէր:

**Մատյանների ուսումնասիրթյունից պարզվեց.**

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանը առկա էր;
3.« Բուժզննության և բուժօգնության» մատյանը առկա էր;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը ***բացակայում էր;***
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը ***բացակայում էր;***
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը առկա էր;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանը ***բացակայում էր;***
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանը առկա էր;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը ***բացակայում էր;***
10«Սննդամթերքի» մատյանը առկա էր;
11«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը ***բացակայում էր;***
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը ***բացակայում էր:***

*ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Արտաշատի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ հավելված 10-ում*

### Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Մասիսի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած է 2 տեղանոց 4 խցից, քննչական սենյակից, տեսակցության սենյակից, բուժսենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ն գտնվում է անբերի վիճակում:

Բացթողումներ կային սննդի մատյանում՝ սննդի ստացման վերաբերյալ:

**Մատյանների ուսումնասիրթյունից պարզվեց.**

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանը առկա էր;
3.« Բուժզննության և բուժօգնության» մատյանը առկա էր;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը ***բացակայում էր;***
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը ***բացակայում էր;***
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը առկա էր;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանը ***բացակայում էր;***
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանը առկա էր;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը ***բացակայում էր;***
10«Սննդամթերքի» մատյանը առկա էր;
11«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը ***բացակայում էր;***
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը ***բացակայում էր:***

*ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Մասիսի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 10-ում*

## Դիտարկումներ ՀՀ Ոստիկանության Արարատի մարզային վարչության Վեդիի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած էր 2 տեղանոց 5 խցից, քննչական սենյակից, տեսակցության սենյակից, բուժսենյակից, խոհանոցից, զբոսահրապարակից և սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ն գտնվում է անթերի վիճակում:

«Գ. Մ.-ն 22.06.06-ին ձերբակալվել է, դատավճռով ազատ է արձակվել է 30.06.06-ին: 72 ժամվա ձերբակալման փաստաթղթերը անձնական գործում առկա էին, սակայն 25.06.06-ից մինչև 30.06.06-ը կալանավորման որոշում չի եղել»:

### Մատյանների ուսումնասիրթյունից պարզվեց.

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանը առկա էր;
3.« Բուժզննության և բուժօգնության» մատյանը առկա էր;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը ***բացակայում էր;***
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը ***բացակայում էր;***
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը առկա էր;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանը ***բացակայում էր;***
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանը առկա էր;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը ***բացակայում էր;***
10.«Սննդամթերքի» մատյանը առկա էր;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը ***բացակայում էր;***
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը ***բացակայում էր:***

*ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Վեդիի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 10-ում*

Հ ա վ ե լ վ ա ծ 10

***ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության ՁՊՎ-ների ընդհանուր նկարագիրը***

| Քաղաքը | *Արտաշատի ՁՊՎ* | *Մասիսի ՁՊՎ* | *Վեդիի ՁՊՎ* |
|---|---|---|---|
| Խցերի քանակը | 5 | 5 | 5 |
| Խցերի չափերը | 5մx3մ | 5մx2.5մ | 5մx 3մ |
| Պատուհանների չափերը | 0.60մx0.50մ | 0.60մx0.50մ | 0.60մx 0.50մ |
| Լուսավորությունը | բավարար | ոչ բավարար | բավարար |
| Ներքին հարդարանքը | 2 մահճակալ, լվացարան, սեղան և աթոռներ՝ ամրացված հատակին | 2 մահճակալ, լվացարան, սեղան և աթոռներ՝ ամրացված հատակին | 2 մահճակալ, լվացարան, սեղան և աթոռներ՝ ամրացված հատակին |
| Քննչական սենյակ | լուսավոր, սեղան և 2 աթոռ ամրացված հատակին | լուսավոր, սեղան և 2 աթոռ ամրացված հատակին | լուսավոր, սեղան և 2 աթոռ ամրացված հատակին |
| Բուժսենյակ | լուսավոր, դեղորայք | լուսավոր, դեղորայք | լուսավոր, դեղորայք |
| Դեղորայք՝ ժամկետային | բոլորը նոր էր | 1.էքստրատ, 2. Վալերիանա, 3.սպիրտ 4.բինտ, 5. բամբակ, 6. յոդ | 1.էքստրատ, 2. Վալերիանա, 3.սպիրտ 4.բինտ, 5. բամբակ, 6. յոդ |
| Դեղորայք՝ ժամկետանց | չկա | չկա | չկա |
| Տեսակցության սենյակ | լուսավոր | հեռախոսները աշխատում էին | լուսավոր, առանց կապի միջոցի |
| Զուգարան | նորմալ | նորմալ | նորմալ |
| Լոգարան | նորմալ | նորմալ | նորմալ |
| Խոհանոց | կար | կար | կար |
| Սպասք | կար | կար | կար |
| Զբոսահրապարակ | *ծածկ չկար* | *ծածկ չկար* | *չկար* |

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

### Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած է 2 տեղանոց 4 խցից, քննչական սենյակից, տեսակցության սենյակից, զբոսահրապարակից, սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ի խցերի ներսում լուսավորությունը շատ թույլ է, որի պատճառով խցերի ներսում հնարավոր չէ գրություն կարդալ կամ գրել: Բուժսենյակ խոհանոց, դեղորայք և սպիտակեղեն ընդանհրապես գոյություն չուներ: Սպասքը գտնվում էր անմխիթար վիճակում: Սահանգույցը և բոլոր խցերը հակահիգիենիկ անմխիթար վիճակում էին:

### Մատյանների ուսումնասիրությունից պարզվեց.

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանը առկա էր;
3.« Բուժզննության և բուժօգնության» ոչ մի գրանցում առկա չէր;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը առկա էր;
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» մատյանը առկա էր;
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը առկա էր;
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանը առկա էր;
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանը ***բացակայում էր;***
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը առկա էր;
10.«Սննդամթերքի» մատյանը առկա էր;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանը առկա էր;
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը ***բացակայում էր:***

*ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի ՁՊՎ-ի ընդհանուր նկարագիրը՝ Հավելված 11-ում*

### Առաջարկություններ

1.Անրաժեշտ է լուծել սպիտակեղենի խնդիրը;
2.Խցերից մեկը ձևափոխել,որպեսզի ծառայի, որպես բուժսենյակ;
3.Շատ մեծ ուշադրություն դարձնել դեղորայքին;
4.Անրաժեշտ է ուշադրություն դարձնել սանհանգույցի վիճակին;
5.Լուծել խոհանոցի խնդիրը;
6.Ավելացնել սպասքի քանակը և հետևել հիգիենային:

### Դիտարկումներ ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի ՁՊՎ-ում

ՁՊՎ-ն բաղկացած է 4 խցից, 2 տեղանոց, քննչական սենյակից, տեսակցության սենյակից, զբոսահրապարակից, սանհանգույցից: Դիտարկման արդյունքում պարզվեց, որ բուժսենյակ, խոհանոց, դեղորայք ընդանհրապես գոյություն չուներ: Սպասքը գտնվում էր թերի վիճակում:

**Մատյանների ուսումնասիրությունից պարզվեց.**

1.«ՁՊՎ-ի հերթապահության հանձնման և ընդունման» մատյանը առկա էր;
2.«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանը առկա էր;
3.« Բուժզննության և բուժօգնության» ոչ մի գրանցում առկա չէր;
4.«Հարազատներին հայտնելու» մատյանը առկա էր;
5.«Մարմնական վնասվածքների վերաբերյալ» ոչ մի գրանցում առկա չէր;
6.«Դիտողությունների և առաջարկությունների» մատյանը *բացակայում էր;*
7.«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» մատյանը առկա էր;
8.«Հանձնուքների ընդունման և հաշվառման» մատյանում ոչ մի գրանցում առկա չէր;
9.«Տեսակցությունների գրանցման» մատյանը առկա էր;
10.«Սննդամթերքի» մատյանը առկա էր;
11.«Ձերբակալվածների հեռախոսազանգերի» մատյանում ոչ մի գրանցում առկա չէր;
12.«ՁՊՎ-ում պահվող անձանց առաջարկների, դիմումների և բողոքների» մատյանը *բացակայում էր:*

**Առաջարկություններ**

1. Խցերից մեկը ձևափոխել, որպեսզի ծառայի, որպես բուժսենյակ;
2. Լուծել խոհանոցի և բուժսենյակի խնդիրը;
3. Ավելացնել սպասքի քանակը և հետևել հիգիենային:

Հ ա վ ե լ վ ա ծ 11

## *ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչության ՉՊՎ-ների ընդհանուր նկարագիրը*

| Քաղաքը | *Արմավիրի ՉՊՎ* | *Վաղարշապատի ՉՊՎ* |
|---|---|---|
| Աշխատակազմ | Պետ,<br>4 հերթապահ | Պետ,<br>4 հերթապահ |
| Խցերի քանակը | 4 | 4 |
| Խցերի չափերը | 3 մ x2.5 մ | 3 մx 2.5 մ |
| Պատուհանների չափերը | 0.40 մx 0.50 մ | 0.40 մx0.50 մ |
| Լուսավորությունը | վատ | բավարար |
| Ներքին հարդարանքը | *ոչ մի անկողնու վրա սպիտակեղեն չկար*<br>2 մահճակալ, 2 աթոռ | բավարար |
| Քննչական սենյակ | լավ | |
| Բուժսենյակ | չկար | չկար |
| Դեղորայք՝ ժամկետային | չկար | կար |
| Դեղորայք՝ ժամկետանց | կար | *կար* |
| Տեսակցության սենյակ | շատ լավ վիճակ | շատ լավ վիճակ |
| Զուգարան | անմխիթար վիճակ | լավ |
| Լոգարան | անմխիթար վիճակ | լավ |
| Խոհանոց | չկար | չկար |
| Սպասք | *գտնվում էր հակասանիտարական անմխիթար վիճակում* | թերի |
| Զբոսահրապարակ | *ծածկ չկար* | *ծածկ չկար* |

## Ազատություն և անձնական անձեռնմխելիություն

Դիտորդական խմբի կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ազատությունից զրկելու անօրինական դեպքերը բազմաթիվ են և արատավոր պրակտիկա են դարձել: Մասնավորապես, բազմաթիվ ահազանգեր են եղել այն մասին, որ ոստիկանության բաժիններում անօրինական կերպով մարդիկ են պահվել, սակայն նշված դեպքերում դիտորդական խումբը ոչինչ չի կարողացել պարզել՝ հայտնաբերելով դատարկ ՁՊՎ-ներ և դրանով իսկ հայտնվել է անլուծելի խնդրի առաջ. մի կողմից խմբի անդամները անարգել իրավունք ունեն այցելել ՁՊՎ-ներ, մյուս կողմից՝ անօրինական կերպով պահվող անձինք չեն գրանցվել և չեն պահվել ՁՊՎ-ներում: Դիտորդական խմբի անդամներն, ըստ կարգի, իրավունք ունեն անարգել այցելել միայն ՁՊՎ-ներ, երբ ոստիկանության բաժինների օպերատիվ աշխատակիցների սենյակներում և երեք ժամանոց խցերում օրերով մարդիկ են պահում:

<u>Նշված հարցի վերաբերյալ տես դիտորդական խմբի առաջարկությունը՝ խմբի գործունեության կարգի վերաբերյալ:</u>

Նշված խնդրի համատեքստում են դիտարկվել նաև այն դեպքերը, երբ ձերբակալված անձանց պահելու 72 ժամը լրացել է, և դատարանի որոշմամբ նրանք չեն կալանավորվել, սակայն ՁՊՎ-ի վարչակազմերը նրանց ազատ չեն արձակել: Պահման նշված անօրինական դեպքերը խոսում են ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի խախտման մասին, ըստ որի, եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման: Այդ առումով հաշվետվության մեջ տեղ են գտել.

1. *ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Չարենցավանի ՁՊՎ-ի*
   «ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանի ուսումնասիրությունից պարզվեց, որ ՁՊՎ-ում առանց որևէ հիմքի պահվել են երկու ձերբակալված անձինք՝ Ա. Գ.-ն՝ 23.03.06-ից մինչև 05.04.06-ը և Ա. Հ.-ն՝ 24.03.06-ից մինչև 05.04.06-ը: Ընդհանրապես ՁՊՎ-ում ոչ մի գրություն չկար ձերբակալվածներին 72 ժամից ավել պահելու մասին:

2. *ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Վարդենիսի ՁՊՎ-ի*
   «ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ Կ. Ն.-ն ձերբակալվել է 25.03.06-ին, որը մատյանում աշխատակիցների կողմից ուղղվել էր (այլ գրիչով) և դարձվել էր 15.04.06: Նշված անձը ՁՊՎ-ում պահվել էր մինչև 23.05.06-ը, որը կազմում է 42 օր: Մ. Մ.-ն ձերբակալվել էր 21.08.06-ին (հետախուզման որոշման հիմքով), և նրան ազատ արձակելու կամ տեղափոխելու մասին ոչ մի գրառում ու գրություն չկար, նրա մասին գրանցում չկար նաև «Սննդի մատյանում», ինչից կարելի է եզրակացնել, որ նա պահման ընթացքում 42 օր սնունդ չի ստացել:

3. *ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Ճամբարակի ՁՊՎ-ի*
   «ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ կային գրանցումներ, որոնցից երևում էր, որ ձերբակալված և կալանավորված անձանց առանց որոշումների (իրավական հիմնավորումների) ՁՊՎ-ում պահել են 7-ից մինչև 30 օր:

*4. ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Գորիսի ՁՊՎ-ի*
«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ 2006 թվականի հունվարից մինչև ապրիլ ամիսը ձերբակալված անձի կարգավիճակով 72 ժամից ավել պահվել է 30 (երեսուն) անձ:

*5. ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի ՁՊՎ-ի*
«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ ձերբակալված Հ. Ի.-ին ձերբակալվել է 20.01.06-ի ժամը 10:15-ին և պահվել մինչև 24.01.06-ի ժ.13:00-ը: Ձերբակալված Ա. Օ.-ն ձերբակալվել է 28.02.06-ի ժ.20:30-ին և պահվել է մինչև 04.03.06-ի ժ.15:30-ը:

*6. ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի ՁՊՎ-ի*
«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանի ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ Ս. Ս.-ն 29.05.06-ից մինչև 07.06.06-ը պահվել է ՁՊՎ-ում՝ ձերբակալված անձի կարգավիճակով: Ա. Ա.-ն որպես ձերբակալված անձ ՁՊՎ-ում պահվել է 27.07.06-ից մինչև 31.07.06-ը, «Սննդի մատյան»-ում նրա անունով գրանցում չկար, խմբի անդամների համար պարզաբանեցին, որ նա տեղափոխվել է հիվանդանոց, բայց «Խցերից դուրս բերելու» մատյանում նրա անունով հիվանդանոց տեղափոխելու մասին գրանցում չկար, սակայն նշված անձի վերաբերյալ առկա էին նույն ժամանակահատվածում զբոսանքի տանելու մասին գրանցումներ:

*7. ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի ՁՊՎ-ի*
«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանի ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ ձերբակալվածներ Հ. Բ.-ն և Վ. Ա.-ն ՁՊՎ-ում պահվում էին 11.08.06-ից մինչև 16.08.06-ը՝ առանց որևէ իրավական հիմնավորման: Ա. Հ.-ն ձերբակալվել է 05.08.06-ին, կալանավորվել 08.08.06-ին, սակայն մինչև դիտորդական խմբի այցը՝ 16.08.06-ը ՁՊՎ-ում պահվում էր՝ առանց իրավական հիմքի:

*8. ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի ՁՊՎ-ի*
«ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանի ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ 2006 թվականի հունվարի 1-ից մինչև դիտորդական խմբի այցելության օրը (10.09.06) 15 ձերբակալված անձ է եղել, սակայն նշված 15-ից միայն 4-ի անուն-ազգանունով գրառում կար՝ նրանց ազատ արձակելու կամ քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու մասին, մնացած 11 անձանց հետագա ճակատագիրը հայտնի չէ. տեղափոխվել են նրանք ա՞յլ հիմնարկություն, թե՞ երկար պահվելուց հետո ազատ են արձակվել:

## Կալանավորված անձանց անօրինական պահումը ՁՊՎ-ներում

Խմբի դիտարկումների արդյունքում պարզվեց, որ ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում մինչև 30 օր կալանավորված անձինք են պահվում: Նշված խնդրի կապակցությամբ դիտորդական խումբը ՁՊՎ-ների վարչակազմերից միանշանակ պատասխան չի ստացել, քանի որ կալանավորված անձանց պահելու համար նրանք տալիս էին ամենատարբեր մեկնաբանություններ: Մի դեպքում որպես արդարացում է բերվում էտապավորման մեքենայի և բենզինի բացակայությունը, մյուս դեպքում՝ կալանավորված անձանց դատավարությանը մասնակցելը: Բնականաբար, ոչ մի հիմնավորում չի կարող իրավական լինել այն դեպքում, երբ կալանավորված անձանց 5-ից մինչև 30 օր պահում են ՁՊՎ-ներում, որտեղ հնարավոր չէ պահել կալանավորված անձանց՝ իրենց կարգավիճակի համար օրենքով սահմանված

կարգով և պայմաններում: Ինչպես նշվել է` ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137 հոդվածի 2-րդ կետի համաձայն` կալանավորված անձը չի կարող 3 օրվանից ավելի պահվել ձերբակալվածներին պահելու վայրերում, բացի այն դեպքերից, երբ ձերբակալվածներին պահելու վայրից քննչական մեկուսարան կամ, օրենքի պահանջներին համապատասխան, կալանավորվածներին պահելու այլ վայրեր նրա տեղափոխումը հնարավոր չէ տրանսպորտային հաղորդակցության բացակայության պատճառով:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն` կալանավորվածներին պահելու վայրի տեղակայման տարածքից կալանավորված անձին ամեն օր փոխադրելու անհնարինության դեպքում, քննչական գործողություններ կատարելու և դատական քննությունը կալանավորվածներին պահելու վայրից դուրս կատարելու կապակցությամբ, քննիչի, դատախազի կամ դատարանի որոշմամբ` կալանավորված անձը կարող է տեղափոխվել ձերբակալավածներին պահելու վայր` մինչև երեք օր տևողությամբ: Նույն հոդվածի առաջին մասով` նախատեսված դեպքերում կալանավորված անձը ձերբակալվածներին պահելու վայրում պահվում է կալանավորվածներին պահելու վայրի համար սահմանված կարգով և պայմաններում: Ներկայիս պայմաններում ՀՀ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ներում հնարավոր չէ կալանավորված անձանց պահել «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան, սակայն, նշված հանգամանքը հաշվի չառնելով, ՁՊՎ-ների վարչակազմերը կալանավորված անձանց պահում են ՁՊՎ-ներում օրենքով սահմանված ժամկետները մի քանի անգամ գերազանցելով, ինչը, մեր խորին համոզմամբ, կալանավորված անձանց իրավունքների կոպիտ խախտում է: Ինչպես նաև դիտորդական խումբը գտնում է, որ ՁՊՎ-ները պետք է օգտագործվեն բացառապես ձերբակալված անձանց պահելու համար` չդարձնելով դրանք ՔԿՀ-ներ: Հաշվետվության մեջ տեղ են գտել հետևյալ դեպքերը.

*ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի ՁՊՎ-ի*

- «Ձերբակալված անձանց հաշվառման» մատյանի ուսումնասիրությունից պարզվեց, որ կալանավորված անձ Վ. Դ.-ն 31.07.06-ից մինչև 04.08.06-ը (կալանավորման որոշում` 01.08.06) և Ա. Ղ.-ն 30.07.06-ից մինչև 04.08.06-ը (կալանավորման որոշում` 02.08.06) պահվել են ՁՊՎ-ում: Նշված անձանց նկատմամբ կայացվել էր կալանքի որոշում, սակայն ՁՊՎ-ում պահելու որևէ հիմնավորում չկար: Ոստիկանության մարզային վարչության պետի ծառայության գծով տեղակալ պրն. Ա.-ն տեղեկացրեց, որ «…կալանավորման որոշումից հետո, կալանավորին իրավունք ունենք պահելու 6 օր»:

*ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության Եղեգնաձորի ՁՊՎ-ի*

- «ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանի ուսումանսիրության ընթացքում պարզվեց, որ կալանավորվածներ Ս. Պ.-ն, կալանավորված 24.05.06-ին, ՁՊՎ-ից տեղափոխվել է 08.06.06-ին, Լ. Ա.-ն կալանավորվել է 29.05.06-ին և տեղափոխվել 08.06.06-ին, Ս. Ղ.-ն` 26.06.06- ից մինչև 29.06.06-ի ժամը 14-30-ը, Ա. Ա.-ն 28.07.06-ին կալանավորվել է և տեղափոխվել 02.08.06-ին: Նշված անձանց գործերով ՁՊՎ-ում պահելու համար հիմնավորող որևէ փաստաթուղթ չկար:

*ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության Վայքի ՁՊՎ-ի*

- «ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանի ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ ձերբակալվածներ Լ. Ա.-ն և Ս. Բ.-ն ձերբակալվել են 27.07.06-ին, կալանավորվել 30.07.0-ին. և դատախազի գրության համաձայն` ՁՊՎ-ում պահվել են մինչև 03.08.06-ը:

*ՀՀոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի ՁՊՎ-ի*

- «ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանի ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ ձերբակալվածներ Մ. Գ.-ն և Գ. Կ.-ն 14.07.06-ի կալանավորման որոշումից հետո ՁՊՎ-ում պահվել են մինչև 26.07.06-ը՝ առանց որևէ իրավական հիմքի:

*ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Սևանի ՁՊՎ-ի*

- «ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանի ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ կալանավորված Ա. Գ.-ն և Վ. Կ.-ն, ըստ Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալ՝ Ա. Զ.-ի գրության, 09.08.06-ից մինչև 16.08.06-ը պահել էին ՁՊՎ-ում, սակայն մինչ այդ նրանք ՁՊՎ-ում պահվել էին ևս 7-օր:

*ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի ՁՊՎ-ի*

- «ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանում առկա էին գրանցումներ, որոնցից պարզ երևում էր, որ ձերբակալված անձինք ՁՊՎ-ում պահվել են 72 ժամից ավելի, իսկ կալանավորված անձինք՝ առանց համապատասխան իրավական հիմնավորումների:

*ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի ՁՊՎ-ի*

- Գ. Ո.-ն 6 օր պահվել է որպես կալանավոր՝ առանց որոշման և որևէ հիմնավորման: Մ. Ա.-ն՝ 14.06.06-ից մինչև 21.06.06-ը պահվել է որպես կալանավորված անձ՝ առանց որևէ հիմնավորման:

## Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելումը

Դիտորդական խմբի ուշադրության կենտրոնում են եղել խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի հետ կապված խնդիրները: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ծեծի և անմարդկային վերաբերմունքի դեպքերը ևս տեղ են գտել համակարգում, ինչի մասին բազմաթիվ հիշատակումներ կան միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների զեկույցներում: Համաձայն ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք: Հաշվետվության մեջ տեղ են գտել.

*ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Ճամբարակի ՁՊՎ-ի*

- 2006 թվականի հուլիսի 12-ին ՀՀ ոստիկանության հասարակական դիտորդական խումբը այցելություն է կատարել ՀՀ Գեղարքունիքի մարզային վարչության Ճամբարակի ոստիկանության բաժնի ՁՊՎ: Այցելության ժամանակ ոստիկանության բաժնի պետը տեղեկացրեց, որ իրենց մոտ շուրջ 2,5 ամիս պահվում էր անձը չպարզված մի անձնավորություն: Ոստիկանության բաժնի պետը պատմեց, որ նրան զինվորականները հայտնաբերել են ՀՀ սահմանի վրա և հանձնել են իրավապահ մարմիններին: Մինչև խմբի այցելության օրը (2006 թվականի հուլիսի 12) նշված անձը, առանց որևէ իրավական հիմքի և համապատասխան ձևակերպման, պահվել էր ՀՀ Գեղարքունիքի մարզային վարչության Ճամբարակի ոստիկանության բաժնի ՁՊՎ-ում: Պետի խոսքերով՝ նա արդեն երեք անգամ փորձել էր ինքն իրեն վնասել, այդ պատճառով նրան ցերեկային ժամերին տեղափոխում էին հերթապահ մասում գտնվող «խցիկը» (չափերը՝1,5x1,5քմ), իսկ գիշերային ժամերին՝ ՁՊՎ-ի խուց: Բացակայում էին նաև փաստաթղթեր, որոնց հիման վրա նա ՁՊՎ-ում էր պահվում: Նրան այնտեղ պահելու փաստը ֆիքսված չէր ՁՊՎ-ի ոչ մի մատյանում, բացակայում էր անձնական գործը: Անձնական հիգիենան անմխիթար վիճակում էր, չնայած որ, մի քանի անգամ պետը շեշտեց, որ շաբաթը մեկ անգամ փոխում են նրա ներքնաշորերը: Վերը նշված փաստի կապակցությամբ՝ խումբը գրավոր դիմել էր ՀՀ ոստիկանապետին՝ անհապաղ միջոցներ ձեռնարկելու՝ օրենքի կոպիտ խախտումը վերացնելու խնդրանքով: Արդյունքում, նշված անձը ՀՀ Գեղարքունիքի մարզային վարչության Ճամբարակի ոստիկանության բաժնի ՁՊՎ-ից տեղափոխվեց…: Դիտորդական խումբը գտնում է, որ նշված անձը պահվել է անմարդկային պայմաններում, ինչը ամենակոպիտ խախտումն է ինչպես ՀՀ Սահմանադրության, այնպես էլ ՀՀ կողմից վավերացված մի շարք միջազգային պայմանգրերի:

*ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Գորիսի ՁՊՎ-ի*

- Մինչ դիտորդական խմբի անդամները սպասում էին ոստիկանության բաժնում, ՁՊՎ-ից դուրս բերվեց մի անձ, որի աչքի տակ կապտուկ և դեմքին ընդհանուր գունատություն էին տեսել դիտորդական խմբի անդամները: Դիտորդական խմբի անդամների հարցապնդմանը, թե ով է վերը նշված անձը, Ոստիկանության բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալը կտրականապես պնդեց, որ ՁՊՎ-ից որևէ մարդ դուրս չի բերվել: ՁՊՎ-ի մատյանների ուսուցման արդյունքում պարզվեց, որ «Ձերբակալված անձանց հաշվառման» մատյանում նշված անձի վերաբերյալ գրանցում չկար: Հերթապահ մասում խմբի անդամներին տրամադրվեց «Ոստիկանության բաժին բերման ենթարկվածների հաշվառման մատյանը», որտեղ գրանցված էր Ն. Դ.-ն, որը բերման էր ենթարկվել 03.08.06-ի ժամը 23:00-ին, նրան ազատ արձակելու մասին գրառում չկար արված, իսկ դիտորդական խումբը այցելություն էր կատարել Գորիսի ՁՊՎ 04.08.06-ին, փաստորեն, ստացվում է, որ վերը նշված անձը փաստացի անօրինական զրկվել է ազատությունից: Ոստիկանության աշխատակիցների պնդմամբ նշված անձին պահել են, ոչ թե ՁՊՎ-ում, այլ 3 ժամանոց (ժամանակավոր) պահման խցում՝ մոտավորապես 12-13 ժամ:

*ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի ՁՊՎ-ի*

- ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի անդամները հանդիպել են դատապարտյալ Արտյոմ Սաֆարյանին, որը պնդում էր, որ Վանաձորի ՁՊՎ-ում պահվելու ընթացքում 2005 թվականի սեպտեմբերի 25-29-ը ՀՀ Լոռու մարզի Վանաձորի ոստիկանության բաժնի քրեական հետախուզության օպերատիվ աշխատակիցների և իր գործը վարող Լոռու մարզի դատախազության քննիչի կողմից դաժան ծեծի է ենթարկվել: Նշված դեպքի մասին Ա. Ս.-ն հայտարարություն է արել՝ իր քրեական գործով դատաքննության ժամանակ ՀՀ դատական բոլոր ատյաններում, այն է՝ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանում, ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանում, այնուհետև ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատում:

## Սնունդ

«Ձերբակալվածներին պահելու վայրերում պահվող անձանց անվճար սննդով ապահովվելու նվազագույն չափաբաժինները սահմանելու» մասին ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 15-ի N-587-Ն որոշմաբ սահմանված է ձերբակալվածներին պահելու վայրերում պահվող անձանց անվճար սննդով ապահովվելու նվազագույն չափաբաժինները՝ համաձայն Հավելված 12-ի:

Հավելված 12

| NN ը/կ | Սննդամթերքի անվանումը | Սննդի նորման մեկ օրվա համար (գրամ) |
|---|---|---|
| 1. | Հաց | 550 |
| 2. | Միս, մսամթերք | 90 |
| 3. | Ձուկ՝ առանց գլխի | 100 |
| 4. | Ձավարեղեն | 120 |
| 5. | Մակարոնեղեն | 20 |
| 6. | Բուսական յուղ | 20 |
| 7. | Շաքար, շաքարավազ | 40 |
| 8. | Կենդանական յուղ՝ մարգարին | 45 |
| 9. | Կաթ (կաթի փոշի) | 100 (14.3) |
| 10. | Թեյ | 1 |
| 11 | Բանջարեղեն | 250 |
| 12. | Կարտոֆիլ | 550 |
| 13. | Աղ՝ կերակրի | 8 |
| 14. | Հյութ | 100 |
| 15. | Տոմատի մածուկ | 3 |
| 16. | Դափնետերև | 0.1 |
| Հղի կանանց, կերակրող մայրերին, անչափահասներին, ինչպես նաև հիվանդներին (բժշկի նշանակմամբ) լրացուցիչ տրվում է | | |
| 17. | Բուսական յուղ | 20 |
| 18 | Կարագ | 25 |
| 19. | Կաթ (կաթի փոշի) | 100 (14.3) |
| 20. | Հավի ձու | 1 հատ |

Դիտորդական խումբն իր ուշադրության կենտրոնում է պահել ձերբակալված անձանց սննդի ապահովման հարցը և այցելությունների ընթացքում բազմաթիվ զրույցներ է ունեցել թե՛ ձերբակալված անձանց, թե՛ ՁՊՎ աշխատակիցների հետ: Զրույցների, ինչպես նաև ՁՊՎ-ների սննդի մատյանների ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ ձերբակալված անձանց կերակրում են ամբողջ օրվա ընթացքում մեկ անգամ՝ երեք անգամվա փոխարեն: Ըստ ՁՊՎ-ների պետերի՝ իրենք մեկ ձերբակալված անձի համար ամբողջ օրվա կտրվածքով ստանում են 450 դրամ, որը չի բավականացնում ՀՀ կառավարության կողմից հաստատված և վերը ներկայացված ցանկին համապատասխան՝ երեքանգամյա սնունդ ապահովելու համար: Խմբի անդամների առանձնազրույցներից մեկի ժամանակ Տավուշի մարզի Տավուշի ՁՊՎ-ի աշխատակիցը հպարտությամբ պատմել է, որ իրենք կերակրում կամ գնում են կատարում ըստ ձերբակալվածի ցանկության և որ ձերբակալված անձինք այդ 450 դրամի սահմաններում հիմնականում խնդրում են միայն ծխախոտ գնել իրենց համար, ինչը իրենք մեծ սիրով անում են: Կարծում ենք, նշված դեպքի առումով մեկնաբանություններն ավելորդ են:

Դիտորդական խումբը գտնում է, որ ձերբակալված անձանց պահելու վայրերում սննդի որակի հարցը ավելորդ է դիտարկել սույն հաշվետվության մեջ, քանի որ խմբի անդամները ՁՊՎ-ներում երբևիցե չեն արձանագրել ներկայացված նվազագույն չափաբաժինների ցանկի սննդատեսակների առկայությունը:

ՁՊՎ-ների վարչակազմերը պնդում են, որ 450 դրամի սահմաններում հնարավոր չէ ՀՀ կառավարության հաստատած նվազագույն չափաբաժիններով կերակրել ձերբակալված անձանց, ինչպես նաև խնդիրներ կան այդ սահմանված 450 դրամի սահմաններում սնունդ մատակարարելու համար օբյեկտներ գտնելու և նրանց հետ համապատասխան պայմանագրեր կնքելու հարցում: Նշված պնդումները հիմնավորվել են նաև ձերբակալված անձանց հետ զրույցներով, ըստ որոնց, օրվա ընթացքում նրանք մեկ անգամ են սնունդ ստացել և որոշ դեպքերում թերսնվածության խնդիրը լուծվել է ձերբակլավված անձանց հարազատների կողմից բերվող հանձնուքներով, սակայն միշտ չէ, որ նրանք հնարավորություն են ունենում հանձնուքներ բերելու և միշտ չէ, որ ձերբակալված անձինք հարազատներ են ունենում:

## Հանձնուքներ

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն ձերբակալված անձն արգելանքի տակ գտնվելու ընթացքում կարող է ստանալ մինչև քսան կիլոգրամ հանձնուք, սահմանված չափի հանձնուքները նրանք կարող են ստանալ միանվագ կամ մաս-մաս:

Դիտորդական խմբի դիտարկումների ընթացքում պարզվել է, որ ոստիկանության այն բաժանմունքներում, որտեղ տեղակայված են ՁՊՎ-ներ, տեսանելի վայրում փակցված չէ այն առարկաների և սննդամթերքի ցանկը, որոնք ձերբակալվածին թույլատրվում է ունենալ իր մոտ, պահել, ստանալ հանձնուքով կամ ձեռք բերել: Ինչը հավելյալ խնդիրներ և քաշքշուկներ է առաջացնում ձերբակալված անձանց հարազատների համար, քանի որ նրանք չգիտեն՝ ինչ է թույլատրվում որպես հանձնուք հանձնելու համար: Լավագույն դեպքում նշված ցանկը փակցված է եղել ՁՊՎ-ի ներսում միայն հերթապահ ոստիկանի համար, սակայն ձերբակալված անձանց հարազատների համար այն տեսանելի չէ:

Ընդհանրապես հանձնուքների ընդունման և հաշվառման մատյանները կամ լրացված չեն, կամ էլ լրացված են բազմաթիվ թերություններով, որից դիտորդական խմբի անդամները շատ դժվարությամբ են կարողանում պարզել հանձնուքների հանձնման ընդհանուր պատկերը:

## Զբոսանք և զբոսաբակեր

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ ձերբակալված անձանց զբոսանքը կազմակերպվում է ցերեկային ժամերին՝ դրա համար նախատեսված տարածքում: Ձերբակալված անձանց զբոսանքի տևողությունը չի կարող պակաս լինել օրական մեկ ժամից: ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերի ներքին կանոնակարգի 10.4 կետի համաձայն՝ ՁՊՎ-ների զբոսաբակերը պետք է սարքավորվեն մարմնամազրությամբ զբաղվելու համար: Դիտորդական խմբի այցելությունների ընթացքում չի հանդիպել որևէ մի ՁՊՎ-ի զբոսաբակ, որտեղ մարզական գույք լիներ կամ զբոսաբակը սարքավորված լիներ մարմնամարզությամբ զբաղվելու համար: Ավելին զբոսաբակերը, ըստ ընդունված չափանիշների, չունեն ծածկեր՝ զբոսանքի ժամանակ արևից կամ անձրևներից պաշտպանվելու համար: Խցերից դուրս բերման մատյաններում չեն լրացվում կամ թերի են լրացվում զբոսանքի դուրս բերման մասին, ինչից ելնելով շատ դժվար է պարզել՝ արդյո՞ք զբոսանքի են դուրս բերվել ձերբակալված անձինք: Այցելությունների ընթացքում հանդիպել են ՁՊՎ-ներ, որոնց զբոսաբակերը լցված են եղել կենցաղային և շինարարական աղբով, որի պայմաններում դժվար է հավատալ, որ ձերբակալված անձինք զբոսանքի են դուրս եկել աղբով լցված այդ զբոսաբակերում:

## ՁՊՎ-ների անձնակազմը և նրանց խնդիրները

Դիտորդական խումբն իր ուսումնասիրությունների արդյունքում պարզել է, որ ՁՊՎ-ների անձնակազմերը լուրջ վերապատրաստման կարիք ունեն: Վերապատրաստումը պետք է անցնեն բոլոր այն աշխատակիցները, որոնք անմիջական շփում ունեն ձերբակալված անձանց հետ: Վերապատրաստման թեմաները պետք է ընդգրկեն ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերը և միջազգային պայմանգրերով սահմանված բոլոր այն չափանիշները, որոնք վերաբերում են ձերբակալված անձանց պահման և նրանց հետ վարվեցողության նվազագույն պայմաններին:

ՁՊՎ-ների ոստիկանները հիմնականում դժգոհում են, որ ՁՊՎ-ների վերանորոգման հետ մեկտեղ չեն բարելավվում իրենց աշխատանքային պայմանները, և շատ ցածր են աշխատավարձերը: ՁՊՎ-ներում չկան անձնակազմի համար նախատեսված բուֆետներ, ճաշարաններ, հանգստի սենյակներ և այլն: Դիտորդական խումբը գտնում է, որ ՁՊՎ-ների անձնակազմի՝ աշխատանքային վատ պայմաններում և ցածր աշխատավարձով աշխատող մարդկանցից դժվար կլինի պահանջել հարգել ձերբակալված անձանց իրավունքները:

## Ձերբակալված անձանց բուժսանիտարական օգնությունը

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ ձերբակալված անձի մոտ մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում ձերբակալվածներին պահելու վայրի բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որի արդյունքները սահմանված կարգով գրանցվում են անձնական գործում, և այդ մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնին:

Դիտորդական խումբը այցելություններ է կատարել հանրապետության գործող բոլոր ՁՊՎ-ները և ոչ մի տեղ չի հանդիպել օրենքում նշված բուժաշխատողին: ՁՊՎ-ների անձնակազմերի հետ ունեցած զրույցների արդյունքում պարզվել է, որ ձերբակալված անձինք ՁՊՎ-ի հերթապահ ոստիկանի կողմից արտաքին զննության են ենթարկվում և, եթե լինում են մարմնական վնասվածքներ, ապա հրավիրվում է տեղի հիվանդանոցի

շտապօգնությանը: Սակայն արտաքին զննությամբ հնարավոր չէ տեսնել և բացահայտել ներքին վնասվածքներն ու արյունահոսությունները:

ԶՊՎ-ներում կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին նաև, որ նրանցից շատերում չեն պահպանվում սանիտարահիգիենիկ ամենատարրական կանոնները: ԶՊՎ-ները գտնվում են շատ կեղտոտ վիճակում: ԶՊՎ-ներում բացակայում են հավաքարարները: Դրա փոխարեն մաքրության հարցերով պատասխանատվությունը դրված է հերթապահող անձնակազմի վրա, որը, մեր կարծիքով, սխալ է: ԶՊՎ-ների բուժկետերը ոչ մի բանով չեն տարբերվում խցերից: Այնտեղ սանիտարահիգիենիկ ոչ մի պայման ապահովված չէ և ցանկացած վերքային մակերես կարող է ինֆեկցվել և բարդությունների տեղիք տալ: Զուգարանները գտնվում են կեղտոտ վիճակում: ԶՊՎ-ների մեծ մասում կան լոգարաններ, սակայն ցանկալի կլիներ ստեղծել լոգարանային մատյան, որտեղ կգրանցվեն ձերբակալված և կալանավորված անձանց մասին, որոնք օգտվել են լոգարանից (ամիս, ամսաթիվ և ժամ): Մեր կարծիքով՝ դա շատ կարևոր է, որովհետև լոգարանի առկայությունը դեռ չի կարող խոսել այն մասին, որ բոլոր ձերբակալվածները և, որոշ դեպքերում ԶՊՎ-ներում մինչև 30 օր պահվող կալանավորները, օգտվում են դրանից:

Ուսումնասիրված բոլոր ԶՊՎ-ներում չկան բժիշկներ, և ձերբակալված անձինք զրկված են ցանկացած տեսակի, նույնիսկ ամենատարրական բժշկական օգնությունից: Որոշ ԶՊՎ-ներում բժշկի դեր են տանում ոչ բժշկական կրթություն ունեցող հերթապահ ոստիկանները, որոնք ջերմաչափությունից այն կողմ ծանոթ չեն բժշկության բնագավառին: Բժշկական սպասարկման հարցերը դրված են միայն մարզային կամ քաղաքային շտապ բուժօգնության ծառայության վրա: Սակայն բոլորիս քաջ հայտնի է մարդու կյանքի պահպանման յուրաքանչյուր վայրկյանի թանկությունը՝ էքստրեմալ և հիվանդագին վիճակների ժամանակ:

Ուսումնասիրված բոլոր ԶՊՎ-ների բուժկետերի զննությունը ցույց տվեց, որ այնտեղ գտնվող դեղորայքի մեծ մասի պահպանման ժամկետներն անցած են, որը ևս խոսում է բժշկի բացակայության և նրա անհրաժեշտության մասին: Նրանցից շատերի օգտագործումը լի է մի շարք վտանգներով՝ սկսած ալերգիկ վիճակներից, վերջացրած անաֆիլակտիկ շոկով:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկում ենք.

1. Բոլոր ԶՊՎ-ներում առանձնացնել բուժպրոֆիլակտիկ միջոցառումների համար նախատեսված սենյակ՝ բուժկետ;
2. Բոլոր ԶՊՎ-ների բուժկետերում նախատեսել բժշկի (կամ գոնե ֆելդշերի) և հավաքարարի հաստիք;
3. Հսկողություն սահմանել դեղորայքի և դրա օգտագործման, ցուցումների և հակացուցումների վերաբերյալ, ինչպես նաև՝ պիտանելիության ժամկետների խիստ պահպանման համար;
4. Ստեղծել և վարել լոգարանային մատյան;
5. Բուժկետում պահպանել կատարյալ մաքրություն ոչ միայն սովորական մաքրման, այլ նաև՝ քլորամինային և այլ հակասեպտիկ պրեպարատների մշակման միջոցով:

## Առաջարկություններ

<u>Առաջարկություններ՝ ԶՊՎ-ներում հայտնաբերված մարդու իրավունքների և ազատությունների խախտումները վերացնելու և նման խախտումները կանխարգելելու վերաբերյալ</u>

- Դիտորդական խմբի կողմից առավել հաճախ հայտնաբերվող խախտումներից է մարդուն ԶՊՎ-ում օրենքով թույլատրելի 72 ժամից ավել, առանց կալանքը՝ որպես խափանման միջոց կիրառելու մասին դատարանի որոշման, պահելը: Նշված երևույթը հանդիսանում է ոչ միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով

սահմանված նորմերի խախտում, այլև ոտնահարում է մարդու՝ Հայաստանի Հանրապետության կողմից 23.09.1993-ին վավերացված՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային Դաշնագրի (այսուհետ՝ Դաշնագիր) 9-րդ հոդվածով, ինչպես նաև 26.04.2002-ին վավերացված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 5-րդ հոդվածով երաշխավորված՝ ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը, որը, մասնավորապես, պահանջում է, որպեսզի ձերբակալվածը անհապաղ տարվի դատավորի մոտ և ունենա ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք, կամ մինչև դատաքննությունը ազատ արձակվելու իրավունք ունենա:

Դիտորդական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է, նախևառաջ, լուծել վերը նշված խախտումները թույլ տվող պաշտոնատար անձանց պատասխանատվության հարցը, հաշվի առնելով նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 348 հոդվածը պատասխանատվություն է նախատեսում անձին ապօրինի ձերբակալելու կամ կալանավորելու համար: Այնուհետև, անհրաժեշտ է լուրջ վերահսկողություն սահմանել ՁՊՎ-ներում «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների կատարման նկատմամբ, որոնց համաձայն ՁՊՎ-ի պետը պարտավոր է ձերբակալված անձին արգելանքից անհապաղ ազատել, եթե լրացել է ձերբակալման՝ օրենքով սահմանված առավելագույն ժամկետը:

- Դաշնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է մի շարք պոզիտիվ պարտավորություններ, որոնց թվում է անազատության մեջ պահվող անձանց համարժեք սննդով, հիմնական բժշկական օգնությամբ և բավարար սանիտարական պայմաններով ապահովելը, ինչպես նաև առողջությունը պահպանելու նվազագույն հնարավորություններով (օրինակ՝ յուրաքանչյուր օր նվազագույն տևողությամբ զբոսանքով) ապահովելը: Դաշնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետի ներքո, երբ անազատության մեջ պահվող անձը հիվանդանում է, անընդունելի է, որ նա զրկված լինի բուժօգնությունից:

Վերը նշված պայմանների չպահպանելը ՁՊՎ-ների վարչակազմերի ներկայացուցիչները, որպես կանոն, պատճառաբանել են համապատասխան ֆինանսավորման բացակայությամբ: Տեղում բժշկի կամ բուժծառայության բացակայությունը փորձել են արդարացնել նրանով, որ դրա կարիքը սովորաբար չի լինում, իսկ անհրաժեշտության դեպքում իրենք դիմում են շտապ բուժօգնությանը: Այնինչ, նման մոտեցումը, խմբի կարծիքով, որևէ կերպ չի կարող հավասարեցվել ձերբակալված անձանց հիմնական բժշկական օգնությամբ ապահովելու պարտականության կատարմանը, քանի որ այդ պարտականությունն ամենևին չի տարածվում միայն չափից ավելի ծանր (օրինակ, մահամերձ վիճակում գտնվող) ձերբակալվածներին բուժօգնությամբ ապահովելու դեպքերի վրա: Այսպես, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներից հետևում է, որ ձերբակալվածի մոտ մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում կատարվում է բուժզննություն՝ ձերբակալվածին պահելու վայրի բժշկի կողմից, որին կարող է նաև մասնակցել ձերբակալված անձի ընտրած բժիշկը: Այսինքն, օրենքը ավելի քան հստակ սահմանել է ՁՊՎ-ում աշխատող բժշկի անհրաժեշտությունը:

Այսպիսով, խումբն առաջարկում է անհապաղ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ՁՊՎ-ներում պահվող անձանց տրվող սննդի համարժեքությունը, հիմնական բժշկական օգնությունն ու բավարար սանիտարական պայմաններն ապահովելու ուղղությամբ: Ընդ որում, յուրաքանչյուր ՁՊՎ-ում առնվազն մեկ բժշկի առկայությունը խումբը համարում է անհրաժեշտ:

Առաջարկություն խմբի գործունեության կարգի վերաբերյալ

ՀՀ քրեկան դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի համաձայն՝ ձերբակալումը անձին արգելանքի վերցնելն է, նրան հետաքննության մարմին կամ վարույթն իրականացնող մարմին բերելը, համապատասխան արձանագրություն կազմելը և այդ մասին նրան հայտարարելն է՝ օրենքով որոշված վայրերում և պայմաններում արգելանքի տակ կարճաժամկետ պահելու համար: Նույն օրենսգրքի 6-րդ հոդվածի 36-րդ կետը պարզաբանում է, որ արգելանքի վերցնելը գործողություն է, որը սկսվում է անձին ազատությունից փաստացի հարկադրական զրկելու պահից՝ ձերբակալելիս, կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս, ազատազրկման ձևով դատավճիռն ի կատար ածելիս:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերը հիշատակված սահմանումներից հետևում է, որ եթե անձը փաստացի զրկված է ազատությունից և չկա նրա նկատմամբ կալանքը՝ որպես խափանման միջոց կիրառելու մասին դատարանի որոշում կամ ազատազրկման ձևով պատիժ սահմանող դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, ապա նա պետք է համարվի ձերբակլված՝ անկախ նրանից, թե նրա նկատմամբ ձերբակալման արձանագրություն կազմվե՞լ է և այդ մասին նրան հայտարարվե՞լ է, թե՞ ոչ, և, անկախ նրանից, օրենքով որոշված վայրերում է նա պահվում, թե՝ այլ վայրերում: Դավարական օրենսգրքի հիշատակված սահմանումները միանգամայն համահունչ են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ միջազգային պայմանգրերի պահանջների նկատմամբ վերահսկողություն իրականացնող միջազգային մարմինների կողմից տրված սահմանումների հետ: Այսպես, Ստրասբուրգի Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանը այս կամ այն պետության նկատմամբ կայացրած վճիռներում բազմիցս պարզաբանել է, որ որպեսզի անձը համարվի ձերբակալված, ամենևին կարևոր չէ, թե պետական իշխանության մարմինների կողմից նրան ձերբակալվածի կարգավիճակ պաշտոնապես տրվե՞լ է, թե՞ ոչ և, թե հատկապես որ վայրում է նա պահվում: Բավարար է, որ անձը հայտնվի (թեկուզև հոժարակամ ներկայանալու պայմաններում) իրավապահ մարմինների (ոստիկանություն, դատախազություն, ԱԱԾ, ՀՊԾ և այլն) տրամադրության տակ, և հնարավորություն չունենա հոժարակամ լքելու որևէ սահմանափակ տարածք (ոստիկանության բաժինը, դատախազության, ԱԱԾ, ՀՊԾ և այլ իրավապահ մարմինների շենքը, շինությունը)1:

Խումբը սույն հաշվետվության մեջ ներկայացրել է այն դեպքերը, երբ, խմբի գործունեությունը խոչնդոտելու նպատակով, ՁՊՎ-ներում պահվող անձանց տեղափոխել են ոստիկանության բաժիններ: Բացի այդ, ձերբակալվածներից, իրավապաշտպան կազմակերպություններից, փաստաբաններից և այլ շահագրգիռ անձանցից պարբերաբար ստացվում են հաղորդումներ այն մասին, որ մինչև ՁՊՎ տեղափոխելը անձանց փաստացի անազատության մեջ են պահում ոստիկանության բաժիններում, ինչը հաճախակի զուգորդվում է նրանց նկատմամբ բռնություն գործադրելով:

ՀՀ ոստիկանության պետի 2005 թվականի հունվարի 14-ի N 1-Ն հրամանով հաստատված՝ ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդական խմբի գործունեության կարգի 1-ին կետը սահմանել է, որ խումբը ձերբակալվածներին պահելու վայրերում պահվող անձանց իրավունքների և ազատությունների պահպանման խնդիրներով զբաղվող վերահսկող մարմին է: Սակայն խումբն արդեն արձանագրել է, որ ՁՊՎ-ներում պահման ենթակա անձինք իրականում շատ հաճախ պահվում են ոստիկանության բաժիններում, ինչը, սակայն, օրենքի և վավերացված միջազգային պայմանագրերի վերը հիշատակված դրույթներին համապատասխան, ամենևին չի փոխում նրանց՝ ձերբակալված անձանց

[1] Տես, օրինակ, Դե Վիլդեն, Օօմսը և Վերսիպն՝ ընդդեմ Բելգիայի գործով 18 հունիսի 1998 թ. կայացված վճիռը (*De Wilde, Ooms and Versyp v. Belgium*, judgment of 18 June 1971):

կարգավիճակը: Ուստի խումբը գտնում է, որ ձերբակալված անձանց իրավունքների և ազատությունների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը միայն ՁՊՎ-ներում, խմբի հիմնական խնդիրների իրականացմանն ուղղված գործունեությունը դարձնում է խիստ անարդյունավետ: Այդ իսկ պատճառով խումբն առաջարկում է ՀՀ ոստիկանության պետի 2005 թվականի հունվարի 14-ի N 1-Ն հրամանով հաստատված ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդական խմբի գործունեության կարգում կատարել լրացումներ և խմբին հնարավորություն տալ միևնույն նպատակներով, ցանկացած ժամանակ այցելություններ իրականացնել նաև ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներ (վարչություններ, բաժիններ, բաժանմունքներ):

## Ընդհանուր բնույթի առաջարկություններ

ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խումբը առաջարկում է.

-  ՁՊՎ-ների անձնակազմերը համալրել իգական սեռի ներկայացուցիչներով. նշված առաջարկությունը շատ կարևոր է ձերբակալված կանանց իրավուքների հարգման տեսանկյունից (անձնական խուզարկություն, ուղեկցում և այլն):
-  ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կալանավորված անձը չի կարող 3 օրվանից ավելի պահվել ձերբակալվածներին պահելու վայրերում, բացի այն դեպքերից, երբ ձերբակալվածներին պահելու վայրից քննչական մեկուսարան կամ, օրենքի պահանջներին համապատասխան, կալանավորվածներին պահելու այլ վայրեր նրա տեղափոխումը հնարավոր չէ տրանսպորտային հաղորդակցության բացակայության պատճառով: «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ կալանավորվածներին պահելու վայրի տեղակայման տարածքից կալանավորված անձին ամեն օր փոխադրելու անհնարինության դեպքում, քննչական գործողություններ կատարելու և դատական քննությունը կալանավորվածներին պահելու վայրից դուրս կատարելու կապակցությամբ, քննիչի, դատախազի կամ դատարանի որոշմամբ, կալանավորված անձը կարող է տեղափոխվել ձերբակալավածներին պահելու վայր՝ մինչև երեք օր տևողությամբ: Նույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերում կալանավորված անձը ձերբակալվածներին պահելու վայրում պահվում է կալանավորվածներին պահելու վայրի համար սահմանված կարգով և պայմաններում: Խումբը առաջարկում է ապահովել ՀՀ քրեական դատավարության օրենգրքի 137-րդ հոդվածի 2-րդ կետի և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի դրույթների անշեղ իրագործումը, քանի որ Հայաստանի Հանրապետության բոլոր ՁՊՎ-ներում վերոհիշյալ խախտումը կրում է համատարած բնույթ:

*Սույն հաշվետվության մեջ տեղ գտած բոլոր անուն ազգանունները ամբողջությամբ ներկայացվել են ՀՀ ոստիկանություն՝ լիարժեք ուսումնասիրության նպատակով: Սակայն հաշվետվության ներկայացվող տարբերակում բոլոր անուն ազգանունները կրճատված են:*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Դիտորդական խմբի կողմից ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներ կատարված այցելությունների հիման վրա կազմված հաշվետվության վերաբերյալ

### *ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ*

1. Քանի որ ՁՊՎ-ի 2-րդ հարկի 16 խցերից օգտագործվել է միայն 6-ը, մյուս 10 խցերի օգտագործման անհրաժեշտություն չի եղել, այդ իսկ պատճառով այրված էլ.լամպերը ստուգման պահին փոխված չեն եղել: Ներկայումս ՁՊՎ-ի բոլոր լամպերը փոխվել են:

2. Մատյանների ուսումնասիրության 5-րդ, 7-րդ և 11-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, ՀՀ ոստիկանության պետի 11.08.2003թ. թիվ 9-Ն հրամանով հաստատված «ՀՀ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ների ներքին կանոնակարգ»-ով սահմանվում են հետևյալ գրանցամատյանները.

ա/ ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման /հավելված 1/
բ/ Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու /հավելված 9/
գ/ Հանձնուքների հաշվառման /հավելված 11/
դ/ Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության /հավելված 12/
ե/ ՁՊՎ-ի հերթապահության հանձնման-ընդունման /հավելված 14/:

Մարմնական վնասվածքների վերաբերյալ գրառումները կատարվում են «Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության» գրանցամատյանում:

«Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» գրանցամատյանում նշումներ են կատարվում միայն ռեժիմային գոտուց դուրս բերելու դեպքում:

Տեսակցությունից հրաժարվելու մասին ձերբակալվածի գրավոր դիմումի համաձայն, տեսակցությունը կարող է փոխարինվել մեկ հեռախոսազրույցով՝ մինչև 5 րոպե տևողությամբ: Դիմումը կցվում է ձերբակալվածի անձնական գործին, իսկ հեռախոսազանգերի հաշվառման մատյան գործող օրենսդրությամբ չի նախատեսվում:

*ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչություն*

Սիսիանի բաժնի ՁՊՎ

1. Վերանորոգումից հետո ՁՊՎ-ի զբոսաբակը հանձնվել է շահագործման, քննչական և տեսակցության սենյակները ապահովված են բավարար արհեստական լուսավորությամբ, իսկ բնական լուսավորությունը պարտադիր է մենախցերում:

2. Խցերում գտնվող ջրի ծորակները գործում են, խցերի պատերին փակցված են ձերբակալված և կալանավորված անձանց իրավունքները և պարտականությունները, ՁՊՎ-ի միջանցքում առկա է դեղամիջոցների արկղ՝ առաջին բուժ. օգնության համար նախատեսված դեղամիջոցներով, որոնք ժամկետային են:

3. ՁՊՎ բերված անձանց բուժ.զննությունն իրականացվում է հերթապահ մասում կամ ռեժիմային գոտուց դուրս գտնվող ցանկացած սենյակում:

4. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

5. Հ. Ի.-ն 20.01.2006թ. մինչև 24.01.2006թ. ՁՊՎ-ում պահվել է ՌԴ-ի կողմից հետախուզական գործի հիման վրա:

6. Ա. Օ.-ն 28.02.2006թ. մինչև 04.03.2006թ. ՁՊՎ-ում պահվել է հետախուզական գործի հիման վրա, հետախուզվել է ՀՀ քր.օր.-ի 109 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

ՀՀ քր. դատ. օր.-ի 137 հոդվածի 2-րդ կետի համաձայն կալանավորված անձը չի կարող 3 օրից ավել պահվել ՁՊՎ-ներում, բացի այն դեպքերից, երբ ձերբակալվածներին պահելու վայրից քննչական մեկուսարան կամ օրենքի պահանջներին համապատասխան կալանավորվածներին պահելու վայրեր նրա տեղափոխումը հնարավոր չէ տրանսպորտային հաղորդակցության բացակայության պատճառով: Ուստի վերը նշված երկու անձինք ՁՊՎ-ում պահվել են որպես հայտնաբերված հետախուզվողներ, որոնց նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

7. Ձերբակալվածին հասանելիք սննդի տեսականին և չափաբաժինը սահմանված են ՀՀ կառավարության 15.05.2003թ. թիվ 587-Ն որոշմամբ: Նշված դեպքում ձերբակալվածը հացի սահմանված չափաբաժնից հրաժարվել է կամովի, քանի որ հանձնունքով ստացել է լավաշ տեսակի հաց և հացի պահանջ չի ունեցել:

Գորիսի բաժնի ՁՊՎ

1. ՁՊՎ-ի քննչական սենյակը կահավորված է համապատասխան գույքով: Հերթապահ մասում առկա է դեղամիջոցների արկղ առաջին բուժօգնության համար նախատեսված դեղամիջոցներով:

2. ՁՊՎ բերված անձանց բուժ.զննությունն իրականացվում է հերթապահ մասում կամ ռեժիմային գոտուց դուրս գտնվող ցանկացած սենյակում:

Սննդի հատկացման սենյակում մշտական ջրի բացակայության պատճառով տեղադրվել է ջրի բակ և ապահովվել է մաքուր ջրով:

3. ՁՊՎ-ում 2006թ. հունվարից մինչև ապրիլ ամիսը պահվել են թվով 15 ձերբակալված և կալանավորված անձինք, այլ ոչ թե 30, որը արձանագրված է թիվ 1 գրանցամատյանում: Ընդ որում նշված անձինք ՁՊՎ-ում պահվել են օրենքով սահմանված ժամկետներում:

4. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

Կապանի բաժնի ՁՊՎ

1. ՁՊՎ-ում անկողնային սպիտակեղենը տրամադրվում է անձանց ՁՊՎ ընդունելու ժամանակ: Տեսակցության սենյակը ապահովված է բավարար արհեստական լուսավորությամբ:
2. ՁՊՎ բերված անձանց բուժ.զննությունն իրականացվում է հերթապահ մասում կամ ռեժիմային գոտուց դուրս գտնվող ցանկացած սենյակում:
3. Կալանավորներ Վ. Դ.-ն 31.07.2006թ. մինչև 04.08.2006թ. (կալանավորման որոշում 02.08.2006թ.) և Ա. Պ.-ն 30.07.2006թ. մինչև 04.08.2006թ. (կալանավորման որոշում 01.08.2006թ.) ՁՊՎ-ում պահվել են ՀՀ քր. դատ. օր.-ի 137 հոդվածի համաձայն:
4. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ,10-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

Մեղրիի բաժնի ՁՊՎ

1. Խցերը ապահովված են բնական լուսավորությամբ, կառուցվել է տեսակցության սենյակը և զուգարանի ծածկը, գործում է լոգարանը, քննչական սենյակը ապահովվել է համապատասխան գույքով, միջանցքում տեղադրվել է դեղամիջոցների արկղ առաջին բուժ.օգնության համար նախատեսված դեղամիջոցներով:
2. ՁՊՎ բերված անձանց բուժ.զննությունն իրականացվում է հերթապահ մասում կամ ռեժիմային գոտուց դուրս գտնվող ցանկացած սենյակում:
3. Տեղեկանքում նշված տեսակցության սենյակի, լոգարանի բացակայությունը չի համապատասխանում իրականությանը:
4. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

***ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչություն***

Եղեգնաձորի բաժնի ՁՊՎ

1. ՁՊՎ-ում բուժ.զննության համար նախատեսված է սենյակ, որտեղ առկա է դեղորայքի արկղ առաջին բուժ.օգնության համար նախատեսված դեղամիջոցներով:
2. Ս.Պ.-ն ձերբակալվել է 21.05.2006թ.(կալանավորման որոշում 24.05.2006թ.) ՁՊՎ-ում պահվել է մինչև 08.06.2006թ., պահման հիմք է հանդիսացել Վայոց Ձորի մարզի դատախազի ժ/պ Հ. Ս.-ի 24.05.2006թ. թիվ 18/08 ելք 06 և 05.06.2006թ. թիվ 18/08 ելք 06 գրությունները:
3. Լ.Ա.-ն ձերբակալվել է 26.05.2006թ. (կալանավորման որոշում 29.05.2006թ.) ՁՊՎ-ում պահվել է մինչև 08.06.2006թ., պահման հիմք է հանդիսացել Վայոց Ձորի մարզի

դատախազի ժ/պ Հ. Ս.-ն 31.05.2006թ. թիվ 18/08 ելք 06 և 05.06.2006թ. թիվ 18/08 ելք 06 գրությունները:

4. Կալանավորներ՝ Ս. Դ.-ն ձերբակալվել է 23.06.2006թ. (կալանավորման որոշում 26.06.2006թ.) ՔԿՀ է տեղափոխվել 29.06.2006թ., Ա. Ա.-ն ձերբակալվել է 25.07.2006թ. (կալանավորման որոշում 28.07.2006) ՔԿՀ է տեղափոխվել 02.08.2006թ.: ՁՊՎ-ում պահվել են ՀՀ քր.դատ.օր.-ի 137 հոդվածի համաձայն:

5. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9 –րդ,11 և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

<u>Վայքի բաժնի ՁՊՎ</u>

1. ՁՊՎ-ի խցերը և տեսակցության սենյակը ապահովված են բավարար բնական և արհեստական լուսավորությամբ: Քննչական սենյակը առկա է և ապահոված է համապատասխան գույքով: ՁՊՎ-ն ապահոված է ձայնային ազդանշանային համակարգով:

2. ՁՊՎ բերված անձանց բուժ.զննությունն իրականացվում է հերթապահ մասում կամ ռեժիմային գոտուց դուրս գտնվող ցանկացած սենյակում:

3. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

### *ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչություն*

<u>Հրազդանի բաժնի ՁՊՎ</u>

1. ՁՊՎ-ի քննչական սենյակի աթոռները ամրացված են հատակին:

2. ՁՊՎ բերված անձանց բուժ.զննությունն իրականացվում է հերթապահ մասում կամ ռեժիմային գոտուց դուրս գտնվող ցանկացած սենյակում:

3. Կալանավորներ Մ. Գ.-ն և Գ. Կ.-ն Աբովյանի ՔԿՀ-ից դատական նիստերին մասնակցելու համար Հրազդանի ՁՊՎ են տեղափոխվել 14.07.2006թ.-ին և այնտեղ պահվել են մինչև 26.07.2006թ.՝ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ն. Պ.-ն 14.07.2006թ. թիվ 1-1-104 գրության համաձայն:

4. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

<u>Չարենցավանի բաժնի ՁՊՎ</u>

1. ՁՊՎ-ի խցերը ապահովված են ինչպես բնական, այնպես էլ արհեստական բավարար լուսավորությամբ: ՁՊՎ-ում անկողնային սպիտակեղենը տրամադրվում է անձանց ՁՊՎ ընդունելու ժամանակ: Շենքային ոչ բավարար պայմաններից ելնելով քննիչի սենյակը ծառայում է նաև տեսակցության սենյակ:

2. ՁՊՎ բերված անձանց բուժ.զննությունն իրականացվում է հերթապահ մասում կամ ռեժիմային գոտոց դուրս գտնվող ցանկացած սենյակում:

3. ՁՊՎ-ում զբոսանքը կազմակերպվում է ցերեկվա ժամերին՝ ըստ ոստիկանության մարմնի պետի կողմից հաստատված օրվա կարգացուցակի:

4. Ձերբակալվածին հասանելիք սննդի տեսականին և չափաբաժինը սահմանված է ՀՀ կառավարության 15.05.2003թ. թիվ 587-Ն որոշմամբ:

5. Կալանավոր Ա. Գ.-ն 23.03.2006թ.-ից և Ա. Հ.-ն 24.03.2006թ.-ից ՁՊՎ-ում պահվել են մինչև 05.04.2006թ., պահման հիմք է հանդիսացել Կոտայքի մարզի քննչական բաժնի ավագ քննիչ Ա. Մ.-ի 28.03.2006թ. թիվ 83-08պ-62 գրությունը:

6. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

## Նաիրիի բաժնի ՁՊՎ

1. ՁՊՎ բերված անձանց բուժ.զննությունն իրականացվում է հերթապահ մասում կամ ռեժիմային գոտոց դուրս գտնվող ցանկացած սենյակում:

2. Վերանորոգումից հետո ՁՊՎ-ի քննչական և տեսակցության սենյակները շահագործվում են: Սննդի հատկացման սենյակի խոնավությունը վերացել է. հեռախոսակապը գործում է:

3. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

## Աբովյանի բաժնի ՁՊՎ

1. ՁՊՎ բերված անձանց բուժ.զննությունն իրականացվում է հերթապահ մասում կամ ռեժիմային գոտոց դուրս գտնվող ցանկացած սենյակում:

2. ՁՊՎ-ի խցերը ապահովված են ինչպես բնական, այնպես էլ արհեստական բավարար լուսավորությամբ:

3. ՁՊՎ-ի մատյանները վարվում են սահմանված կարգով:

## *ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչություն*

## Գավառի բաժնի ՁՊՎ

1. ՁՊՎ-ի քննչական և տեսակցության սենյակները ապահովված են բավարար արհեստական լուսավորությամբ:

2. Վերանորոգումից հետո ՁՊՎ-ի լոգարանը գործում է, սննդի հատկացման սենյակի խոնավությունը վերացվել է, հեռախոսակապը գործում է, դեղորայքը գտնվում է հերթապահ մասում տեղադրված դեղորայքի արկղում:

3. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

<u>Մարտունու բաժնի ՁՊՎ</u>

1. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

<u>Վարդենիսի բաժնի ՁՊՎ</u>

1. ՁՊՎ-ի տեսակցության սենյակը ապահովված է համապատասխան գույքով, հեռախոսակապը գործում է:
2. ՁՊՎ-ում պահվող անձանց հասանելիք սննդի տեսականին և չափաբաժինը սահմանված է ՀՀ կառավարության 15.05.2003թ. թիվ 587-Ն որոշմամբ:
3. Խցերում փակցված են ձերբակալված անձանց իրավունքները, պարտականությունները և օրվա կարգացուցակը:
4. Կալանավոր Կ. Ֆ.-ն Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Վ,Մ.-ն 10.05.2006թ. թիվ 1-15 գրության հիման վրա ՔԿՀ-ից 16.05.2006թ.-ին տեղափոխվել է Վարդենիսի ՁՊՎ՝ դատական նիստին մասնակցելու համար: Նույն դատարանի 17.05.2006թ. թիվ 1-15 գրության հիման վրա մինչև 23.05.2006թ. պահվել է Վարդենիսի ՁՊՎ-ում:
5. Մ. Մ.-ն հետախուզման որոշման հիմքով ձերբակալվել է 21.08.2006թ.-ին և նույն օրը ազատ է արձակվել Գեղարքունիքի մարզի դատախազության քննիչ Գ. Հ.-ի որոշման հիման վրա:
6. Ռ. Բ.-ն ձերբակալվել է 23.08.2006թ.-ին և 29.08.2006թ.-ին տեղափոխվել է ՔԿՀ, պահման հիմք է հանդիսացել ՀՀ քր. օր.-ի 137 հոդվածի հատկանիշներով ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը:
7.

<u>Ճամբարակի բաժնի ՁՊՎ</u>

1. Շենքային անբավարար պայմանների պատճառով քննչական սենյակը օգտագործվում է նաև որպես տեսակցության սենյակ:
2. ՁՊՎ բերված անձանց բուժ.զննությունն իրականացվում է հերթապահ մասում կամ ռեժիմային գոտոց դուրս գտնվող ցանկացած սենյակում:
3. 11.05.2006թ. Ճամբարակի բաժին բերման է ենթարկվել Վ. Ա.-ն, ծնված 1966թ.-ին ՌԴ Վոլգոդոնսկի մարզի Չերեպովեց քաղաքում: Վերջինս բացատրություն է տվել այն մասին, որ 07.05.2006թ ՌԴ-ից եկել է Ադրբեջանի Հանրապետության Գեդաբեկի շրջանի Դորդլար գյուղ: 10.05.2006թ. իր հորեղբոր տանից դուրս է եկել զբոսնելու և մոլորվելով հայտնվել ՀՀ տարածքում: Նշված դեպքի վերաբերյալ տեղեկացվել են ՀՀ ԱԱ ծառայության մարմինները, որոնց հանձնարարությամբ էլ վերջինս պահվել է Ճամբարակի ՁՊՎ-ում:
4. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

<u>Սևանի բաժնի ՁՊՎ</u>

1. Ա.Գ.-ն և Վ. Կ.-ն ձերբակալվել են 05.08.2006թ. (կալանավորման որոշում 07.08.2006թ) Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալ Ա. Չ.-ի 09.08.2006թ. թիվ 28-09-10 գրության համաձայն՝ քննչական գործողություններ կատարելու համար նշված կալանավորները ՁՊՎ-ում պահվել են մինչև 16.08.2006թ.:

2. 07.11.2006թ. ՀՀ ոստիկանության պետի հրամանով դադարեցվել է Սևանի բաժնի ՁՊՎ-ի գործունեությունը՝ շենքային անբավարար պայմանների պատճառով:

***ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչություն***

<u>Դիլիջանի բաժնի ՁՊՎ</u>

1. ՁՊՎ-ի խցերը ապահովված են բնական և արհեստական բավարար լուսավորությամբ: Շենքային անբավարար պայմաններից ելնելով քննչական սենյակը ծառայում է նաև որպես տեսակցության սենյակ:

2. ՁՊՎ բերված անձանց բուժ.զննությունն իրականացվում է հերթապահ մասում կամ ռեժիմային գոտող դուրս գտնվող ցանկացած սենյակում:

3. Կալանավոր Ա. Մ.-ն ՁՊՎ-ում պահվել է 19.05.2006թ-ից մինչև 26.05.2006թ., պահման հիմք է հանդիսացել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ա Խ.-ն 19.05.2006թ. թիվ 1-106-06 և 10.06.2006թ. թիվ 1-106-06 գրությունները:

4. Կալանավոր Ս. Ս.-ն պահվել է 19.05.2006թ.-ից մինչև 26.05.2006թ., պահման հիմք է հանդիսացել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ա. Խ.-ի 18.05.2006թ. թիվ 1-84-06 գրությունը:

5. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

<u>Տավուշի բաժնի ՁՊՎ</u>

1. Մ. Ա.-ն ձերբակալվել է 14.04.2006թ.-ին (կալանավորման որոշում 17.04.2006թ.) ՁՊՎ-ում պահվել է մինչև 26.04.2006թ. պահման հիմք է հանդիսացել Տավուշի մարզի դատախազի տեղակալ Ա. Ք.-ի 18.04.2006թ. թիվ 51100506 գրությունը:

2. 07.11.2006թ. ՀՀ ոստիկանության պետի հրամանով դադարեցվել է Տավուշի բաժնի ՁՊՎ-ի գործունեությունը՝ շենքային անբավարար պայմաններից ելնելով:

<u>Իջևանի բաժնի ՁՊՎ</u>

1. Շենքային անբավարար պայմանների պատճառով քննիչի սենյակը ծառայում է նաև տեսակցության սենյակ:

2. ՁՊՎ բերված անձանց բուժ.զննությունն իրականացվում է հերթապահ մասում կամ ռեժիմային գոտուց դուրս գտնվող ցանկացած սենյակում: Բաժնի հերթապահ մասում առկա է դեղորայքի արկղ առաջին բուժ.օգնության համար նախատեսված դեղամիջոցներով:

3. Դիտորդական խումբն առանց ոստիկանության ծառայողների ներկայության, առանձնազրույց են ունեցել կալանավորներ՝ Հ. Բ.-ի, Վ. Ա.-ի և Ա.Հ.-ի հետ: Վերը նշված կալանավորները գտնվելով ՁՊՎ-ում ընդհանրապես հանձնումներ չեն ստացել:

4. Կալանավորներ Հ. Բ.-ի, Վ. Ա.-ն ՁՊՎ-ում պահվել են 11.08.2006թ մինչև 16.08.2006թ Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի նախագահ Ս. Մ.-ի 11.08.2006թ թիվ 1-160 գրության համաձայն:

5. Ա. Հ.-ն ձերբակալվել է 10.08.2006թ-ին, այլ ոչ թե տեղեկանքում նշված 05.08.2006թ.-ին (կալանավորվել է 11.08.2006թ.), այլ ոչ թե 08.08.2006թ. և 16.08.2006թ.-ին քննչական գործողությունների ավարտից հետո տեղափոխվել է ՔԿՀ:

6. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

Նոյեմբերյանի բաժնի ՁՊՎ

1. ՁՊՎ-ի խցերը և քննչական սենյակը ապահովված են բնական և արհեստական բավարար լուսավորությամբ: Վերանորոգումից հետո ՁՊՎ-ի տեսակցության սենյակը շահագործվում է: Լոգարանը և զուգարանը ապահովված են համապատասխան պարագաներով, փոխվել է լոգարանի և զուգարանի դուռը: Սննդի հատկացման սենյակը ապահովված է համապատասխան պարագաներով:

2. Ս. Ս.-ն ձերբակալվել է 29.05.2006թ.-ին, կալանավորվել է 31.05.2006թ.-ին, կալանքի որոշման համաձայն պահվել է մինչև 07.06.2006թ., տեղափոխվել է ՔԿՀ:

3. Կալանավոր Գ. Ռ.-ն Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ա. Խ.-ի 16.01.2006թ. թիվ 1-15 գրության համաձայն ՔԿՀ-ից դատական նիստերին մասնակցելու համար տեղափոխվել է Նոյեմբերյանի ՁՊՎ, դատաքննության հետաձգման պատճառով դատարանի 24.01.2006թ. թիվ 1-15 գրության համաձայն Գ. Ը.-ն տեղափոխվել է ՔԿՀ:

4. Կալանավոր Մ. Ա.-ն Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ա. Խաչիկյանի 09.06.2006թ. թիվ 1-115 գրության համաձայն ՔԿՀ-ից բերվել է Նոյեմբերյանի ՁՊՎ և պահվել մինչև 21.06.2006թ., դատաքննության ավարտից հետո տեղափոխվել է ՔԿՀ:

5. Ա. Չ.-ն կալանավորվել է 27.07.2006թ. և մինչև 31.07.2006թ. գտնվել է Նոյեմբերյանի հիվանդանոցում՝ ստացիոնար բուժման մեջ, որի վերաբերյալ ՁՊՎ-ի «Խցերից դուրս բերման» գրանցամատյանում կատարվել է համապատասխան գրանցում:

6. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

## *ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչություն*

Վանաձոր բաժնի ՁՊՎ

1. Վերանորոգումից հետո ՁՊՎ-ի խցերը ապահովված են բնական և արհեստական բավարար լուսավորությամբ: Կահավորվել և շահագործման է հանձնվել տեսակցության սենյակը: ՁՊՎ-ում պահվող բոլոր դեղերը ժամկետային են: Սանհանգույցը վերանորոգվել և գործում է:

2. Զբոսաբակը համապատասխանում է ընդունված չափանիշներին: ՀՀ ոստիկանության պետի 11.08.2003թ. թիվ 8-Ն հրամանի համաձայն զբոսաբակի վերևի մասում տեղադրվում են վանդակաճաղեր և ծածկվում են մետաղալարե ցանցով, իսկ նստատեղ չի նախատեսվում:

3. ՁՊՎ-ում պահվող անձանց հասանելիք սննդի տեսականին և չափաբաժինը սահմանված է ՀՀ կառավարության 15.05.2003թ. թիվ 587-Ն որոշմամբ:
4. Ա.Ս.-ն ՁՊՎ-ում պահվել է 26.09.2006թ. մինչև 29.09.2006թ., որի ընթացքում վերջինիս կողմից բանավոր և գրավոր բողոքներ չեն եղել:
5. ՁՊՎ բերված անձանց բուժ.զննությունն իրականացվում է հերթապահ մասում կամ ռեժիմային գոտոց դուրս գտնվող ցանկացած սենյակում:
6. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

## Սպիտակի բաժնի ՁՊՎ

1. ՁՊՎ-ի խցերը և քննչական սենյակը ապահովված են բնական և արհեստական բավարար լուսավորությամբ, քննչական սենյակի աթոռները ամրացված են հատակին:
2. Զբոսաբակը համապատասխանում է սահմանված չափանիշներին: ՀՀ ոստիկանության պետի 11.08.2003թ. թիվ 8-Ն հրամանի համաձայն զբոսաբակի վերևի մասում տեղադրվում են վանդակաճաղեր և ծածկվում են մետաղալարե ցանցով, իսկ նստատեղ չի նախատեսվում:
3. ՁՊՎ բերված անձանց բուժ.զննությունն իրականացվում է հերթապահ մասում կամ ռեժիմային գոտուց դուրս գտնվող ցանկացած սենյակում:
4. ՁՊՎ-ում պահվող անձանց հասանելիք սննդի տեսականին և չափաբաժինը սահմանված է ՀՀ կառավարության 15.05.2003թ. թիվ 587-Ն որոշմամբ:
5. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

## Տաշիրի բաժնի ՁՊՎ

1. Հերթապահ մասում փակցված է դիտորդական խմբի անդամների ցուցակը: ՁՊՎ-ի խցերը և քննչական սենյակը ապահովված են բնական և արհեստական բավարար լուսավորությամբ, քնչական սենյակի աթոռները ամրացված են հատակին: Տեսակցության սենյակը համապատասխանում է ընդունված չափանիշներին և կահավորված է համապատասխան գույքով: ՀՀ ոստիկանության պետի 11.08.2003թ. թիվ 8-Ն հրամանի համաձայն ՁՊՎ-ում սառնարան չի նախատեսվում: Սանհանգույցը գտնվում է բարվոք վիճակում:
2. ՁՊՎ բերված անձանց բուժ.զննությունն իրականացվում է հերթապահ մասում կամ ռեժիմային գոտուց դուրս գտնվող ցանկացած սենյակում:
3. Զբոսաբակը համապատասխանում է ընդունված չափանիշներին: ՀՀ ոստիկանության պետի 11.08.2003թ. թիվ 8-Ն հրամանի համաձայն զբոսաբակի վերևի մասում տեղադրվում են վանդակաճաղեր և ծածկվում են մետաղալարե ցանցով, իսկ նստատեղ չի նախատեսվում:
4. ՁՊՎ-ում պահվող անձանց հասանելիք սննդի տեսականին և չափաբաժինը սահմանված է ՀՀ կառավարության 15.05.2003թ. թիվ 587-Ն որոշմամբ:

5. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

Թումանյանի բաժնի ՁՊՎ

1. Հերթապահ մասում փակցված է դիտորդական խմբի անդամների ցուցակը: ՁՊՎ-ի խցերը և քննչական սենյակը ապահովված են բնական և արհեստական բավարար լուսավորությամբ, քննչական սենյակի աթոռները ամրացված են հատակին: Տեսակցության սենյակը համապատասխանում է ընդունված չափանիշներին և կահավորված է համապատասխան գույքով: ՀՀ ոստիկանության պետի 11.08.2003թ. թիվ 8-Ն հրամանի համաձայն ՁՊՎ-ում սառնարան չի նախատեսվում: Սանհանգույցը գտնվում է բարվոք վիճակում:

2. ՁՊՎ բերված անձանց բուժ.զննությունն իրականացվում է հերթապահ մասում կամ ռեժիմային գոտուց դուրս գտնվող ցանկացած սենյակում:

3. Զբոսաբակը համապատասխանում է ընդունված չափանիշներին: ՀՀ ոստիկանության պետի 11.08.2003թ. թիվ 8-Ն հրամանի համաձայն զբոսաբակի վերևի մասում տեղադրվում են վանդակաճաղեր և ծածկվում են մետաղալարե ցանցով, իսկ նստատեղ չի նախատեսվում:

4. ՁՊՎ-ում պահվող անձանց հասանելիք սննդի տեսականին և չափաբաժինը սահմանված է ՀՀ կառավարության 15.05.2003թ. թիվ 587-Ն որոշմամբ:

5. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

Ստեփանավանի բաժնի ՁՊՎ

ՁՊՎ-ի գործունեությունը 02.07.2004թ.-ից դադարեցված է ստորգետնյա ջրերի բարձր մակարդակի արդյունքում ՁՊՎ-ի մեծ խոնավության պատճառով:

### *ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչություն*

Աշտարակի բաժնի ՁՊՎ

1. ՁՊՎ-ն գտնվում է անբերի վիճակում:

2. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

Ապարանի բաժնի ՁՊՎ

1. ՁՊՎ-ն գտնվում է անբերի վիճակում:

2. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

Արագածի բաժնի ՁՊՎ

1. ՁՊՎ-ն գտնվում է անթերի վիճակում:
2. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

Թալինի բաժնի ՁՊՎ

1. ՁՊՎ-ն գտնվում է անթերի վիճակում:
2. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

***ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչություն***

Ոստիկանության Ամասիայի և Ղուկասյանի բաժինների ՁՊՎ-ները չեն շահագործվում:

Արթիկի բաժնի ՁՊՎ

1. Զբոսաբակը համապատասխանում է ՀՀ ոստիկանության պետի 11.08.2003թ. թիվ 8-Ն հրամանի պահանջներին:
2. ՁՊՎ բերված անձանց բուժ.զննությունն իրականացվում է հերթապահ մասում կամ ռեժիմային գոտուց դուրս գտնվող ցանկացած սենյակում:
3. Տեսակցության սենյակը ապահովված է համապատասխան գույքով և համապատասխանում է սահմանված չափանիշներին:
4. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

Ախուրյանի բաժնի ՁՊՎ

1. ՁՊՎ բերված անձանց բուժ.զննությունն իրականացվում է հերթապահ մասում կամ ռեժիմային գոտուց դուրս գտնվող ցանկացած սենյակում:
2. Զբոսաբակը համապատասխանում է ՀՀ ոստիկանության պետի 11.08.2003թ. թիվ 8-Ն հրամանի պահանջներին:
3. Ա. Կ.-ն Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Հ. Մ.-ի որոշման համաձայն ՔԿՀ-ից 15.08.2006թ. տեղափոխվել է Ախուրյանի բաժնի ՁՊՎ՝ դատական քննության մասնակցելու համար: ՁՊՎ-ում պահվել է մինչև 11.09.2006թ. և վերջինս դատարանի վճռով ազատ է արձակվել:
4. Ա. Հ.-ն Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Հ.Մ.-ի որոշման համաձայն ՔԿՀ-ից 12.09.2006թ. տեղափոխվել է Ախուրյանի բաժնի ՁՊՎ՝ նշանակված

դատական քննությանը մասնակցելու համար: ՁՊՎ-ում պահվել է մինչև 25.09.2006թ. և դատաքննության ավարտից հետո տեղափոխվել է ՔԿՀ:

5. Ախուրյանի ՁՊՎ-ում կալանավորներին 3 օրից ավել պահելու փաստերի վերաբերյալ կան համապատասխան գրություններ՝ վարույթն իրականացնող մարմինների կողմից:

6. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

<u>Մարալիկի բաժնի ՁՊՎ</u>

1. Շինարարական աշխատանքները ավարտված են և ՁՊՎ-ն հանձնված է շահագործման:

2. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

*ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչություն*

<u>Արտաշատի բաժնի ՁՊՎ</u>

1. ՁՊՎ-ի շին.վերանորոգման աշխատանքներն ավարտելուց հետո սննդի հատկացման սենյակը շահագործվում է:

2. ՁՊՎ բերված անձանց բուժ.զննությունն իրականացվում է հերթապահ մասում կամ ռեժիմային գոտուց դուրս գտնվող ցանկացած սենյակում:

3. Խցերում փակցված են ձերբակալված անձանց իրավունքներն ու պարտականությունները:

4. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

<u>Մասիսի բաժնի ՁՊՎ</u>

1. ՁՊՎ-ի խցերը ապահովված են բնական բավարար լուսավորությամբ: Տեսակցության սենյակը ապահոված է արհեստական լուսավորությամբ և գործում է ազդանշանային համակարգը:

2. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

Վեդու բաժնի ՁՊՎ

1. ՁՊՎ-ի խցերը ապահովված են բավարար լուսավորությամբ: Վերանորոգումից հետո առանձնացված է հերթապահ ոստիկանի սենյակը բուժ.զննության սենյակից: Տեսակցության սենյակը ապահովված է արհեստական լուսավորությամբ և գործում է ազդանշանային համակարգը:

2. ՁՊՎ-ում ձերբակալված և կալանավորված անձանց պահելու ժամկետների անհիմն խախտումներ չեն եղել:

3. Կալանավոր Մ. Ա.-ն Արարատի մարզի դատախազ Ս. Պ.-ի 29.06.2006թ. գրության համաձայն ՁՊՎ-ում պահվել է 27.06.2006թ.-ից մինչև 06.07.2006թ.-ը՝ քննչական գործողություններ կատարելու համար:

4. Մ.Մ.-ն ձերբակալվել է 27.08.2006թ.-ին (կալանավորման որոշում 30.08.2006թ.), Արարատի մարզի դատախազ Ս. Պ.-ի 30.08.2006թ. թիվ 18/89Մ-06 գրության համաձայն ՁՊՎ-ում պահվել է մինչև 05.09.2006թ.-ը՝ քննչական գործողություններ կատարելու համար:

5. Կալանավորներ Կ. Դ.-ն և Լ. Մ.-ն ՁՊՎ-ում պահվել են 14.12.2006թ. մինչև 28.12.2006թ.-ը Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Գ. Բ.-ի 21.12.2006թ. թիվ 3-526 գրության համաձայն՝ մինչև դատաքննության ավարտը:

6. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

## *ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչություն*

Արմավիրի բաժնի ՁՊՎ

1. ՁՊՎ-ի խցերը ապահովված են բավարար լուսավորությամբ:

2. ՁՊՎ բերված անձանց բուժ.զննությունն իրականացվում է հերթապահ մասում կամ ռեժիմային գոտուց դուրս գտնվող ցանկացած սենյակում:

3. ՁՊՎ-ում առկա է սննդի հատկացման սենյակը և դեղորայքի արկղը առաջին բուժ.օգնության համար նախատեսված դեղամիջոցներով:

4. ՁՊՎ-ում սպիտակեղենը տրվում է անձանց ընդունելու ժամանակ: Սանհանգույցը և բոլոր խցերը գտնվում են հիգիենիկ վիճակում:

5. Մատյանների ուսումնասիրության 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի վերաբերյալ պարզաբանում ենք, որ թիվ 8-Ն հրամանով նման մատյաններ չեն նախատեսվում:

***Սույն մեկնաբանությունները պաշտոնապես հանձնվել են դիտորդական խմբին 07.03.2007թ. ՀՀ ոստիկանությունում կազմակերպված հանդիպման ժամանակ:***